



ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ ЕВРАЗИЯ
EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



Երևան, 2023 | N1

ISSN 1829-4952



ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК

МЕЖДУНАРОДНОГО УНИВЕРСИТЕТА ЕВРАЗИЯ

BULLETIN

EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

1

Երևան - 2023

Հրապարակության է երաշխավորվել Եվրասիա միջազգային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Գագիկ Վարդանյան (գլխավոր խմբագիր), տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան

Ալբերտ Մակարյան, ք.գ. դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Անի Ստեփանյան, ի. գ. թ., դոցենտ, Արդարադատության համառոտական պետական համալսարան
(Ռուսաստանի Արդարադատության նախարարության ԱՀՊՀ)
Աննա Օհանյան, ք.գ.դ., ԱՄՆ Ստոնհիլ համալսարանի պրոֆեսոր
Աշոտ Ալեքսանյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Աշոտ Խաչատրյան, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան
Աշոտ Մարկոսյան, տ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Արամ Այվազյան, ի.գ.թ., Եվրասիա միջազգային համալսարան, ՀՀ քննչական կոմիտե
Գայանե Թովմասյան, տ.գ.թ., դոցենտ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոն
Գրաժինա Չուպղենե, մանկ.գ.դ., դոցենտ, Լիտվայի Միկոլաս Ռոմերիս համալսարան
Դմիտրի Զախտո, մանկ.գ.դ., դոցենտ Սալոնիկի (Հունաստան) Արիստոտելի համալսարան
Երանոսիկ Մանուկյան, փ.գ.թ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Իգոր Կարապետյան, մանկ.գ.դ., պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան
Լուսինե Հարությունյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Լուսինե Ֆլյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան
Խաչիկ Գալստյան, ք.գ.դ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Հեղինե Մանասյան, տ.գ.դ., Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան
Հովհաննես Հարությունյան, տ.գ.թ., Եվրասիա միջազգային համալսարան
Մարիամ Մարգարյան, ք.գ.դ., պրոֆեսոր, փ.գ.թ., դոցենտ, ՀՀ պետական կառավարման ակադեմիա
Մարտա Յիվինսկա, ք.գ.թ., Վիստուլայի համալսարան (Վիստուլայի համալսարանների խումբ,
Վարշավա, Լեհաստան) և Վարշավայի Wsztechnica Polska համալսարան
Պյոտր Բորովսկի, տեխ.գ.թ., տնտեսագետ, դոցենտ, Վարշավայի բնական գիտությունների
համալսարան
Ռամոն Բուազաս Լորենցո, ք.գ.թ., Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարան (Իսպանիա)
Սամվել Մուրադյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Սոնա Հակոբյան, ք.գ.թ., Հայաստանի Եվրոպական Համալսարան
Սուրեն Օհանյան, աշխ.գ.դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան
Ստեփան Ծաղիկյան, ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան
Վահե Վանեսյան, ք.գ.դ., CIDA-Կանադական միջազգային զարգացման գործակալություն
Վլադիմիր Հովհաննիսյան, ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Խմբագրական խորհրդի քարտուղար՝

Նունե Զոմարդյան, Եվրասիա միջազգային համալսարան

«Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի» պարբերականը ԲՈԿ-ի 28.06.2019թ. № 164Ա հրամանի համաձայն ընդգրկված է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում:

ISSN 1829-4952

© Եվրասիա միջազգային համալսարան, 2023

***Издается по рекомендации ученого совета
Международного университета Евразия***

Редакционная коллегия

Гагик Варданян (главный редактор), д-р экон. наук, профессор, Международный университет Евразия

Альберт Макарян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет

Ани Степанян, канд. юрид. наук, доцент, Всероссийский государственный университет юстиции (РПА Минюста России)

Анна Оганян, д-р полит. наук, профессор, Стоунхиллский университет, США

Арам Айвазян, канд. юрид. наук, Международный университет Евразия, Следственный комитет РА

Ашот Алексанян, д-р полит. наук, профессор, Ереванский государственный университет

Ашот Маркосян, д-р экон. наук, профессор, Ереванский государственный университет

Ашот Хачатрян, д-р юрид. наук, профессор, заслуженный юрист Республики Армения

Ваге Ванесян, д-р полит. наук, CIDA-Канадское агентство международного развития

Владимир Оганесян, д-р юрид. наук, Российско-Армянский (Славянский) университет

Гаяне Товмасян, канд. экон. наук, доцент, Исследовательский центр «АМБЕРД» Государственного экономического университета Армении

Гражина Чуладене, д-р пед. наук, доцент, Университет Миколаса Ромериса, Литва

Дмитриос Захос, д-р пед. наук, Университет Аристотеля в Салониках, Греция

Ерануи Манукян, канд. филос. наук, доцент, Ереванский государственный университет

Игорь Карапетян, д-р пед. наук, профессор, Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна

Лусине Арутюнян, д-р пед. наук, профессор, Государственный экономический университет

Лусине Флджян, д-р филол. наук, профессор, Международный университет Евразия

Мариам Маргарян, д-р полит. наук, профессор, канд. филос. наук, доцент, Академия государственного управления Республики Армения

Марта Цывинска, д-р филол. наук, Университет Вистула (Группа университетов Вистулы, Варшава, Польша), Университет Wsztechnica Polska в Варшаве

Оганес Арутюнян, канд. экон. наук, Международный университет Евразия

Петр Боровский, д-р техн. наук, экономист, Варшавский университет естественных наук, Польша

Рамон Бузас Лоренцо, д-р полит. наук, Университет Сантьяго-де-Компостела, Испания

Самвел Мурадян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет

Сона Акопян, канд. филол. наук, Европейский университет Армении

Сурен Оганян, д-р геогр. наук, профессор, Международный университет Евразия

Степан Цагикян, д-р юрид. наук, профессор, Российско-Армянский (Славянский) университет

Хачик Галстян, д-р полит. наук, доцент, Ереванский государственный университет

Эгине Манасян, д-р экон. наук, Кавказский исследовательский ресурсный центр-Армения

Секретарь редакционной коллегии:

Нуне Джомардян, Международный университет Евразия

Решением Высшей квалификационной комиссией МОНКС РА от 28.06.2019 № 164А Вестник Международного университета Евразия включен в перечень научных изданий приемлемых для публикаций основных результатов и положений диссертаций.

ISSN 1829-4952

© Международный университет Евразия, 2023

***Recommended for publication by the Scientific
Council of Eurasia International University***

Editorial Board:

Gagik Vardanyan (Chairman), Doctor of Economics, Professor, Eurasia International University

Albert Makaryan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University

Ani Stepanyan, Ph.D. in Law, Associate Professor, All-Russian State University of Justice (RLA of the Ministry of Justice of Russia)

Anna Ohanyan, Ph.D. in Political Science, Stonehill University, USA

Aram Ayvazyan, Ph.D. in Law, Eurasia International University, RA Investigative Committee

Ashot Aleksanyan, Doctor of Political Science, Professor, Yerevan State University

Ashot Khachatryan, Doctor of Law, Professor, Honored lawyer of the RA

Ashot Markosyan, Doctor of Economics, Professor, Yerevan State University

Dmitrios Zachos, Ph.D. in Pedagogical Sciences, Associate Professor, Aristotle University of Thessaloniki, Greece

Yeranuhi Manukyan, Ph.D. in Philosophy, Associate Professor, Yerevan State University

Gayane Tovmasyan, Ph.D. in Economics, Associate Professor, "AMBERD" Research Center of the Armenian State University of Economics

Grazina Chuladiene, Ph.D. in Pedagogy, Associate Professor, Mikolas Romeris University, Lithuania

Heghine Manasyan, Doctor of Economics, Caucasus Research Resource Center (CRRC)-Armenia

Hovhannes Harutyunyan, Ph.D. in Economics, Eurasia International University

Khachik Galstyan, Doctor of Political Sciences, Associate Professor, Yerevan State University

Igor Karapetyan, Doctor of Pedagogical Sciences, Professor, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

Lusine Harutyunyan, Doctor of Philology, Professor, Armenian State University of Economics

Lusine Fljyan, Doctor of Philological Sciences, Professor, Eurasia International University

Mariam Margaryan, Doctor of Political Sciences, Professor, Ph.D. in Philosophy, Associate Professor, Academy of Public Administration of the Republic of Armenia

Marta Cywińska, Ph. D. in Humanities, Vistula University (Vistula Group of Universities, Warsaw, Poland), Wszechnica Polska University in Warsaw, Poland

Piotr Borowski, Ph.D. in Engineering, Economist, Associate Professor, Warsaw University of Life Sciences, Poland

Ramón Bouzas Lorenzo, Ph.D. in Political Science, University of Santiago de Compostela, Spain

Samvel Muradyan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University.

Sona Hakobyan, Ph.D. in Philological Sciences, European University of Armenia

Stepan Tsaghikyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Suren Ohanyan, Doctor of Geographical Sciences, Professor, Eurasia International University

Vahe Vanesyan, Ph.D. in Political Science, CIDA - Canadian Agency for International Development

Vladimir Hovhannisyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Secretary of Editorial Board: Nune Jomardyan, Eurasia International University

According to № 164 (A)U decree of RA Supreme Certifying Committee (hereinafter, SCC) dated on June 28, 2019, EIU Bulletin is now recognized as a scientifically relevant journal included in the list of SCC, RA Ministry of Education, Science, Culture and Sport for publicizing the main principals and guidelines of Ph.D. dissertation.

ISSN 1829-4952

© Eurasia International University, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արամ Ալվազյան

ՎՏԱՆԳԻ ՄԵՋ ԹՈՂՆԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՆՈՐՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

8

Գևորգ Իսրայելյան, Սամսոն Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԼԱՏԵՆՏԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

18

Աննա Հովհաննիսյան

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

26

Անդրանիկ Սիմոնյան

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

45

Զավեն Ամբաստյան

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

58

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կարինե Մինասյան

ԹՎԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

72

Նարեկ Մելքումյան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏՔՈՎԻԴՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

89

Լիլիթ Անտոնյան

ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՊԵՐԱԿԱԼ ՄՈԴԵԼԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

104

Արմինե Մատենցյան

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԵՏԱԿԱՐԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄ

119

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Լալիկ Խաչատրյան

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ

140

Մարգոշ Միրումյան

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

155

Լուսինե Սարգսյան, Տաթևիկ Վարդանյան

ԳՐԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՌԵՅՉԵԼ ՀՈԼԻՍԻ «ԱՂՋԻԿ ՋԱՆ, ՈՒՇՔԻ ԱՐԻ» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

167

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Իրինա Մխիթարյան, Ինեսա Ուդոմյան

ՄԻՋՄԵՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԴԱՍԱՎԱՆԴԱԿՈՂ ԼՍԱՐԱՆՈՒՄ (ՀՈՒՆԱԿԱՆ ԼՍԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

180

СОДЕРЖАНИЕ

ЮРИСПРУДЕНЦИЯ

Арам Айвазян

ПРОБЛЕМА ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ФОРМУЛИРОВКИ
СОСТАВА ОСТАВЛЕНИЯ В ОПАСНОСТИ И ДЕЙСТВУЮЩЕЕ ПРОТИВОРЕЧИЕ В КОНТЕКСТЕ АНАЛИЗА
ДРУГИХ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ

8

Геворг Израелян, Самсон Мхитарян

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ЕСТЕСТВЕННОЙ ЛАТЕНТНОСТИ СЕМЕЙНОГО
НАСИЛИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

18

Анна Оганесян

ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В НАЦИОНАЛЬНОЙ ПРАВОВОЙ СИСТЕМЕ: МЕЖДУНАРОДНЫЙ
ОПЫТ ПРАВОВОЙ ФИКСАЦИИ

26

АНДРАНИК СИМОНЯН

ВОЗМОЖНОСТИ И НАПРАВЛЕНИЯ ИСПОЛЬЗОВАНИЯ РЕЗУЛЬТАТОВ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ
ДЕЯТЕЛЬНОСТИ

45

Завен Смбатян

ТЕОРЕТИКО-ПРАВОВЫЕ ВОПРОСЫ ОПРЕДЕЛЕНИЯ ПОНЯТИЯ АДМИНИСТРАТИВНОГО АКТА
В КОНТЕКСТЕ ВНУТРИГОСУДАРСТВЕННОГО И МЕЖДУНАРОДНОГО ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ

58

ЭКОНОМИКА

Каринэ Минасян

МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ФОРМИРОВАНИЮ ИНСТИТУЦИОНАЛЬНОГО КАРКАСА
В ЦИФРОВОЙ СРЕДЕ

72

Нарек Мелкумян

ПОСТКОВИДНЫЕ ПРОЯВЛЕНИЯ ВЛИЯНИЯ ЦИФРОВОЙ ТРАНСФОРМАЦИИ НА ГЛОБАЛЬНУЮ
ЭКОНОМИКУ

89

Лилит Антонян

ОПТИМАЛЬНАЯ МОДЕЛЬ УПРАВЛЕНИЯ ШКОЛОЙ С ИСПОЛЬЗОВАНИЕМ ИНФОРМАЦИОННО-
КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ

104

АРМИНЕ МАТЕНЦЯН

АЛЬТЕРНАТИВНЫЕ ИЛИ ЭКСПЕРИМЕНТАЛЬНЫЕ ПУТЕШЕСТВИЯ КАК НАПРАВЛЕНИЕ РАЗВИТИЯ
КОНЦЕПТУАЛЬНОГО ТУРИЗМА

119

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

Лалик Хачатрян

АНАЛИТИЧЕСКАЯ КОРНЕВАЯ РЕДУПЛИКАЦИЯ В ЯЗЫКЕ
АРМЯНСКОЙ БИБЛИОГРАФИИ V ВЕКА

140

Маргуш Мирумян

СИНТАКСИЧЕСКИЕ ФУНКЦИИ ЯДЕРНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ И ИХ ТРАНСФОРМАЦИЙ
В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

155

Лусине Саргсян, Татевик Варданян

АЛЛЮЗИЯ В РОМАНЕ РЭЙЧЕЛ ХОЛЛИС «ОЧНИСЬ, ДЕТКА» И ЕЕ ПЕРЕВОД НА АРМЯНСКИЙ ЯЗЫК

167

ПЕДАГОГИКА И МЕТОДИКА ОБУЧЕНИЯ

Ирина Мхитарян, Инеса Удумян

СТРАТЕГИИ ПОВЫШЕНИЯ КОМПЕТЕНТНОСТИ В МЕЖКУЛЬТУРНОЙ КОММУНИКАЦИИ
В КЛАССАХ EFL (ИЗ ОПЫТА РАБОТЫ С ГРЕЧЕСКИМ КЛАССОМ)

180

CONTENT

JURISPRUDENCE

Aram Ayvazyan

THE PROBLEM OF LEGISLATIVE FORMULATION OF THE
CORPUS DELICTI OF ABANDONEMENT IN DANGER AND
THE EXISTING CONTRADICTION IN THE CONTEXT OF ANALYSIS OF OTHER LEGAL NORMS 8

Gevorg Israyelyan, Samson Mkhitarian

SOME PROBLEMS OF PREVENTION OF NATURAL LATENCY OF DOMESTIC VIOLENCE
IN THE REPUBLIC OF ARMENIA 18

Anna Hovhannisyan

PRESUMPTION OF INNOCENCE IN THE NATIONAL LEGAL SYSTEM: INTERNATIONAL EXPERIENCE
OF LEGAL FIXATION 26

Andranik Simonyan

POSSIBILITIES AND DIRECTIONS OF USAGE OF RESULTS OF INVESTIGATIVE ACTIVITIES 45

Zaven Smbatyan

THEORETICAL BASIS OF DEFINING THE CONCEPT OF ADMINISTRATIVE ACT IN THE CONTEXT
OF DOMESTIC AND INTERNATIONAL LEGAL REGULATIONS 58

ECONOMICS

Karine Minasyan

METHODOLOGICAL APPROACHES TO FORMATION OF AN INSTITUTIONAL FRAMEWORK
IN THE DIGITAL ENVIRONMENT 72

Narek Melkumyan

THE POST-COVID MANIFESTATIONS OF THE IMPACT OF DIGITAL TRANSFORMATION
ON THE GLOBAL ECONOMY 89

Lilit Antonyan

THE OPTIMAL SCHOOL MANAGEMENT MODEL USING INFORMATION AND
COMMUNICATIONS TECHNOLOGY 104

Armine Matentsyan

ALTERNATIVE OR EXPERIENTIAL TRAVEL AS A CONCEPTUAL TOURISM DEVELOPMENT TREND 119

LINGUISTICS AND PHILOLOGY

Lalik Khachatrya

ANALYTICAL REDUPLICATION OF ROOTS IN THE LANGUAGE OF RMENIAN BIBLIOGRAPHY
OF THE 5TH CENTURY 140

Margush Mirumyan

TRANSFORMATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 155

Lusine Sargsyan, Tatevik Vardanyan

ALLUSION IN "GIRL, WASH YOUR FACE" BY RACHEL HOLLIS AND ITS ARMENIAN TRANSLATION 167

PEDAGOGY AND TEACHING METHODOLOGY

Irina Mkhitarian, Inesa Udumyan

STRATEGIES OF RAISING INTERCULTURAL COMMUNICATION COMPETENCE
IN EFL CLASSROOMS (ON A SAMPLE FROM A GREEK CLASSROOM SETTING) 180

Արամ Այվազյան

Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի
ղասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ am.ayvazyan@eiu.am

DOI: 10.53614/18294952-2023.1-8

ՎՏԱՆԳԻ ՄԵՋ ԹՈՂՆԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՕՐԵՆՍԴԻԱԿԱՆ ԶԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԻՐԱԿԱԿԱՆ ԱՅԼ ՆՈՐՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածում ներկայացվել են վտանգի մեջ թողնելու՝ ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված հանցակազմի նախատեսման սոցիալական և բարոյական հիմքերն ու անհրաժեշտությունը և այդ առիթով ներկայացվել տարբեր քրեագետների մեկնաբանությունները: Բարձրաձայնվել է ՀՀ քրեական օրենսգրքում վտանգի մեջ թողնելու հանցակազմի օրենսդրական ձևակերպման հիմնախնդիրը և առկա հակասությունը նույն օրենսգրքի այլ դրույթի հետ համադրության շրջանակներում՝ միաժամանակ տալով անհրաժեշտ մի շարք առաջարկություններ:

Հիմնաբառեր. վտանգի մեջ թողնել, անհետաձգելի օգնություն, քրեական պատասխանատվություն, ինքնապահպանության միջոցներ, օգնություն ցույց տալ, հոգ տանել, իրական հնարավորություն:

Ներածություն

Մարդու կյանքը, որպես գերագույն արժեք, պահանջում է համապատասխան իրավական պաշտպանություն: ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ նաև ՀՀ քր. օր.), պաշտպանելով առավել կարևոր հասարակական հարաբերությունները, առաջ է քաշել անհատի շահերի պաշտպանությունը: Պա-

տահական չէ, որ օրենսդիրը ՀՀ նոր քրեական օրենսգրքի հատուկ մասի առանձին գլուխների տեսքով է նախատեսել կյանքի դեմ ուղղված հանցագործությունները, առողջության դեմ ուղղված հանցագործությունները և առանձին գլխով նաև կյանքն ու առողջությունը վտանգող հանցագործությունները: Այդ արժեքներին վնաս հասցնելու հետ միասին լուրջ վտանգ են ներկայացնում այն արարքները, որոնք խախտում են մարդու կյանքի և առողջության անվտանգությունը, մասնավորապես՝ մարդկանց առանց օգնության կամ, այլ կերպ ասած, վտանգի մեջ թողնելը, եթե նրանք գտնվում են կյանքին կամ առողջությանը սպառնացող դրության մեջ: Չնայած նրան, որ այդպիսի անգործության դեպքում կարող է կյանքին և առողջությանն իրական վնաս չհասցվել, սակայն դրանով խախտվում են առանձին խմբերի անձանց անվտանգ գոյատևման փոխհարաբերությունները, և այդ արարքը համարվում է ոչ միայն բարոյագուրկ, այլև առանձին դեպքերում հակաիրավական ու այն էլ՝ հանցավոր:

Սույն հոդվածի շրջանակներում կվերլուծվի վտանգի մեջ թողնելու հանցակազմի և ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի կոնկրետ իրավակարգավորումներում առկա հակասությունները՝ տալով այդ կապակցությամբ առաջարկություններ:

Մեթոդ

Հետազոտության մշակման ընթացքում կիրառվել է հասարակական գործընթացների և իրավական երևույթների ծանաչողության տեսության մեխանիզմ համարվող ժամանակակից այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ ծանաչողության համագիտական մեթոդները՝ վերլուծությունը, համադրումը, համակարգային մոտեցումը, ինդուկցիայի և դեդուկցիայի տրամաբանական հնարքները: Մասնավորապես՝ հետազոտության մեջ տեսական հիմնավորումները տրված են իրավահամեմատական և համակարգակառուցվածքային մեթոդների հիման վրա, և հիմք են ընդունվել հայ և օտարերկրյա տարբեր մտածողների աշխատությունները, գաղափարները, իսկ որպես իրավական հիմք դիտարկվել են տարբեր պետությունների օրենսդրական կարգավորումները:

Արդյունքներ

Հայ հասարակության մեջ միշտ էլ գոյություն են ունեցել բարոյական նորմերը, որոնք համարվել են անգերազանցելի արժեք ցանկացած հասարակական-տնտեսական ֆորմացիայի դեպքում: Դրանցից մեկն է օգնություն ցուցաբերելը փորձանքի մեջ ընկած մերձավորին՝ գթասրտությունից ելնելով: Մահացողի նկատմամբ գթասրտությունը միշտ էլ եղել է հայ ազգային բնավորության առանձնահատուկ գիծը:

20-րդ դարի սկզբին ռուս իրավաբան Լ.Ե.Վլադիմիրովը գրել է. «Օրենսդրության մեջ բացակայում է այն կարևոր առարկան, որին պետք է ուշադրություն դարձվի և՛ բնածին մարդասիրությունից և՛ մեկ քաղաքացիական

հասարակության անդամների՝ միմյանց միջև գոյություն ունեցող փոխադարձ և մեր դարում արդեն ընդհանուր հասկացություններից ելնելով: Դրանց թվին է պատկանում մի պարտականություն, այն է՝ օգնել մերձավորին, ով հայտնվել է վտանգի մեջ, երբ այն մարդու գոյությանն է սպառնում և այդ օգնությունը ոչ միայն հնարավոր է, այլև չի պահանջում հատուկ միջոցների կիրառում, ոչ էլ հերոսական քաջություն ու անձնագոհություն: Այդ դեպքերում հենց անտարբերությունը հանցագործություն է և արժանի է պատժի» (Владимиров, 1903, էջ 244): Նա չի համաձայնվում օգնություն չցուցաբերելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու հակառակորդների հետ, ովքեր գտնում են, որ այդպիսի համաքաղաքացիական պարտականությունը չունի իրավական հիմքեր: Լ.Ե.Վլադիմիրովը համարում էր, որ այն պետք է տարածվի բոլոր քաղաքացիների վրա բոլոր այն դեպքերում, որտեղ դա չի կարող անել ինքը՝ պետությունը: Այդ քաղաքացիական պարտականությունը օրենքի վրա հիմնելու ձգտումը չունի որոշիչ նշանակություն: Վտանգի մեջ գտնվող մերձավորին օգնությունը համարվում է ուղղակի մարդկանց նկատմամբ մարդկային վերաբերմունքի հետևանք, այդ պատճառով էլ պետությունն ունի խելամիտ հիմնավորում քաղաքացիների վրա այդպիսի պարտականություն դնելու համար (Новгородцев, 1896, էջ 2): Այդպիսի սահմանումը համապատասխանում է պատմականորեն ձևավորված ժողովրդի ոգուն, նրա բարոյական արժեքներին:

Կյանքը և առողջությունը վտանգի տակ դնող հանցագործությունները հասարակությանը կարող են հասցնել հսկայական, իսկ երբեմն՝ պարզապես անուղղելի վնաս: Մարդկային անհատականության նկատմամբ անհարգալից և արհամարհական վերաբերմունքը «իջեցնում է» հասարակությունը (Побегайло, 2001, էջ 35): Այդ հանգամանքն այն գործոններից մեկն է, որը պահանջում է անձի պահպանության ոլորտում իրականացնել գործող քրեական օրենսդրության կատարելագործում՝ նրանում կատարելով հիմնավորված փոփոխություններ և լրացումներ: Ներկա պահին այդ գործունեությունը պետք է դառնա հանցավորությանը հակազդելու պետական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը:

Այսօր անհատի, նրա իրավունքների անհետահայաց փառաբանումը, պարտականությունների մասին լռումը, երբեմն պետության կարգավորող գործունեության մշտական քննադատությունը և արևմտյան ինդիվիդուալիզմի գովերգումը բնութագրում են Հայաստանի սոցիալ-իրավական կյանքի հիմնական ուղղությունները: Ընդ որում, հաճախ բաց է թողնվում այն հանգամանքը, որ հասարակության նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ է, որ այդ անհատական աշխարհայացքը բխի սոցիալականից և չհակասի դրան:

Որոշ երկրների քրեական օրենսգրքեր ընդհանրապես չունեն վտանգի մեջ թողնելու վերաբերյալ նորմեր, օրինակ՝ Շվեդիայի քրեական օրենսգիրքը: Նրանում միայն 9-րդ հոդվածով է նախատեսված պատասխանատվություն վտանգի մեջ դնելու համար այն անձանց համար, ովքեր կոպիտ անգուշության հետևանքով հանգեցնում են մահացու վտանգի կամ ծանր մարմ-

նական վնասվածքի վտանգի կամ մեկ այլ անձի ծանր հիվանդությանը (Уголовный кодекс Швеции, 2001, էջ 39): Տվյալ դեպքում տեղ ունի անգգուշությամբ վտանգի մեջ դնելը: Դիտավորյալ վտանգի մեջ թողնելը չի կլանվում այդ հոդվածով:

Ռոմանագերմանական իրավական համակարգի ուրիշ քրեական օրենսդրությունները քննարկվող հանցանքի սուբյեկտի դերում նախատեսում են միայն պարտավորված անձանց կողմից վտանգի մեջ թողնելը: Օրինակ՝ Նիդեռլանդների քրեական օրենսգրքը պարունակում է 15-րդ բաժինը՝ «Անձին օրհասական դրության մեջ թողնելը»: Նշված բաժնում առկա են 6 հոդվածներ՝ 255-260: 255-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում այն քաղաքացու համար, ով մեկ այլ անձի պահել է անօգնական վիճակի մեջ այն դեպքում, երբ պարտավոր էր նրա նկատմամբ հոգ տանել (Уголовный кодекс Голландии, 2000): ԳՖՀ-ի քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածում՝ «Վտանգի մեջ թողնելը», ամրապնդվում է միայն տուժողի նկատմամբ խնամք տանելու պարտականություն ունեցող սուբյեկտի պատասխանատվությունը (Уголовный кодекс ФРГ, 2000, էջ 131-132): Իսպանիայի քրեական օրենսգրքի 9-րդ բաժնում՝ «Օգնություն չցուցաբերելը», նախատեսված 195-րդ հոդվածը պատիժ է սահմանում լուրջ վտանգի մեջ գտնվող մարդուն օգնություն ցույց չտալու համար, եթե անձը հնարավորություն է ունեցել ցուցաբերել դա առանց իր կամ երրորդ անձանց համար վտանգի (Уголовный кодекс Испании, 2000):

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ վտանգի մեջ թողնելու համար նախատեսված հոդվածներին տարբեր երկրներում հատուկ է իրենց կառուցվածքը՝ նյութական, ձևական և խառը՝ կախված պետությունից, գործողության ժամանակից, մեղավորների և պահպանության ենթակա անձանց շրջանակից:

Համեմատելով ՀՀ գործող օրենսդրությունը վտանգի մեջ թողնելու մասին արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության հետ՝ կարելի է նշել, որ այն ավելի պրոգրեսիվ է, քան անգլո-սաքսոնական համակարգինը, բայց զիջում է ռոմանագերմանական իրավունքի համակարգի որոշ երկրներին, որոնց առաջադեմ գաղափարները համապատասխանում են պետության յուրաքանչյուր քաղաքացու շահերին և նպաստում են հասարակությունում բարոյականության ամրապնդմանը: Այդ գաղափարների որոշ տարրեր, որոնք չեն հակասում հայկական իրավունքի բարոյական սկզբունքներին, մասնավորապես վտանգի մեջ դնելը, կարող էին օգտագործվել օրենսդրի կողմից վտանգի մեջ թողնելու մասին հոդվածները նախագծելիս: Մեր կարծիքով վտանգի մեջ թողնելու մասին հայկական օրենսդրության նորմերը ունեն կատարելագործման կարիք՝ հայկական քրեական քաղաքականության դոկտրինային համապատասխան՝ յուրաքանչյուր մարդու կյանքի և առողջության անվտանգությունն ապահովելու համար՝ հաշվի առնելով արտասահմանյան երկրների առաջադեմ փորձը:

Վտանգի մեջ թողնելու հանցակազմի օրենսդրական ձևակերպումը հայրենական օրենսդրության շրջանակներում ամրագրված է ՀՀ քրեական

օրենսգրքի 182-րդ հոդվածով, որի 1-ին մասով, մասնավորապես, քրեական պատասխանատվություն է սահմանվում կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող և ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված անձին անհրաժեշտ և ակնհայտ անհետաձգելի օգնություն ցույց չտալու համար, եթե հանցավորն այդ անձին օգնություն ցույց տալու իրական հնարավորություն է ունեցել, կամ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին համապատասխան մարմիններին չհաղորդելու համար, *եթե պարտավոր չի եղել հոգ փրանել նրա մասին և ինքը նրան չի դրել կյանքի համար վտանգավոր վիճակի մեջ*:

Օրենսդրական նման ձևակերպման առկայության պարագայում ստացվում է, որ եթե անձը դրսևորում է անգործություն, ապա ամեն դեպքում, անձը ենթակա է քրեական պատասխանատվության, ինչն ինքնին առաջացնում է քրեաիրավական կարգավորումներում հակասություն: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարք է համարվում պատժի սպառնալիքով արգելված գործողությունը կամ անգործությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անգործությամբ կատարված արարքը քրեական պատասխանատվություն է առաջացնում, *եթե անձի վրա իրավական ակտով դրված է եղել գործողություն կատարելու պարտականություն, կամ այդ պարտականությունը բխել է նրա սրանձնած պարտավորությունից կամ բխել է օրենքով պաշտպանվող շահերը վրանգի ենթարկած կամ դրանց վնաս պատճառած իր նահորդ վարքագծից*:

Մեր կողմից արձանագրված վերոհիշյալ օրենսդրական երկու ձևակերպումներում հայտնաբերված առերևույթ հակասությունն ընդգծելու նպատակով բերենք մի օրինակ. անձը փողոցի մայթով զբոսնելիս ականատես է լինում, թե ինչպես է մի ավտոմեքենա ենթարկվում վթարի, որի վարորդն ակնհայտորեն գտնվում է իր կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում և զրկված է ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից: Նման պարագայում անցորդի կողմից վարորդի կյանքի և առողջության պահպանության ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը, առկա վերոհիշյալ իրավակարգավորումների լույսի ներքո, կդիտարկվի որպես հանցանք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով:

Ստացվում է, որ վարորդին օգնություն ցուցաբերելը թեև անցորդի վրա դրված չէ որևէ իրավական ակտով որպես գործողություն կատարելու պարտականություն, այդ պարտականությունը չի բխել անցորդի ստանձնած որևէ պարտավորությունից, ինչպես նաև առկա չէ անցորդի կողմից օրենքով պաշտպանվող շահերը վտանգի ենթարկած կամ դրանց վնաս պատճառած նախորդ որևէ վարքագծից, սակայն, ըստ առկա իրավակարգավորման, անցորդը ենթակա է այդ վարորդին օգնություն չցուցաբերելու, այսինքն այդ անգործության, ասել է թե՛ վարորդին վտանգի մեջ թողնելու համար: Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի իրավական պահանջի ուժով անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի

1-ին մասն ապաքրեականացնել: Այն, որ բերված օրինակում անցորդի կողմից ցուցաբերված պասիվությունը՝ անգործությունն ինքնին անբարոյական և պարսավելի արարք է՝ մանավանդ անցորդի կողմից օգնություն ցուցաբերելու ակնհայտ հնարավորություն ունենալու դեպքում, սակայն չնոռանանք, որ ոչ բոլոր հակաբարոյական վարքագծերն են միաժամանակ համարվում հանցավոր:

Թերևս, առաջ քաշված գաղափարի և ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասն ապաքրեականացնելուն ուղղված տեսակետին հակադարձողները, որպես անձի կողմից գործողություն կատարելու պարտականություն կարող են դիտարկել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքին արդեն իսկ դա քրեականացնելով առաջացնում է անձի կողմից անգործություն թույլ չտալու և գործողություն կատարելու հիմք՝ որպես իրավական ակտով սահմանված պարտականություն, սակայն հայտնի փաստ է, որ ՀՀ քրեական օրենսգրքը կոչված է ապահովելու և երաշխավորելու այլ՝ ՀՀ քրեական օրենսգրքից դուրս սահմանված իրավակարգավորումներով ամրագրված իրավահարաբերությունները:

Քննարկում

Մարդու կյանքը և առողջությունը համամարդկային կարևորագույն արժեքներից են: Հասարակության յուրաքանչյուր անդամի կյանքի և առողջության անվտանգության ապահովումը համարվում է ոչ միայն պետության, այլ նաև հասարակության յուրաքանչյուր անդամի իրավական և բարոյական պարտականությունը: Այդպիսի դիրքորոշումը հիմնված է մարդկային կյանքի արժեքների վերաբերյալ գործող օրենսդրության, պրակտիկայի վերլուծության, ինչպես նաև փիլիսոփայական ուսումնասիրությունների վրա, որոնք կասկած չեն հարուցում անձի համակողմանի պաշտպանության անհրաժեշտության հարցում՝ որպես հասարակության բարձրագույն սոցիալական արժեքի:

Քրիստոնեական ուսմունքը, որը դրված է շատ երկրների բարոյական նորմերի հիմքում, հիմնված է հարազատի նկատմամբ սիրո վրա: Կրոնական աշխարհայացքից բխող հասարակական բարոյականությունը ցանկացած մարդու բարոյական պարտքն է համարում օգնություն ցույց տալ կյանքի կամ առողջության համար վտանգավոր դրության մեջ գտնվող մարդուն: ՀՀ քրեական իրավունքը հիմնված է բարոյականության վրա: Այն բխում է բարոյականության նորմերից և իր ազդեցությամբ ամրապնդում է բարոյականությունը: Քրեական իրավունքի նորմերի պահպանումը առաջին հերթին հիմնված է ոչ թե պատժվելու վախի, այլ բարոյական արգելքի ներքին համոզմունքի վրա: Քրեական իրավունքը և բարոյականությունը գտնվում են մշտական կապի մեջ՝ լրացնելով մեկը մյուսին: Հասարակության բարոյական զարգացման բարձր շրջանում քրեաիրավական նորմերը իրենց գերակա դիրքը զիջում են բարոյականին: Իրավական նորմերի պահպանությունը ապահովվում է բարոյական պարտքի գիտակցմամբ: Սոցիալական վերա-

փոխումների շրջանում, երբ տեղի է ունենում բարոյական հիմքերի արժեզրկում, բարոյական նորմերին պետք է լինում քրեաիրավական նորմերի աջակցությունը, այդ թվում՝ անհատական ազատության սահմանափակման հաշվին, եթե դա պահանջվում է սոցիալական բարձրագույն արժեքների պաշտպանության համար:

Անձի անգործությունը, ով մարդուն թողել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր դրության մեջ, երբ կարելի էր օգնություն ցուցաբերել՝ առանց իր համար ավելորդ վտանգի, համարվում է ոչ միայն հակաբարոյական արարք, այլ նաև հանցավոր, ընդ որում՝ ոչ միայն անձի հանդեպ, ում նկատմամբ սուբյեկտը խնամքի պարտականություն ուներ, այլ նաև ցանկացած անձի, ով գտնվել է նման իրավիճակում: Փիլիսոփայության, կրոնի, բարոյականության և իրավունքի տեսակետից քրեական պատասխանատվությունը վտանգի մեջ թողնելու համար համարվում է սոցիալապես և գիտականորեն հիմնավորված:

Վտանգի մեջ թողնելը համարվում է դիտավորյալ հանցագործություն, որտեղ ուղղակի դիտավորությունը արտահայտվում է հենց արարքի նկատմամբ ունեցած վերաբերմունքով /թողնելով, օգնություն ցույց չտալով կամ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին համապատասխան մարմիններին չհաղորդելով/ և չի տարածվում հետևանքների վրա: Հետևանքների նկատմամբ վերաբերմունքը կարող է լինել անզգույշ: Ակնհայտությունը ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի մեջ վերաբերվում է գիտակցմանը սուբյեկտի կողմից, որ նա առանց օգնության է թողնում անձին, ով գտնվում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր դրության մեջ և զրկված է ինքնապահպանության համար միջոցներ ձեռք առնելու հնարավորությունից: Տվյալ հասկացությունը բնութագրում է կատարված արարքի՝ ցուցաբերված անգործության մասով անձի ունեցած գիտակցական մակարդակը, բայց չի որոշում հանցակազմի սուբյեկտիվ կողմն ամբողջությամբ և չի կարող կապված լինել դիտավորությամբ ասենք առողջությանը վնաս պատճառելու հետ:

Եզրակացություն

Կատարված հետազոտությունների և այդ ամենից բխող եզրահանգումների արդյունքում առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի օրենսդրական ձևակերպման մեջ կատարել փոփոխություն և լրացում՝ ներառելով ստորև բերված դրույթները՝

- ապաքրեականացնել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ «Կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող և ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված անձին անհրաժեշտ և ակնհայտ անհետաձգելի օգնություն ցույց չտալը, եթե հանցավորն այդ անձին օգնություն ցույց տալու իրական հնարավորություն է ունեցել, կամ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին համապատասխան մարմիններին չհաղորդելը, եթե պարտավոր չի եղել հոգ տանել նրա մասին

- և ինքը նրան չի դրել կյանքի համար վտանգավոր վիճակի մեջ»:
- ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսել առանձնապես ծանրացուցիչ հանգամանք՝ հանցակազմը դարձնելով նյութական, այն է՝ «Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մահ կամ այլ ծանր հետևանքներ»:
 - Միաժամանակ 5-րդ մասով սահմանել՝ «Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որն առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ»:

Օգտագործված գրականության ցանկ

Թումայան, Դ., Հովհաննիսյան, Կ. (2022). *Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հարուկ մաս: Ոստիկանական ձեռնարկ: ՀՀ ոստիկանության կրթահամալիր.*– Եր.: Լիմուշ:

ՀՀ Սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118

ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, Միասնական կայք 2021.05.17–2021.05.30
Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.07.2022

Владимиров, Л. Е. (1903). *Уголовный закон как воспитатель народа*. М.

Новгородцев, И. (1896). *Историческая школа юристов, ее происхождение и судьба*. М.

Побегайло, Э. (2001). Проблемы уголовной политики в сфере обеспечения безопасности жизни граждан (законотворческий аспект) // *Уголовное право*. № I, էջեր 42–55:

Уголовный кодекс Швеции (2001). СПб.

Уголовный кодекс Голландии (2000). СПб.

Уголовный кодекс ФРГ (2000). М.

Уголовный кодекс Испании (2000). М.

References

Tumasyan, D., Hovhannisyan, K. (2022). *Hayastani Hanrapetutyanyan kreakan iravunk: Hatuk mas: Usumnakan dzedzrnark* [Criminal law of the Republic of Armenia. Special part. Educational manual]: HH vostikanutyanyan krtahamalir.– Yer.. Limush.

HH Sahmanadrutyun [RA Constitution], HHPT 2015.12.21/Hatuk tvogharkum Hod. 1118

HH kreakan orengsirk [RA Criminal Code], HՕ-199-N, Miasnakan kayk 2021.05.17–2021.05.30
Pashtonakan hrarakman ory 27.05.2021, uzhi mej mtnelu amsat'ivy, 01.07.2022

Vladimirov, L. Ye. (1903). *Ugolovnyy zakon kak vospitatel' naroda* [Criminal law as an educator of the people]. М.

Novgorodtsev, I. (1896). *Istoricheskaya shkola yuristov, yeye proiskhozhdeniye i sud'ba* [The historical school of lawyers, its origin and fate]. М.

Pobegaylo, E. (2001). Problemy ugolovnoy politiki v sfere obespecheniya bezopasnosti zhizni grazhdan (zakonotvorcheskiy aspekt) [Problems of criminal policy in the field of ensuring the safety of life of citizens (legislative aspect)] // *Ugolovnoye pravo*. № I, ejer 42–55:

Ugolovnyy kodeks Shvetsii [Swedish Penal Code] (2001). SPb.

Ugolovnyy kodeks Gollandii [Dutch Penal Code] (2000). SPb.

Ugolovnyy kodeks FRG [Criminal Code of Germany] (2000). М.

Ugolovnyy kodeks Ispanii [Spanish Criminal Code] (2000). М.

Арам Айвазян

Преподаватель кафедры юриспруденции Международного университета

Евразия, кандидат юридических наук, доцент

Эл. адрес: aram.ayvazyan@eiu.am

ПРОБЛЕМА ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ФОРМУЛИРОВКИ СОСТАВА ОСТАВЛЕНИЯ В ОПАСНОСТИ И ДЕЙСТВУЮЩЕЕ ПРОТИВОРЕЧИЕ В КОНТЕКСТЕ АНАЛИЗА ДРУГИХ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ

В статье представлены социальные и нравственные основания и необходимость криминализации оставления в опасности и представлены комментарии различных ученых по этому поводу. Поднята проблема правовой формулировки состава преступления оставления в опасности в УК РА и существующего противоречия с другими нормами Уголовного кодекса, при этом дан ряд необходимых рекомендаций. Имеющаяся в специальной части уголовного законодательства РА формулировка относительно рассматриваемого состава преступления противопоставляется одной из закрепленных и провозглашенных в общей части этого законодательства универсальных правовых регулирований, на представление которой и решение произвольно возникшей проблемы направлена данная работа. В частности, из имеющейся формулировки следует, что если лицо проявляет бездействие, то в любом случае лицо подлежит уголовной ответственности, что само по себе вызывает противоречие в уголовно-правовых регулирований. Согласно Уголовному кодексу РА, деяние, совершенное в форме бездействия, влечет уголовную ответственность, если правовым актом на лицо была возложена обязанность совершить действие или эта обязанность вытекала из принятого им обязательства, или следовала из его предыдущего поведения, подвергшего опасности охраняемые законом интересы или причинившего кому-либо вред.

Ключевые слова: Оставление в опасности, неотложная помощь, уголовная ответственность, меры самосохранения, оказание помощи, забота, реальная возможность.

Aram Ayvazyan

Lecturer of the Law at the Eurasia International University,

Ph.D. in Law, Associate Professor

Email: aram.ayvazyan@eiu.am

THE PROBLEM OF LEGISLATIVE FORMULATION OF THE CORPUS DELICTI OF ABANDONMENT IN DANGER AND THE EXISTING CONTRADICTION IN THE CONTEXT OF ANALYSIS OF OTHER LEGAL NORMS

The article is devoted to social and moral grounds and necessity of legislative enshrinement of the corpus delicti of abandonment in danger cited by the Criminal Code of the RA, and comments of various criminologists on this issue. The problem of legislative formulation of the corpus delicti of abandonment in danger in the RA Criminal Code and the existing contradiction in the context of combination with other provisions of the Criminal Code have been raised, and a number of necessary recommendations has been proposed. The wording available in the special part of the criminal legislation of the RA regarding the mentioned corpus delicti contradicts one of the universal legal regulations fixed and declared by the general part of that legislation, and this article aims to raise and solve the problem that has unintentionally arisen. In particular, according to the existing definition, if a person shows inactivity, then, in any case, the person is subject to criminal liability, which in itself causes a contradiction with other criminal law regulations. Meanwhile, according to the Criminal Code of the RA, an act committed through inaction causes criminal liability if a person has a duty to perform an action by a legal act, or this duty derives from his/her assumed obligation, or derives from his/her previous behavior that endangered the interests protected by the law or caused damage to someone.

Key words: abandonment in danger, urgent help, criminal liability, measures for self-protection, offer help, to take care of, real possibility.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. ապրիլի 10-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. ապրիլի 12-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. մայիսի 10-ին:

Գևորգ Իսրայելյան
ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի Քրեաբանության
կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ,
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. [hauugte`gevorg.israelyan@eiu.am](mailto:hauugte.gevorg.israelyan@eiu.am)

Սամսոն Մխիթարյան
ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի Քրեաբանության
կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի սոցիոլոգ,
սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. [hauugte`Mkhitaryans@yahoo.com](mailto:hauugte`Mkhitaryans@yahoo.com)
DOI: 10.53614/18294952-2023.1-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԼԱՏԵՆՏԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ

Գործնականում, երբեմն հնարավոր չի լինում ժամանակին արձագանքել ընտանեկան բռնության դեպքերին՝ ելնելով այն հանգամանքից, որ իրավապահ մարմինները դրանց մասին չեն տեղեկանում: Խնդիրն այն է, որ առկա են գործոններ, որոնցով պայմանավորված տուժողները կամ նրանց շրջապատող անձինք իրավապահ մարմիններին չեն հայտնում կատարված ընտանեկան բռնության դեպքերի մասին: Սույն հետազոտությունն ուղղված է ընտանեկան բռնության բնական լատենտայնությունը պայմանավորող գործոնների վերհանմանը և կանխարգելիչ ներգործության միջոցների ներկայացմանը:

Հիմնաբառեր. ընտանեկան բռնություն, բնական լատենտայնություն, գործոններ, կանխարգելում:

Ներածություն

Ընտանեկան բռնությունը դասվում է այն հանցագործություններին, որոնք բնորոշվում են բարձր լատենտայնությամբ, այդ թվում՝ բնական: Դա հատկապես վառ է արտահայտվում սեռական բռնության պարագայում (Իսրայելյան, 2008, 47–53, Իսրայելյան, 2012, 32): Ընտանեկան բռնության բարձր բնական լատենտայնության մասին են վկայում մեր հետազոտության արդյունքները: Այսպես, կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ հարցվածների 90,29 տոկոսը չեն հայտնել մեկ այլ անձի կամ կազմակերպության իրենց հանդեպ կատարված ընտանեկան բռնության մասին:

Հետևաբար, անհրաժեշտ է տեսադաշտ բերել և մշտական ուշադրության կենտրոնում պահել ընտանեկան բռնության բնական լատենտայնությունը պայմանավորող գործոնները, ինչը հնարավորություն կտա մշակել կանխարգելման միջոցներ և ապահովել կանխարգելիչ ներգործության արդյունավետությունը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ խնդրո առարկան Հայաստանի Հանրապետությունում հետազոտված չէ:

Հետազոտության նպատակն է ընտանեկան բռնության բնական լատենտայնության կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Հետազոտության խնդիրն է ընտանեկան բռնության բնական լատենտայնությունը պայմանավորող գործոնների վերհանումը և կանխարգելիչ ներգործության միջոցների առաջարկումը:

Մեթոդը

Հետազոտությունն իրականացվել է հարցման մեթոդով: Հարցվել է 480 մարդ, որից՝

1. 26,02 տոկոսը արական, 73,98 տոկոսն իգական սեռի ներկայացուցիչներ,
2. 27,15 տոկոսը 18–25, 36,88 տոկոսը 26–45, 28,73 տոկոսը 46–60, 6,787 տոկոսը 61 տարեկանից բարձր տարիքի անձինք,
3. 49,32 տոկոսը միջնակարգ, 50,68 տոկոսը բարձրագույն կրթությամբ անձինք,
4. 57,5 տոկոսը ամուսնացած, 31,36 տոկոսը չամուսնացած, 4,773 տոկոսը ամուսնալուծված, 6,364 տոկոսը այրի:

Հետազոտությունն իրականացվել է նաև մեր կողմից նախկինում իրականացված ուսումնասիրությունների և մասնագիտական գրականության համեմատական վերլուծության մեթոդով:

Ընտանեկան բռնության բնական լատենտայնությունը պայմանավորող գործոնները

Մեր կողմից կատարված հետազոտությունները հնարավորություն են տվել բացահայտել ընտանեկան բռնության բնական լատենտայնությունը պայմանավորող հետևյալ գործոնները.

1. Բնակչության իրավագիտակցության թերությունները

Այս գործոնի բաղադրիչներն են ընտանեկան բռնության՝ որպես իրավական երևույթի մասին տեղեկատվության առհասարակ բացակայությունը, տուժողների կարծիքն այն մասին, թե հանցագործությունն էական վնաս չի պատճառել, որ դրա մասին հայտնեն, ինչպես նաև տուժողների կողմից բռնությունը միայն որպես իրենց անձնական շահերի խախտում, մասնավոր կյանքին վերաբերող հարց դիտարկելը՝ որն է կերպ չկապելով այն հասարակության համար վտանգավորության հետ (հարցվածների 3,620 տոկոս): Մասնագիտական գրականության մեջ որպես բնական լատենտայնությանը նպաստող գործոն նշվում է նաև ազգային մտածելակերպը, որը թույլ չի տալիս կնոջը բռնության փաստը քննարկել ընտանիքից դուրս, իսկ երեխաներին՝ բողոքել ծնողների վրա (Абдраманова Н.К., Алауханов Е.О., 2020, 6):

2. Իրավապահ մարմինների հանդեպ ցածր վստահությունը

Հարցվածների 28,89 տոկոսը չեն դիմել իրավապահ մարմիններին՝ կարծելով, որ ոչինչ չի փոխվի: Գերակշռում է թերահավատությունն առ այն, որ հանցագործությունը կբացահայտվի: Բացի այդ, մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համեմատ ավելի մեծ վստահություն են վայելում ընտանեկան բռնության հարցերով աջակցության կենտրոնները, ինչը հիմնավորվում է նաև դրանց գործունեության արդյունավետության մասին կարծիքով (հարցվածների 80 տոկոս):

3. Ամոթի զգացումը

Հարցվածների 44,4 տոկոսը չեն դիմել իրավասու մարմիններին՝ ելնելով ամոթի զգացումից: Մասնագիտական գրականության մեջ որպես լատենտայնությունը պայմանավորող գործոն նշվում է տուժողի, իսկ եթե նա մանկահասակ է, ապա նրա ծնողների և խնամակալների ամոթի հոգեբանական արգելքը, կյանքի ինտիմ կողմերի հրապարակման ցանկության բացակայությունը (Իսրայելյան, Հարությունյան, 2021, 48):

4. Հանցավորի վրեժխնդրությունից վախը

Հարցվածների 16 տոկոսը չի դիմել իրավապահ մարմիններին, քանի որ վախեցել է ընտանիքի անդամի կողմից վրեժխնդիր լինելու վախից:

5. Այլ պատճառներ

Որպես ընտանեկան բռնության բնական լատենտայնությունը պայմանավորող այլ պատճառներ կարող են ծառայել տուժողի՝ բարոյականության,

երբեմն նաև իրավական նորմերի խախտումներ բովանդակող վարքը, հանցավորի հետ սեփական ուժերով «հարց լուծելու» ձգտումը, բնակարանային, նյութական ապահովվածությունից զրկվելու վախը և այլն (Իսրայելյան, 2008, 47–53):

Ընտանեկան բռնության բնական լատենտայնության կանխարգելման առաջարկվող միջոցները

Ընտանեկան բռնության բնական լատենտայնության պատճառական համալիրում ընդգրկված՝ մեր կողմից բացահայտված գործոնների նկատմամբ կանխարգելիչ ներգործության նպատակով առաջարկում ենք հետևյալ միջոցները.

1. Բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացումը

Սա ընտանեկան բռնության բնական լատենտայնության նկատմամբ ներգործության ընդհանուր բնույթի միջոց է:

Իրավունքի խնդիրներից մեկն այն է, որ մարդու գիտակցության մեջ ձևավորվի իրավունքների պաշտպանության հարցով իրավասու մարմիններին դիմելու պահանջմունք, վեճերի լուծման հակաիրավական միջոցներից հրաժարվելու մոտեցում: Դա պետք է խթանի բնակչությանը իրավասու մարմիններին հանցագործությունների վերաբերյալ իրենց ունեցած տեղեկատվությունը հաղորդելուն: Իհարկե, իրավագիտակցությունը չի ենթադրում իրավունքի ձշգրիտ իմացության: Յուրաքանչյուր անձ պետք է ցանկանա, որպեսզի օրենքն իրագործվի, քանի որ այն ստեղծված է բոլորի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Հակառակ վարքը հանգեցնում է ընտանեկան բռնության բնական լատենտայնության աճի, ընտանեկան բռնության ինքնավերարտադրության և այլ բացասական հետևանքների (Իսրայելյան, Հարությունյան, 2021, 63–64):

Ընտանեկան բռնության լատենտայնության կանխարգելման համար կարևոր է այնպիսի գործոնի չեզոքացումը, ինչպիսին է իրավապահ մարմիններին չդիմելը՝ պատճառված վնասը չնչին համարելով: Այս ուղղությամբ անհրաժեշտ է ծավալել նպատակաուղղված իրավական քարոզչություն՝ օգտագործելով մեդիայի հնարավորությունները: Մարդկանց պատասխանատվության զգացման ձևավորումն ենթադրում է նրանց համոզմունքն առ այն, որ իրավասու մարմիններին հանցագործությունների մասին հայտնելն անհրաժեշտ է: Այդպիսի քարոզչության ազդեցության տակ պետք է ձևավորվի այն մասին համոզմունք, որ իրենց և այլոց շահերին ուղղված հանցագործությունների մասին տեղեկատվություն թաքցնելն օբյեկտիվորեն նպաստում է հանցավորների մոտ կայուն հակահասարակական ուղղվածության և հանցավոր գործունեությունը շարունակելու հնարավորության համոզվածության ձևավորմանը: Դա էլ հանգեցնում է ընտանեկան բռնության ինքնավերարտադրությանը (Кривенцов П.А., 2014, 63–64):

Հատկապես կարևոր է ընտանեկան բռնությանը հակազդելու միջոցների մասին բնակչության իրազեկումը: Ոստիկանությունը, դպրոցը, այլ սուբյեկտ-

ները պետք է մասնակցեն իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը և սերտորեն համագործակցեն ընտանեկան բռնության դեմ պայքարում (Израелян Г., 2022, 3-6):

2. Իրավապահ մարմինների հեղինակության և նրանց հանդեպ վստահության մակարդակի բարձրացումը

Զանգվածային լրատվության, Համացանցի և այլ միջոցներով իրավապահ մարմինների դրական փորձի և իմիջի վերաբերյալ տեղեկատվության տարածումը հնարավորություն կընձեռի բարձրացնել նրանց հեղինակությունը և նրանց հանդեպ վստահությունը, ինչը հենք կհանդիսանա ընտանեկան բռնության հարցերով նրանց օգնությանը դիմելու համար:

3. Բնակչության և իրավապահ մարմինների համագործակցությանը խթանելը

Կարևոր է ընտանեկան բռնության լատենտայնության կանխարգելման ուղղությամբ խթանել բնակչությանը համագործակցելու իրավապահ մարմինների հետ: Ուստի անհրաժեշտ է վերացնել իրավապահ մարմիններ չդիմելու այնպիսի պատճառը, ինչպիսին է հանցավորի կամ նրա մտերիմների կողմից հաշվեհարդար տեսնելու վախը: Գործուն նշանակություն ունի քրեական վարույթի համապատասխան մասնակիցների պաշտպանության միջոցների կիրառումը: Այստեղ հիմնական խոչընդոտ է այդ ինստիտուտի գոյության մասին բնակչության չիմացությունը: Դա վերացնելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխով նախատեսված վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանության ինստիտուտի դրույթների լուսաբանումը զանգվածային լրատվության և այլ միջոցներով:

Հարկավոր է չեզոքացնել իրավապահ մարմիններին չդիմելը պայմանավորող այնպիսի գործոնը, ինչպիսին է տուժողի կամ նրա մերձավորների ամոթի զգացումը: Այս առումով կարևոր է բնակչության շրջանում բացառական աշխատանքների իրականացումը նաև այն ուղղությամբ, որ անձնական տվյալները ենթակա են պաշտպանության, ինչն իր հերթին ենթադրում է համապատասխան տեղեկատվության տարածման արգելք:

Կարևոր նշանակություն ունի նաև վստահության հեռախոսակապից օգտվելու հնարավորության մասին իրազեկումը, որը թույլ կտա դիմել օգնության, ինչպես նաև ստանալ տեղեկատվություն ընտանեկան բռնության մասին:

Եզրակացություն

Ընտանեկան բռնությունը դասվում է այն հանցագործություններին, որոնք բնորոշվում են բարձր բնական լատենտայնությամբ: Դա պայմանավորող գործոններն են բնակչության իրավագիտակցության թերությունները, իրավապահ մարմինների հանդեպ ցածր վստահությունը, տուժողի՝ հանցավորի վրեժխնդրությունից վախը, ամոթի զգացումը և այլն: Ընտանեկան բռնության բնական

լատենտայնության պատճառական համալիրում ընդգրկված գործոնների նկատմամբ կանխարգելիչ ներգործության նպատակով առաջարկվում է իրականացնել բնակչության իրավագիտակցության, իրավապահ մարմինների հանդեպ վստահության մակարդակի բարձրացման և այլ միջոցներ:

Օգտագործված գրականության ցանկ

- Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին: ՀՕ-306-Ն: Միասնական կայք 2021.07.26–2021.08.08:
- Իսրայելյան, Գ.Վ., Հարությունյան, Ա.Ս. (2021). *Հայրենասիրական հանցավորության կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում*: Մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան, Ա.Ս. Հարությունյան. – Եր.: Հեղ. հրատ.: Իսրայելյան, Գ. (2008) Սեռական հանցագործությունների լատենտայնության հիմնախնդիրները // *Պետություն և իրավունք հանդես*: № 3, էջեր 47–53:
- Իսրայելյան, Գ. (2012). *Սեռական հանցագործությունները և դրանց կանխումը Հայաստանի Հանրապետությունում*: Մենագրություն: Երևան, Աստղիկ Գրատուն: Абдраманова, Н.К., Алауханов, Е.О. (2020). Латентность домашнего насилия в Республике Казахстан на современном этапе // *Вестник Томского государственного университета. Право*. № 38, էջեր 5–14:
- Израелян, Г. (2022) Проблемы предупреждения латентности траффкинга// *Оригиналы*, № 130, էջեր 3–6:
- Кривенцов П.А. (2014) *Латентная преступность в России: криминологическое исследование*. Дисс. ... канд. юрид. наук. Специальность 12.00.08 – уголовное право и криминология; уголовно–исполнительное право. Научный руководитель: кандидат юридических наук, доцент Королева М.В., Москва.

References

- Hayastani Hanrapetutyayn qreakan datavarutyayn orengirg [*Criminal Procedure Code of the Republic of Armenia*], yundunvel e 2021 tvakani hunisi 30-in. Miasnakan kayq 2021.07.26–2021.08.08:
- Israyelyan, G.V., Harutyunyan, A.S. (2021). *Latentayin hancavorutyayn kankhargelman ardi khndirner Hayastani Hanrapetutyaynum* [Current issues of latent crime prevention in the Republic of Armenia]: Menagrutyayn /G.V. Israyelyan, A.S. Harutyunyan. – Yer.: Hegh. hrat.:
- Israyelyan, G. (2008). Serakan hancagortsutyayneri latentaynutayn himnakhndirneri [Latency issues in sex crimes] // *Petutyayn ev iravunq handes*: № 3, ejer 47–53:
- Israyelyan, G. (2012). *Serakan hancagortsutyayneri ev dranc kanxumy Hayastani Hanrapetutyaynum* [Sexual crimes and their prevention in the Republic of Armenia]. Menagrutyayn: Yerevan, Astghik Gratun:
- Abdramanova, N.K., Alaukhanov, E.O. (2020). Latentnost domashnego nasiliya v Respublike Khazakhstan na sovremennom etape [Latency of domestic violence in the Republic of Kazakhstan at the present stage] // *Vestnik Tomskogo gosudarstvennogo*

universiteta. Pravo. № 38. С. 5–14.

Israyelyan, G. (2022). Problemy preduprezhdeniya latentnosti trafikinga [Trafficking Latency Prevention Problems] // *Օրինականություն*, № 130, ејер 3–6:

Kriventsov, P.A. (2014). *Latentnaya prestupnost v Rossii: kriminologicheskoe issledovanie* [Latent crime in Russia: a criminological study]. Diss. ... kand. yurid. nauk. Specialnost 12.00.08 – ugodovnoe pravo I kriminologiya; ugodovno–ispolnitelnoe pravo. Nauchniy rukovoditel: kandidat yuridicheskikh nauk, docent Koroleva M.V., Moskva:

Геворг Израелян

Начальник Научно–исследовательского центра прикладных проблем криминологии Национального бюро экспертиз Национальной академии наук Республики Армения, преподаватель Международного университета Евразия, кандидат юридических наук, доцент
Эл. адрес: gevorg.israelyan@eiu.am

Самсон Мхитарян

Социолог Научно–исследовательского центра прикладных проблем криминологии Национального бюро экспертиз Национальной академии наук Республики Армения, кандидат социологических наук
Эл. адрес: Mkhitaryans@yahoo.com

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ЕСТЕСТВЕННОЙ ЛАТЕНТНОСТИ СЕМЕЙНОГО НАСИЛИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Результаты исследования авторов показывают, что семейное насилие относится к числу преступлений, характеризующихся высокой естественной латентностью. Факторами, определяющими высокую естественную латентность семейного насилия, являются недостатки правосознания населения, низкий уровень доверия к правоохранительным органам, страх потерпевшего перед местью преступника, чувство стыда и т.д. С целью оказания предупредительного воздействия на факторы, входящие в причинный комплекс естественной латентности семейного насилия, авторы предлагают реализовать мероприятия просветительского, информативного, организационного характера. В частности, предлагается провести мероприятия, направленные на повышение уровня правосознания населения путем формирования в сознании людей потребности в обращении в компетентные органы по вопросам защиты своих прав. Также важное значение имеют меры по обеспечению повышения авторитета правоохранительных органов и доверия к ним, сотрудничества между населением и правоохранительными органами.

Ключевые слова: семейное насилие, естественная латентность, факторы, предупреждение.

Gevorg Israyelyan

*Head of the Scientific Research Center of Applied problems in criminology of
National Bureau of Expertise of National Academy of Sciences of the Republic of
Armenia,*

Lecturer of the Law Department at Eurasia International University,

Ph.D. in Law, Associate Professor,

Email: gevorg.israelyan@eiu.am

Samson Mkhitryan

*Sociologist of the Research Center applied problems of criminology
National Bureau of Expertise National Academy of Sciences of the Republic of
Armenia,*

Ph.D. in Sociology, Associate Professor

Email: Mkhitryans@yahoo.com

**SOME PROBLEMS OF PREVENTION OF NATURAL LATENCY OF
DOMESTIC VIOLENCE IN THE REPUBLIC OF ARMENIA**

The results of the authors' study show that domestic violence is one of the crimes characterized by a high natural latency. The factors that determine the high natural latency of domestic violence are the lack of legal awareness, a low level of trust in law enforcement agencies, the victims' fear of the criminal's revenge, a sense of shame and other factors. For the sake of preventing the factors included in the causal complex of natural latency of domestic violence, the authors propose to take educational, informative, and organizational measures. In particular, it is proposed to take measures aimed at increasing the level of legal awareness of the people by suggesting the necessity to apply to the competent authorities for protection of their rights. It is also crucial to take measures to increase the public's trust in law enforcement agencies and cooperation between people and law enforcement agencies.

Key words: domestic violence, natural latency, factors, prevention.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. մայիսի 3-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. մայիսի 4-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. մայիսի 25-ին:

Աննա Հովհաննիսյան

*ՀՀ Սահմանադրական դատարանի իրավախորհրդարկական վարչության
անհատական դիմումների վերլուծության բաժնի առաջատար մասնագետ,
Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի հայցորդ
էլ. հասցե՝ anna.hovhannisyan2210@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2023.1-26

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ԱԶԳԱՅԻՆ– ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Սույն հոդվածը նվիրված է անմեղության կանխավարկա-
ծի սկզբունքի ամրագրմանը առանձին պետությունների իրա-
վական համակարգերում: Մասնավորապես՝ անդրադարձ է
կատարվում անմեղության կանխավարկածի սկզբունքի սահ-
մանադրական ամրագրմանը Ռուսաստանի Դաշնության, Իս-
պանիայի Թագավորության, Ֆրանսիայի Հանրապետության,
մի շարք մուսուլմանական երկրների, Չինաստանի Ժողովր-
դական Հանրապետության և այլ երկրների օրենսդրություն-
ներում: Թեմայի ուսումնասիրության նպատակն է վեր հանել
առանձին պետությունների իրավական համակարգերում ան-
մեղության կանխավարկածի սկզբունքի գործողությունը, ու-
սումնասիրել այդ երկրներում այդ սկզբունքի կիրառելիությ-
ունը, վեր հանել այն երկրները, որտեղ անմեղության կան-
խավարկածի սկզբունքը չի գործում, կատարել համեմատա-
կան վերլուծություն և արդյունքում սահմանել անմեղության
կանխավարկածի հիմնական էությունը, կիրառման ոլորտը՝
ըստ առանձին պետությունների իրավական համակարգերի:
Ուսումնասիրության արդյունքները հնարավորություն կտան
առավել մանրամասն պատկերացում կազմել առանձին պե-
տություններում այդ սկզբունքի ամրագրման վերաբերյալ, ին-

չի արդյունքում կկարողանանք վեր հանել առանձին պետություններում դրա վերաբերյալ առկա կարգավորումների թերությունները և առավելությունները և դրանք տեղայնացնել ՀՀ ներպետական իրավական համակարգում:

Հիմնաբառեր: Անմեղության կանխավարկած, իրավական համակարգ, արտասահմանյան երկրներ, առանձին պետությունների իրավական համակարգեր:

Ներածություն

Ինչպես բազմիցս նշվել է, անմեղության կանխավարկածի սկզբունքը միջազգայնորեն ճանաչված սկզբունք է՝ ամրագրված միջազգային կարևորագույն իրավական ակտերում: Այդպիսի միջազգային փաստաթղթեր վավերացրած պետությունները ստանձնում են պարտականություն իրենց ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել այդ փաստաթղթերին: Հետևաբար՝ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ և սահմանել անմեղության կանխավարկածի սկզբունքը, ինչը և արվել է: Սույն հոդվածի շրջանակներում կուսումնասիրենք անմեղության կանխավարկածի սկզբունքի ամրագրումը առանձին պետությունների օրենսդրություններում: Հետազոտման արդյունքում մեր առջև բարձրացված խնդիրները հանգում են հետևյալին.

- վեր հանել այն պետությունները, որտեղ անմեղության կանխավարկածի սկզբունքը չի գործում, հայտնաբերել դրա պատճառները, ուսումնասիրել այն պետությունների շրջանակը, որտեղ անմեղության կանխավարկածի սկզբունքը լայն տարածում ունի,
- վեր հանել այդ սկզբունքի կիրառման ոլորտը, դրա վերաբերյալ կարգավորումներում առկա առավելությունները և թերությունները՝ ելնելով կոնկրետ պետության իրավական համակարգի առանձնահատկություններից, այն համեմատել ՀՀ ներպետական իրավական համակարգում ամրագրված անմեղության կանխավարկածի բովանդակության հետ:

Մեթոդ

Ուսումնասիրությունն իրականացվել է իրավահամեմատական, վերլուծական, համադրման, ինդուկցիայի և այլ մեթոդների հիման վրա:

Արդյունքներ

Անմեղության կանխավարկածի սկզբունքը ամրագրված է Ժամանակակից գրեթե բոլոր պետությունների իրավական համակարգերում: Ասվածը պայմանավորված է առավելապես այն հանգամանքով, որ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի», Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» վավերացումից հետո բոլոր պետությունները ստանձնում են պար-

տականություն իրենց Սահմանադրություններում մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ամրագրել առանձին գլխով, որոնցում իր ուրույն տեղը պետք է ունենա անմեղության կանխավարկածը: Այդպիսի պարտավորություն ստանձնած պետություններն իրենց ներպետական օրենսդրությունը համապատասխանեցրել են իրենց կողմից վավերացրած միջազգային փաստաթղթով/փաստաթղթերով սահմանված դրույթներին, սույն պարագայում՝ ամրագրել են անմեղության կանխավարկածի սկզբունքը և դրա տարրերը իրենց օրենսդրություններում և դատավարության ընթացքում ելնում են անձի՝ անմեղության կանխավարկածի սկզբունքից: Հայաստանի Հանրապետությունը ևս վավերացրել է այդ փաստաթղթերը և ներկայումս Սահմանադրության 2-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին, իսկ 66-րդ հոդվածը՝ անմեղության կանխավարկածի սկզբունքին: Այդպիսի պետություններ են նաև օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիայի Հանրապետությունը, Իսպանիայի Թագավորությունը, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը և այլն:

Այսպես՝ **Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության** 49-րդ հոդվածով սահմանվում է. «1. Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուրը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել դաշնային օրենքով նախատեսված կարգով և հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: 2. Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: 3. Անձի մեղավորության վերաբերյալ անհարկի կասկածները մեկնաբանվում են իրենց օգուտ մեղադրյալի»: Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքով ևս սահմանվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Մասնավորապես ՌԴ ՔԴՕ 14-րդ հոդվածով սահմանվում է. «1. Մեղադրյալը համարվում է անմեղ, քանի դեռ հանցանք կատարելու մեջ նրա մեղավորությունը չի ապացուցվել սույն օրենսգրքով նախատեսված կարգով և հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: 2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանությանն ուղղված փաստարկները հերքելու բեռը դրված է մեղադրանքի կողմի վրա: 3. Մեղադրյալի մեղավորության վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող վերացվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, մեկնաբանվում են իրենց օգուտ մեղադրյալի: 4. Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա» (Уголовно-процессуальный кодекс Российской Федерации, 2001): Համապատասխանաբար ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 1.5-րդ հոդվածով ամրագրված է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ իր մեջ ներառելով նաև դրա տարրերը: Հիշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «այն անձը, որի նկատմամբ վարվում է վարչական իրավախախտման գործով վարույթը, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենսգրքով նախատեսված կարգով՝ գործը քննած դատավորի, մարմնի, պաշտոնատար անձի օրինական ուժի մեջ մտած որոշ-

մամբ»: Միաժամանակ, նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանվում են անմեղության կանխավարկածի այնպիսի տարրեր, որպեսզին են՝ վարչական պատասխանատվության ենթակա անձը չպետք է ապացուցի իր անմեղությունը (որոշակի բացառություններով) կամ չփարատված կասկածները լուծվում են հոգուտ վարչական իրավախախտում կատարած անձի և այլն (Кодекс Российской Федерации об административных правонарушениях, 2001): ՌԴ հարկային օրենսգրքի կարգավորումներով ևս նախատեսված է անմեղության կանխավարկածի վերաբերյալ դրույթներ, մասնավորապես, նույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ. «Անձը համարվում է անմեղ հարկային իրավախախտման համար, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել դաշնային օրենքով նախատեսված կարգով: Պատասխանատվության ենթարկվող անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը հարկային իրավախախտման կատարման մեջ: Հարկային իրավախախտման փաստը և դրա կատարման մեջ անձի մեղավորությունը վկայող հանգամանքների ապացուցման պարտականությունը դրվում է հարկային մարմինների վրա: Պատասխանատվության ենթարկվող անձի մեղավորության կասկածները մեկնաբանվում են հոգուտ այդ անձի» (Налоговый кодекс Российской Федерации, 1988):

Անդրադառնալով **Իսպանիայի Թագավորությանը**, որը Եվրոպական անվտանգության և մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման համակարգի մեջ մտնող, մարդու իրավունքների մասին Եվրոպական կոնվենցիաների մասնակից պետությունների շարքին է դասվում, անհրաժեշտ է նկատել, որ Սահմանադրության մեջ քաղաքացիների իրավունքներին, ազատություններին և պարտականություններին նվիրված են զգալի թվով հոդվածներ, մասնավորապես, անձի իրավունքների դատական պաշտպանությունը սահմանված է Իսպանիայի Սահմանադրության 24-րդ հոդվածով: Այսպես, տվյալ հոդվածի 1-ին մասով նախատեսված է քաղաքացիների օրինական իրավունքներն ու շահերը դատարանի կողմից արդյունավետ պաշտպանելու իրավունքը, ընդ որում նման պաշտպանության մերժում չի թույլատրվում: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Հավասարապես յուրաքանչյուր ոք կարող է դատվել միայն օրենքով սահմանված դատարանի կողմից, ունենալ պաշտպանություն և փաստաբանական օգնությունից օգտվելու իրավունք, առաջադրված մեղադրանքների մասին իմանալու իրավունք, ունենալ բոլոր երաշխիքների պահպանմամբ սահմանված ժամկետներում իրականացվող բաց դատաքնության իրավունք, իր պաշտպանության բոլոր միջոցներից օգտվելու իրավունք, իր դեմ ցուցմունք չտալու, իրեն մեղավոր չճանաչելու իրավունք, անմեղության կանխավարկածի իրավունք» (Конституция Королевства Испании, 1978): Հիշյալ կարգավորումների բովանդակությունից բխում է, որ անմեղության կանխավարկածը չի բացահայտվում ոչ Սահմանադրությամբ, ոչ էլ քրեական օրենսդրությամբ: Անմեղության կանխավարկածը մասամբ բնութագրել է Իսպանիայի Սահմանադրական դատարանը 06.07.1995թ. թիվ 128 որոշման մեջ, որում նշել է այդ հասկացության երկակի բնույթը և այն սահմանել է ոչ միայն որպես դատավարական

կանոն, այլև որպես ենթադրյալ հանցագործի նկատմամբ հարգալից վերաբերմունքի կանոն, այսինքն՝ իսպանացի իրավաբանների հասկացության մեջ անմեղության կանխավարկածը անխզելիորեն կապված է անձի և նրա արժանիքների նկատմամբ հարգանքի սկզբունքի հետ (STC 128/1995 de 26 de julio): Չնայած այս պետությունը հստակ չի ամրագրում անմեղության կանխավարկածի սկզբունքը, այնուամենայնիվ այն կիրառվում է դատավարության ընթացքում: Այսպես՝ 1981թ. հունիսի 11-ին Իսպանիան ճանաչել է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պարտադիր իրավասությունը: Հետևաբար, իսպանացիները կարող են իրենց պետության նկատմամբ հայց ներկայացնել 1950թ.-ի Կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների խախտումների, դրան կից լրացուցիչ արձանագրությունների վերաբերյալ, ինչը հաստատվում է Իսպանիայի նկատմամբ ընդունված Եվրոպական դատարանի բազմաթիվ բողոքներով և նախադեպերով:

Ապացուցման բեռի տեսանկյունից այս պետությունում կանխավարկածն ակնհայտորեն համարվում է իրավական և կարող է հաղթահարվել միայն մեղադրող բնույթի ապացույցներ ձեռք բերելու միջոցով՝ անհրաժեշտ դատավարական երաշխիքներին համապատասխան: Ընդ որում՝ այստեղ, անմեղության կանխավարկածի սկզբունքից ելնելով, ապացուցման բեռն ընկնում է մեղադրանքի կողմի վրա (Vallejo, 2002, էջ 10) այնպես, ինչպես Հայաստանի Հանրապետությունում: Իսպանիայի Սահմանադրական դատարանի համաձայն՝ անմեղության կանխավարկածը, որպես ապացուցման կանոն, ենթադրում է, որ ապացուցման բեռն ընկնում է բացառապես մեղադրանքի կողմի վրա (Carballo Armas, 2004, էջ 109):

Իսպանիայում անմեղության կանխավարկածի վրա ազդում է, մի կողմից, դատավորների կողմից ապացույցների ազատ գնահատման սկզբունքը (Իսպանիայի Սահմանադրության 117.3-րդ հոդված և քրեական օրենսգրքի 741-րդ հոդված), մյուս կողմից, «*minima actividad probatoria*» սկզբունքը, որը հարմար է անմեղության կանխավարկածը հաղթահարելու համար և իրականացվում է սահմանադրական և արդար դատավարական երաշխիքների մանրակրկիտ պահպանմամբ (Իսպանիայի Սահմանադրական դատարանի 1981 թվականի հուլիսի 22-ի թիվ 84/1981 որոշում):

Ֆրանսիայի Հանրապետությունում անմեղության կանխավարկածը, առաջին հերթին, ամրագրված է 1789 թվականի Մարդու իրավունքների հռչակագրում: Վերջինս սահմանադրական նշանակություն ունի, քանի որ դրա մասին խոսվում է Սահմանադրության Պրեամբուլայում: Անմեղության կանխավարկածը այս պետությունում իր ամրագրումն է ստացել նաև քրեական դատավարության օրենսդրությամբ (Criminal Procedure Code of the French Republic, 1958). Այսպես՝ ցանկացած կասկածյալ կամ հետապնդվող համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը չի հաստատվել: Նրա անմեղության կանխավարկածի խախտումները հայտնաբերվում, կանխվում և ուղղվում են օրենքով նախատեսված պայմաններում: Ընդ որում՝ Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսդրությունում այդ դրույթը լրացվել է անմեղության

կանխավարկածի և տուժողների իրավունքների պաշտպանության ուժեղացման մասին օրենքով (Закон об усилении защиты презумпции невиновности и прав потерпевших, 2000): Ֆրանսիայում անմեղության կանխավարկածի սկզբունքին առանձնակի կարևորություն է տրվում և նույնիսկ երդվյալ ատենակալները իրենց երդման ժամանակ երդվում և խոստանում են հիշել, որ մեղադրյալը համարվում է անմեղ և, որ բոլոր կասկածները պետք է լուծվեն հոգուտ մեղադրյալի: Այստեղ անմեղության կանխավարկածի սկզբունքն առկա է նաև քաղաքացիական օրենսգրքում, մասնավորապես՝ օրենսգրքի 9-1-րդ հոդվածով սահմանվում է. «Յուրաքանչյուր ոք ունի անմեղության կանխավարկածը հարգելու իրավունք» (Гражданский кодекс Французской Республики, 1804): Սակայն անմեղության կանխավարկածը, մեր կարծիքով, պետք է կիրառվի հանրային պատասխանատվության ոլորտներում, որտեղ կողմերից մեկը պետությունն է՝ հանձինս իր պետական մարմինների, իսկ քաղաքացիական իրավունքում դրան հակառակ կիրառելի է մեղավորության կանխավարկածը: Ֆրանսիան նույնպես, չնայած քաղաքացիական օրենսգրքով անմեղության կանխավարկածի ամրագրմանը, չի կիրառում անմեղության կանխավարկածը քաղաքացիական օրենսդրությամբ: Անմեղության կանխավարկածի ամրագրման հիմնական պատճառն այն է, որ օրենսդիրը ցանկացել է անմեղության կանխավարկածի իրավունքը պաշտպանել տարատեսակ ոտնձգություններից (հիմնականում մամուլի ոտնձգություններից) ոչ միայն քրեական դատավարության նորմերի, այլ նաև քաղաքացիական պատժամիջոցների միջոցով, որոնք ավելացվում են գրպարտության համար քրեաիրավական պատժամիջոցներին (François, Fenouillet, 1996, էջ 85): Այսինքն՝ Ֆրանսիայում ևս անմեղության կանխավարկածը չի կիրառվում քաղաքացիական դատավարությունում, սակայն այդ սկզբունքի կարևորությամբ պայմանավորված դրա խախտման համար պատասխանատվություն է նախատեսված ոչ միայն քրեական օրենսդրությամբ, այլև քաղաքացիական:

Ֆրանսիայում ևս, ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքից, ապացուցման բեռն ընկնում է մեղադրանքի կողմի վրա, որը տրամադրում է կատարված քրեական իրավախախտման վերաբերյալ ապացույցներ, որպեսզի հաստատի բոլոր այն տարրերը, որոնք սահմանում են խախտումը և անարդարության ենթակա բոլոր տարրերի բացակայությունը (Кассационный суд Франции, уголовная палата, 24.03.1949, бюллетень решений кассационного суда): Ֆրանսիայում մեղադրող կողմը պետք է ներկայացնի ինչպես նյութական վնասի ապացույցներ, այնպես էլ կասկածյալի մեղավորության ապացույցներ:

Հարկ է նշել, որ Ֆրանսիայի իրավական համակարգում կան այնպիսի նորմեր, հանցակազմեր, որոնք բացառում են դրանց վրա անմեղության կանխավարկածի տարածումը և ապացուցման բեռը մեղադրանքի կողմի վրա ընկնելը: Այսպես՝ մարմնավաճառության օժանդակության մասով պատիժ է նախատեսվում նաև նրանց համար, ովքեր չեն կարող բացատրել, թե ինչ ռեսուրսներ են օգտագործում իրենց ապրելակերպը պահպանելու համար, եթե նրանք ապրում են կամ սովորական հարաբերություններ ունեն մարմ-

նավաճառությամբ զբաղվող մեկ կամ մի քանի մարդկանց հետ (Ouvrard, 2000): Մեկ այլ հանցակազմն է՝ քրեական օրենսգրքի 321–6–րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը, որը պատասխանատվություն է նախատեսում նրանց համար, ովքեր չեն կարող արդարացնել իրենց ապրելակերպին համապատասխան ռեսուրսները, կամ ի վիճակի չեն ապացուցել իրենց ունեցվածքի ծագումը, եթե նրանք սովորական հարաբերություններ ունեն հանցագործություններ կատարող մեկ կամ մի քանի անձանց հետ, որոնք պատժվում են առնվազն հինգ տարի ազատազրկմամբ (Daury-Fauveau, 2010):

Բացի այդ՝ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը, անդրադառնալով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տուգանք նշանակելու դեպքերին, նշել է, որ կանխավարկածը չի կարող բացարձակ լինել, և որ ամեն դեպքում օրենքը պետք է երաշխավորի պաշտպանության իրավունքները (Resolution of the Constitutional Council of France No. 99–411, 16.06.1999):

Այսպիսով՝ Ֆրանսիայի Հանրապետությունը ևս ճանաչում և երաշխավորում է անձի անմեղության կանխավարկածը, սակայն օրենսդրությանը հայտնի են այնպիսի դեպքեր, երբ անմեղության կանխավարկածը չի գործում՝ ելնելով կոնկրետ հանցակազմի տեսակից և բնույթից: Ընդ որում՝ այս երկրում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված է պատասխանատվություն անմեղության կանխավարկածի սկզբունքի չպահպանման համար:

Ի տարբերություն վերոգրյալ պետությունների **Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում** անմեղության կանխավարկածի վերաբերյալ օրենսդրի որդեգրած քաղաքականությունը էականորեն տարբերվում է թե՛ ՀՀ-ի և թե՛ ուսումնասիրված մյուս պետությունների քաղաքականությունից: Ներկայումս Չինաստանի Սահմանադրության 2–րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է քաղաքացիների հիմնական իրավունքներին և ազատություններին, սակայն չկա որևէ դրույթ անմեղության կանխավարկածի մասին (Конституция КНР, 1982): Պատճառը կայանում է նրանում, որ 2012–ում այն այլևս չի գործում սկսած 2004 թվականի սկզբից: Հարկ ենք համարում նշել, որ 2002թ. ապրիլի 1–ից Չինաստանի դատարանների մեծ մասում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Գերագույն դատարանի որոշմամբ չեղյալ է հայտարարվել անմեղության կանխավարկածի հիմնարար դատական սկզբունքը, որի համաձայն ամբաստանյալն անմեղ է համարվում այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով նախատեսված կարգով և հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան դատավճռով: 2012–ի Գերագույն դատարանը վճռել է, որ այժմ բոլոր մեղադրյալները, որոնք անցնում են այնպիսի գործերով, ինչպիսիք են բժշկական հանցագործությունները, արտոնագրային իրավունքի խախտումները, շրջակա միջավայրի աղտոտումը, մարդկանց և ընտանի կենդանիների վրա հարձակումները, պետք է դատարանին ապացուցեն իրենց անմեղությունը, հակառակ դեպքում նրանք մեղավոր կճանաչվեն: Չինացի իրավաբանները միաձայն պաշտպանում են երկրի Գերագույն դատարանի նոր որոշումը (В Китае отменена презумпция невиновности, 2002):

2005թ. մայիսի 23-ի նիստում Չինաստանի Գերագույն դատարանը նաև թույլատրել է որպես ապացույց օգտագործել այն ձայնագրությունները և տեսագրությունները, որոնք արվել են առանց մեղադրյալի իմացության, այդ թվում նրանք, որոնք ստացվել են անօրինական ձանապարհով (Доклад специалистов о ситуации прав и свобод человека в Китае для Совета Европы, 1999, էջ 26): Սակայն նման մոտեցումը ի սկզբանե քննադատվել է միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք մշտապես քննադատել են նաև 2017-ի կողմից մահապատիժների չարաշահումը (Rolholm, 1996, էջ 178): Իսկ Չինաստանն արդարանում է նրանով, որ իր արդարադատությունն Ասիական մշակույթի մի մասն է և պետք է լինի ինքնատիպ:

Միաժամանակ, կան շատ պետություններ, որտեղ հետազոտման առարկա խնդրի կապակցությամբ առկա են այլ մոտեցումներ ոչ միայն մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության իրավական դրույթների կանոնակարգման (Бутрос-Гали, 1995, էջ 10-11), այլև իրավական կատեգորիաների, դրանց իրականացման միջոցների և մեթոդների ըմբռնման և ամրապնդման հետ կապված (Cyprus v. Turkey, 4 Eur. H. R. Rep. 482, 537 (1982)): Վերոգրյալը հիմնականում վերաբերվում է *մուսուլմանական երկրներին*, որոնց իրավական համակարգը աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ: Ուստի, անհրաժեշտ է անդրադառնալ նաև այդպիսի պետություններին, նրանց իրավական համակարգին և անմեղության կանխավարկածի սկզբունքի ամրագրմանը այդ պետությունների իրավական համակարգում:

Մուսուլմանական երկրներում իրավունքի աղբյուր են համարվում Ղուրանը և Սուննան: Չնայած իր ժամանակակից տեսքով մուսուլմանական իրավունքը զգալի ազդեցության է ենթարկվում համամարդկային նորմերից և սկզբունքներից, սակայն այնտեղ գործում են նաև Ղուրանի, Սուննայի, Շարիաթի հատուկ կարգադրություններ, որոնք իրավական աղբյուրների հիերարխիայում համարվում են աշխարհիկ օրենքների վերևում կանգնած: Դա հատկապես հստակ արտահայտություն է ստացել այն երկրներում, որտեղ կիրառվում է ավանդական (ղասական) Մահմեդական իրավունքը (Իրան, Կատար, Օման, ԱՄԷ, Սաուդյան Արաբիա և այլն) (Абдалати, 1995, էջ 52): Այսպես, ըստ Ղուրանի, «... մարդը, ծնվելով, գտնվում է նախնական մաքրության վիճակում, կամ «ֆիտրա»-ում, ինչը նշանակում է «Իսլամ», կամ «հնազանդություն Ալլահի կամքին և օրենքին»» (Коран, 1990, էջ 30): Համուդ Աբդալաթին նշում է, որ «սկզբնական մեղքի կամ ժառանգած մեղավորության գաղափարը տեղ չունի իսլամի վարդապետության մեջ» (Абдалати, 1995, էջ 52), իսկ դրա հետ կապված մարդն ավելի հակված է բարու, քան չարի, իսկ դրա հետ կապված նա ի սկզբանե բարեխիղճ է, թեև, որպես էակ, հեռու է անկատարությունից, նա կարող է սխալներ գործել և նույնիսկ կարող է մեղք գործել (Мисроков, 2002, էջ 33-34):

Վերոգրյալի կապակցությամբ իրավացիորեն նշվում է, որ Իսլամական օրենսդրությունում հիմնական կանոն է համարվում հետևյալ դիրքորոշումը. մուսուլմանների գործողություններում միշտ ենթադրվում է բարեխիղճություն (իրավացիություն), քանի դեռ մյուսը, այսինքն՝ հակառակը չի հայտնաբերվել,

հրապարակվել և պատշաճ կերպով ապացուցվել դատարանում (Сюкияйнен, 2001, էջ 328): «Հիմնվելով այս որոշման վրա՝ դատավորը չի ենթադրում ոչ կեղծիք, ոչ դիտավորություն, ոչ մեղավորություն որևէ գործողության մեջ՝ առանց իրեղեն ապացույցների և ցուցմունքների վրա հիմնված ապացույցներ ներկայացնելու: (...)» (Мухьян, 1997, էջ 48):

Այսպիսով, Իսլամը հաստատել է անմեղության կանխավարկածը Արևմտյան երկրների օրենսդրությունում հաստատվելուց դեռևս 11 դար առաջ: Իսլամական իրավագիտության հիմքում ընկած է անմեղության կանխավարկածի սկզբունքը, որը նշանակում է, որ մարդը կարող է մեղավոր ճանաչվել միայն այն ժամանակ, երբ առկա են նրա կողմից հանցագործություն կատարելու անհերքելի ապացույցներ: Սակայն կան հանգամանքներ, որոնց դեպքում մարդը կասկածի տակ է ընկնում, չնայած որ նրա մեղքը դեռ ապացուցված չէ: Նման մարդը կասկածելի մեղադրյալ է, իսկ արաբերենով հնչում է «մուտահամ», ինչը «թուխման» կամ «թուխաման» բառն է, որը նշանակում է «կասկած» (Абдалати, 1995, էջ 55): Սակայն, քանի որ տվյալ անձի մասին կասկածներ կան, ուստի պետք է մտածել հանրությանը պաշտպանելու մասին՝ միաժամանակ չվերաբերվելով իր հետ որպես հանցագործի: Իսլամում կան երեք կատեգորիաների պատկանող անձինք և հենց այդ կատեգորիաներով էլ որոշվում է թե ինչպես պետք է վերաբերվել տվյալ անձին: Առաջին կատեգորիային են պատկանում այն անձինք, ովքեր լավ հայտնի են իրենց աստվածավախությամբ, ուստի նրանք դժվար թե հանցագործություն կատարեն: Երկրորդ կատեգորիան նրանք են, ովքեր հայտնի են իրենց ազատ կենսակերպով, իսկ երրորդը՝ մարդիկ են, որոնց մասին բավարար տեղեկատվություն չկա որևէ գնահատական տալու համար (Алексеев, 2002, էջ 29–30): Առաջին կատեգորիային պատկանող անձանց մեղադրելու համար անհրաժեշտ են ծանրակշիռ ապացույցներ: Երկրորդ և երրորդ կատեգորիայի անձանց դեպքում ևս առանց ապացույցների մեղքը հաստատված չի կարելի համարել, սակայն ապացույցներ հավաքելու համար նրանց կարելի է բանտարկել: Ընդ որում՝ մեղադրյալը պետք է ստանա անհրաժեշտ սնունդ, հագուստ, ինչպես նաև բժշկական օգնություն: Դա իրականացվում է հասարակության հաշվին: Մեղադրյալի տունը պետք է լինի նույնքան անձեռնմխելի, որքան ցանկացած այլ մարդու տունը, որը երաշխավորվում է Սահմանադրությամբ: Բացի այդ բոլոր կատեգորիաներին պատկանող անձանց մեղավորության վերաբերյալ ապացույցները չի կարելի ստանալ՝ խախտելով նրա իրավունքները (օրինակ՝ հետևելով նրան, կազմակերպելով տեսագրություն կամ ձայնագրություն, նրա տանը չթույլատրված խուզարկություն կազմակերպելով), քանի որ Սուրբ Դուրանում ասվում է. «...մի հետևեք, և թող ձեզանից ոմանք հայիոյեն ուրիշների աչքերի համար» (Коран, 1990, էջ 964): Շարիաթի համաձայն՝ մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք, այսինքն՝ կարող է բերել իր անմեղությունն ապացուցող կամ նրա դեմ ցանկացած մեղադրանք հերքող փաստարկներ, բայց նա չպետք է ապացուցի իր անմեղությունը: Ավելին, մեղադրյալին իր օգտին արտահայտվելու, ներկայացուցիչ ունենալու հնարավորություն տալը հասարակության և պետության

յան պարտականությունն է (Абдалати, 1995, էջ 83-84):

Հարկ է ներկայացնել ևս մի քանի պետություններ, որոնց օրենսդրությամբ ևս սահմանվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ որպես հիմնարար իրավունք: Այսպես՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանվում է. «Ոչ ոքի հանդեպ չվերաբերվել ինչպես հանցագործության մեղավորի, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել և հաստատվել դատարանի կամ արդարադատության հանրային մարմնի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, որը կայացվել է օրենքի պահանջներին համապատասխան իրականացված դատավարության արդյունքում» (Свод законодательства ФРГ, 1999, էջ 435): Գերմանիայում անմեղության կանխավարկածը անուղղակիորեն բխում է սահմանադրական պետության սկզբունքներից:

Ինչ վերաբերում է ապացուցման ընթացակարգին, ապա այստեղ գործում է հետաքննության սկզբունքը, որը դատավորին թույլ է տալիս համոզվել ռացիոնալության որոշակի սահմաններում՝ կապ չունենալով ստացված հայտարարությունների հետ (Juy-Burmahn, 2001): Մյուս կողմից, համարվում է, որ դատավորը, ամբաստանյալին դատապարտելու համար, ապացույցների ազատ գնահատման սկզբունքի համաձայն, պետք է համոզված լինի առանց որևէ կասկածի, քանի որ վերջինս հոգուտ ամբաստանյալի է (Крэй, 2007): Հետևաբար՝ այստեղ ապացուցման բեռը ոչ միայն ընկած է մեղադրանքի կողմի վրա, այլև՝ դատարանի, քանի որ տվյալ երկրում դատարանները կաշկանդված չեն գործում առկա ապացույցներով և նրանք առաջնորդվում են ճշմարտությունը փնտրելու սկզբունքով:

Չեխիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով ևս սահմանվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Այսպես՝ ըստ Չեխիայի քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ քանի դեռ օրինական ուժի մեջ մտած դատավճռով չի հաստատվել այն անձի մեղավորությունը կատարված հանցագործության մեջ, ում նկատմամբ դատավարություն է իրականացվում, նրան չի կարելի համարել մեղավոր (Criminal Procedure Code of the Czech Republic):

Անմեղության կանխավարկածի սկզբունքն ամրագրված է նաև Լեհաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, համաձայն դրա 5-րդ հոդվածի՝ մեղադրյալը չի համարվում մեղավոր, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով նախատեսված կարգով (Уголовно-процессуальный кодекс Республики Польша):

Քննարկում

Ակնհայտ է, որ ժամանակակից գրեթե բոլոր պետություններում գործում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Ուսումնասիրված պետություններից միայն ՉԺՀ-ն է, որտեղ բացարձակապես չի գործում անմեղության կանխավարկածը, և դրան ի հակադրություն գործում է մեղավորության կանխավարկածը: Կարծում ենք, որ Չինաստանի կողմից որդեգրված այդպիսի քաղաքականությունը առանձնանում է իր ինքնատիպությամբ, հաշվի առ-

ներով այդ երկրում քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված իրական խնդիրների լուծման առանձնահատկությունները:

Հետաքրքրական է նաև մուսուլմանական երկրների մոտեցումը, որտեղ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառվում է ինքնատիպ եղանակով: Մասնավորապես՝ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության և ուսումնասիրված մյուս պետությունների, այստեղ անմեղության կանխավարկածի սկզբունքը հավասարապես չի վերաբերում բոլոր անձանց, այլ որոշակի աստիճաններով է գործում: Վերջինս իրենից ենթադրում է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը տարբեր կատեգորիաների անձանց նկատմամբ կիրառվում է տարբեր կերպ, ինչը, մեր կարծիքով, ընդունելի չէ Հայաստանի Հանրապետության համար, քանի որ չի բխում իրավահավասարության սկզբունքից:

Ուսումնասիրված մյուս բոլոր պետություններում անմեղության կանխավարկածի սկզբունքը ամրագրված է միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ պետությունների որդեգրած քաղաքականությունը առավել մոտ է Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականությանը: Մասնավորապես՝ գրեթե բոլոր երկրներում անմեղության կանխավարկածը առաջին հերթին ամրագրված է տվյալ երկրում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտերում: Այսպես՝ Ռուսաստանի Դաշնությունում այն ամրագրված է, առաջին հերթին, ՌԴ Սահմանադրությամբ, Ֆրանսիայում՝ սահմանադրական նշանակություն ունեցող Մարդու իրավունքների հռչակագրում: Հայաստանի Հանրապետությունում անմեղության կանխավարկածի սկզբունքը ևս, առաջին հերթին ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ: Սակայն, օրինակ, Իսպանիայի Թագավորությունում անմեղության կանխավարկածի սկզբունքը բացահայտված չէ Սահմանադրությամբ, սակայն միևնույն է այն կիրառվում է:

Անդրադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքի առկայության պարագայում ապացուցման բեռի բաշխման հարցին, հարկ ենք համարում արձանագրել, որ ուսումնասիրված գրեթե բոլոր պետություններում այդ բեռը դրված է մեղադրանքի կողմի վրա: Այսպես՝ օրինակ՝ Ֆրանսիայի Հանրապետությունում, Իսպանիայի Թագավորությունում անձի՝ իրավախախտման կատարման մեջ մեղավորությունը ապացուցելու պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը, սակայն օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում բացի մեղադրանքի կողմից, ապացուցման բեռն ընկած է նաև դատարանների վրա, քանի որ տվյալ երկրում դատարանները հանդես են գալիս հոգուտ մեղադրյալի և կաշկանդված չեն գործում առկա ապացույցներով: Գտնում ենք, որ նման մոտեցումը արդարացված չէ, քանի որ դատարանները պետք է հանդես գան որպես անկախ, անկողմնակալ և անաչառ մարմին և չպետք է կաշկանդված լինեն դատավարության մասնակիցներով: Այս համատեքստում Ֆրանսիայի Հանրապետության և Իսպանիայի Թագավորության իրավակարգավորումները նույնանում են ՀՀ-ում գործող իրավակարգավորումների հետ, քանի որ երեք պետություններում էլ ապա-

ցուցման բեռն ընկած է մեղադրանքի կողմի վրա: Սակայն մեզ համար առավել ընդունելի է Գերմանիայի Դաշնային Հանրապետության այն մոտեցումը, համաձայն որի՝ դատարանները կաշկանդված չեն գործում առկա ապացույցներով և ինքնուրույն կարող են հավաքել ապացույցներ:

Հետաքրքրական է նաև Ֆրանսիայում առկա այն իրավակարգավորումը, համաձայն որի՝ կան այնպիսի իրավախախտումներ, հանցակազմեր, որոնց դեպքում չի գործում անմեղության կանխավարկածը և հանցավորը հենց ինքը պետք է ապացուցի իր անմեղությունը: Այս առումով Ֆրանսիայի քաղաքականությունը տարբերվում է Հայաստանի Հանրապետության քաղաքականությունից, քանի որ ՀՀ-ում անմեղության կանխավարկածի սկզբունքը քրեական դատավարությամբ ամրագրված բացարձակ սկզբունք է, որը տարածվում է քրեաիրավական բոլոր հանցակազմերի վրա:

Պետությունների մեծ մասում անմեղության կանխավարկածի սկզբունքը դասվում է ճյուղային սկզբունքների շարքին և կիրառվում է քրեադատավարական ոլորտում: Հայաստանի Հանրապետությունում ևս ներկայումս անմեղության կանխավարկածը հանդիսանում է քրեադատավարական սկզբունք: Սակայն, օրինակ, Ֆրանսիայի Հանրապետությունում անմեղության կանխավարկածի սկզբունքը ամրագրված է նաև քաղաքացիական օրենսգրքով, բայցևայնպես այն չի կիրառվում տվյալ ոլորտում, քանի որ տվյալ երկրում քաղաքացիաիրավական ոլորտում կիրառվում է մեղավորության կանխավարկածը: Իսկ քաղաքացիական օրենսգրքում տվյալ սկզբունքի ամրագրումը պայմանավորված է հետևյալով. անձը, ում անմեղության կանխավարկածը ոտնահարվել է կարող է դիմել դատարան՝ տվյալ իրավունքի պաշտպանության համար քաղաքացիաիրավական պատժամիջոցների միջոցով:

Վերոգրյալ հարցի շուրջ անհրաժեշտ է նկատել, որ առավել ընդունելի է Ռուսաստանի Դաշնության քաղաքականությունը: Տվյալ պետությունում անմեղության կանխավարկածն իր ամրագրումն է ստացել ոչ միայն Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսգրքով, այլև մի շարք այլ օրենքներով, ինչպիսիք են՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, Հարկային օրենսգիրքը: Այսինքն՝ ՌԴ-ում անմեղության կանխավարկածը կիրառվում է ոչ միայն քրեական դատավարությունում մեղադրյալի նկատմամբ, այլև հանրային իրավական պատասխանատվության այլ տեսակներում ևս իրավախախտի նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա՝ արդարացված է այն մոտեցումը, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի նեղ մեկնաբանությունից անհրաժեշտ է դուրս գալ՝ դրա կիրառման ոլորտը տարածելով հանրային իրավական պատասխանատվության այլ ոլորտների վրա ևս:

Այստեղից գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում ևս անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է կիրառվի հանրային պատասխանատվության բոլոր ոլորտներում:

Ուստի, գտնում ենք, որ Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված «հանցագործության համար մեղադրվողը» բառակապակցությունը էականորեն նեղացնում է այդ հոդվածի կիրառման ոլորտը՝ սահմանափակվե-

լով միայն քրեաիրավական և քրեադատավարական ոլորտներով: Վերոգրյալի կապակցությամբ առաջարկում ենք այդ սկզբունքի կիրառման ոլորտի լայնացումը առաջին հերթին սահմանել հենց ՀՀ Սահմանադրությամբ, ինչը նշանակում է, որ Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված «հանցագործության համար մեղադրվողը» բառակապակցությունն անհրաժեշտ է փոխարինել «հանրային իրավական պատասխանատվության ենթակա անձը» բառակապակցությամբ:

Եզրակացություն

Այսպիսով՝ վերոգրյալ ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝

1. գրեթե բոլոր երկրների օրենսդրությունները նախատեսում են անմեղության կանխավարկածի սկզբունքը և որը հանդիսանում է քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկը: Հետևաբար՝ ներկայիս քաղաքակիրթ աշխարհում քրեական դատավարության ընթացքում գրեթե բոլոր պետությունները ելնում են անձի անմեղության կանխավարկածից, քանի դեռ օրենքով սահմանված կարգով հակառակը չի ապացուցվել: Մեր կողմից ուսումնասիրված պետություններից բացառություն է կազմում միայն ՉԺՀ-ն, որտեղ ի հակադրություն մյուս պետությունների կիրառելի է անձի մեղավորության կանխավարկածը:

2. Բայցևայնպես, խոսք չի կարող լինել անմեղության կանխավարկածի սկզբունքի մեկ միասնական ընկալման մասին, քանի որ ներկայումս դեռևս հնարավոր չէ հասնել միասնական իրավական տարածքում բոլոր օրենքների համընկմանը: Վերջինս հիմնականում կախված է տվյալ երկրին բնորոշ մի շարք գործոններից, ինչպիսիք են՝ տնտեսության զարգացման մակարդակը, բնակչության ազգային կազմը, մշակութային ավանդույթները, զարգացման պատմական առանձնահատկությունները և այլ հանգամանքներ:

3. Սակայն պետությունների կողմից «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի», Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» և այլ միջազգային փաստաթղթերի վավերացմամբ ստանձնած միջազգային պարտավորությունները (մասնավորապես, իրենց ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել իրենց կողմից վավերացված միջազգային պայմանագրի դրույթներին, սույն պարագայում՝ իրենց Սահմանադրություններում մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ամրագրել առանձին գլխով, որոնցում իր ուրույն տեղը պետք է ունենա անմեղության կանխավարկածը) թույլ են տալիս նշել մեկ միասնական իրավական համակարգ ստեղծելու առաջընթացի մասին: Վերոգրյալը հաջողությամբ ստեղծվում է հատկապես եվրոպական տարածաշրջանային մի շարք կազմակերպությունների շրջանակներում, որտեղ իրավական նորմերի և սկզբունքների մերձեցումը տեղի է ունենում իրավունքի շատ ձյուղերում, և նման մերձեցման հիմքը մարդու իրավունքներն են, որոնք առավել հաջողությամբ զարգանում են Եվրոպայի Խորհրդի շրջանակներում պետություն-

ների համագործակցությամբ (Bayles M. D. Principles of law. A normative analysis, Law and philosophy library, 1987 – էջ 178):

4. Առաջարկվում է դուրս գալ անմեղության կանխավարկածի մեկնաբանության նեղ շրջանակներից և վերջինիս գործողությունը տարածել հանրային իրավական պատասխանատվության այլ ոլորտներում ևս: Այդ կապակցությամբ առաջարկվում ենք առաջին հերթին փոփոխություն մտցնել ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածում առկա իրավակարգավորման մեջ: Մասնավորապես՝ առաջարկվում է Սահմանադրության 66-րդ հոդվածով սահմանված «հանցագործության համար մեղադրվողը» բառակապակցությունը փոխարինել «հանրային իրավական պատասխանատվության ենթակա անձը» բառակապակցությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

Իսլամի հայտնի Սահմանադրական դատարանի 1981 թվականի հուլիսի 22-ի թիվ 84/1981 որոշում:

Абдалати, Х. (1995). *Взгляд на ислам.* / пер. С.И. Жемкова. Новосибирск

Алексеев, И.Л. (2002). Некоторые особенности исторической эволюции и политико-правового ислама и мусульман в Российской империи к XIX – началу XXв.: К вопросу о взаимовлиянии цивилизационных логик в российской истории // *Религиоведение*, Санкт-Петербург, № 2, էջ 29-30:

Бутрос-Гали, Б. (1995). *Организация Объединенных Наций и права человека*, Москва, информационный центр ООН, էջ 10-11:

В Китае отменена презумпция невиновности, վերցված է rbc.ru կայքից/ <https://www.rbc.ru/society/03/04/2002/5703b9e79a7947afa08c6dbc> (մուտք՝ 10.05.2023)

Гражданский кодекс Французской Республики, Кодекс Наполеона, 21.03.1804.

Доклад специалистов о ситуации прав и свобод человека в Китае для Совета Европы, ЕС/CN.9/1999/PC/3/Dir. 83, էջ 26:

Закон об усилении защиты презумпции невиновности и прав потерпевших, Закон № 2000-516, Франция, 15.06.2000:

Кассационный суд Франции, уголовная палата, 24.03.194. *Бюллетень решений кассационного суда.*

Кодекс Российской Федерации об административных правонарушениях, 20.12.2001 <https://docs.cntd.ru/document/901807667>

Конституция КНР (В редакции 2018г.) 04.12.1982 <https://chinalaw.center/constitutional-law/china-constitution-revised-2018-russian/>

Конституция Королевства Испании (1978). Посольство Испании в Российской Федерации <http://vivovoco.astronet.ru/VV/LAW/SPAIN.HTM>

Конституция РФ, 12.12.1993 <http://www.constitution.ru/>

Коран (1990), Москва, էջ 30:

Крэй, В. (2007). *Социальная Психология*. Немецкое уголовно-процессуальное право. Основные слушания, право доказывания, судебные решения, понятие дела, юридическая сила и средства правовой защиты. Штутгарт:

Мисроков, З. (2002). Особенности формирования уголовно-правовой политики на

- Северном Кавказе// *Законность*. Москва, № 10, էջ 33–34:
- Мушкян, С.В. (1997). Мысли, мысли, мысли... // *Мысль*. № 6, էջ 48:
- Налоговый кодекс Российской Федерации*, 16.07.1988 http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19671/ :
- Свод законодательства ФРГ* (1999). Москва, Наука, էջ 435:
- Сюкияйнен, Л. (2001). Шариатское правосудие. *Теоретические основы и практика*. էջ 328:
- Уголовно-процессуальный кодекс Республики Польша* https://legislationline.org/sites/default/files/documents/f6/Polish%20CPC%201997_am%202003_en.pdf
- Уголовно-процессуальный кодекс Российской Федерации*, 18.12.2001 http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/50cc4ba5b9174a79ff3a7c8fe091ae_d08316c8f9/
- Bayles, M. D. (1987). *Principles of law*. A normative analysis, Law and philosophy library, էջ 178:
- Criminal Procedure Code of the Czech Republic*, 1997 https://sherloc.unodc.org/cld/uploads/res/document/cze/code-of-criminal-procedure-of-the-czech-republic_html/Code_of_Criminal_Procedure_of_the_Czech_Republic.pdf
- Cyprus v. Turkey*, 4 Eur. H. R. Rep. 482, 537 (1982).
- Criminal Procedure Code of the French Republic*, 1958.
- Rolholm, D. J. (1996). *Justice and Constitutional Law: new sides of influence*. New York, էջ 178:
- Resolution of the Constitutional Council of France*, No. 99-411, 16.06.1999.
- Daurý-Fauveau, M. (2010). *Infractions assimilées au recel*. Non-justification de ressources et facilitation de la justification de ressources fictives. Juris Classeur Pénal.
- François, T., Fenouillet D. (1996). *Droit civil. Les personnes, la famille, les incapacités*. 7e edition. Paris. Dalloz.
- Ouvrard, L. (2000). La prostitution. Analyse juridique et choix de politique criminelle. Paris.
- Carballo Armas, P. (2004). *La presuncion de inocencia en la jurisprudencia del Tribunal Constitucional*. Madrid.
- STC 128/1995 de 26 de julio // *Boletin Oficial del Estado*. 1995. № 200.
- Vallejo, J. (2002). *Tendencias actuales de la Jurisprudencia Constitucional Penal*. Madrid.
- Juy-Burmann, R. (2001). Il processo penale in Germania. In M. Chiavario (Ed.), *Procedure penali d'Europa* (pp. 180 et seq.). Padova.

References

- Ispaniayi Sahmanadrakan datarani 1981 tvakani hulisi 22-i tiv 84/1981 voroshum* [Decision No. 84/1981 of July 22, 1981 of the Constitutional Court of Spain]. (In Arm.)
- Abdalati, Kh. (1995), Vzglyad na islam [A look at Islam] / per. S.I. Zhemkova. Novosibirsk* (In Rus.)
- Alekseev, I.L. (2002). Nekotorye osobennosti istoricheskoy evolyutsii i politiko-pravovogo islama i musulman v Rossiyskoy imperii k XIX – nachalu XXv.: K voprosu o vzaimovliyaniy tsivilizatsionnykh logik v rossiyskoy istorii* [Some features of the Historical Evolution and Political-Legal Islam and Muslims in the Russian Empire by

- the XIX – early XX Centuries: On the question of the mutual influence of civilizational logics in Russian History // *Religiovedenie, Sankt-Peterburg*, № 2] (In Rus.)
- Butros-Gali, B.* (1995). *Organizatsiya Obedinennykh Natsiy i prava cheloveka* [The United Nations and human rights], Moskva, informatsionnyy tsentr OON (In Rus.)
- V Kitae otmenena prezumpsiya nevinovnosti* [The presumption of innocence has been abolished in China] <https://www.rbc.ru/society/03/04/2002/5703b9e79a7947a-fa08c6dbc>(accessed: 10.05.2023) (In Rus.)
- Grazhdanskiy kodeks Frantsuzskoy Respubliki*, Kodeks Napoleona [The Civil Code of the French Republic, The Code of Napoleon] 21.03.1804 (In Rus.)
- Doklad spetsialistov o situatsii prav i svobod cheloveka v Kitae dlya Soveta Evropy* [Report of experts on the situation of human rights and freedoms in China for the Council of Europe], ES/CN.9/1999/PC/3/Dir. 83 (In Rus.)
- Zakon ob usilenii zashchity prezumpsii nevinovnosti i prav poterpevshikh, Zakon № 2000–516*, Frantsiya, 15.06.2000 [Law on Strengthening the Protection of the Presumption of innocence and the Rights of Victims, France] (In Rus.)
- Kassatsionnyy sud Frantsii, ugolovnaya palata*, 24.03.194. Byulleten resheniy kassatsionnogo suda. [Court of Cassation of France, Criminal Chamber, 24.03.194. Bulletin of decisions of the Court of Cassation] (In Rus.)
- Kodeks Rossiyskoy Federatsii ob administrativnykh pravonarusheniyakh* [Code of Administrative Offences of the Russian Federation] <https://docs.cntd.ru/document/901807667> (In Rus.)
- Konstitutsiya KNR* [Constitution of People's Republic of China] (V redaktsii 2018g.) 04.12.1982 https://chinalaw.center/constitutional_law/china_constitution_revised_2018_russian/ (In Rus.)
- Konstitutsiya Korolevstva Ispanii* [Constitution of the Kingdom of Spain] (1978). Posol'stvo Ispanii v Rossiyskoy Federatsii <http://vivovoco.astronet.ru/VV/LAW/SPAIN.HTM> (In Rus.)
- Konstitutsiya RF* [Constitution of the Russian Federation], 12.12.1993 <http://www.constitution.ru/> (In Rus.)
- Koran* (1990), [Koran] Moskva (In Rus.)
- Krey, V.* (2007). *Sotsialnaya Psikhologiya. Nemetskoe ugolovno–protsessualnoe pravo. Osnovnye slushaniya, pravo dokazyvaniya, sudebnye resheniya, ponyatie dela, yuridicheskaya sila i sredstva pravovoy zashchity* [Social Psychology. German criminal procedure law. Main hearings, the right of proof, court decisions, the concept of the case, legal force and remedies]. Shtutgart. (In Rus.)
- Misrokov, Z.* (2002). *Osobennosti formirovaniya ugolovno–pravovoy politiki na Severnom Kavkaze* [Features of the formation of criminal law policy in the North Caucasus] // *Zakonnost*. Moskva, № 10 (In Rus.)
- Mushkyan, S.V.* (1997). *Mysli, mysli, mysli...* [Thoughts, thoughts, thoughts...] // *Mysl*. № 6 (In Rus.)
- Nalogovyy kodeks Rossiyskoy Federatsii* [Tax Code of the Russian Federation], 16.07.1988 http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19671/ (In Rus.)

- Svod zakonodatelstva FRG* [The Code of Legislation of the Federal Republic of Germany] (1999). Moskva, Nauka (In Rus.)
- Syukiyaynen, L. (2001). *Shariatskoe pravosudie. Teoreticheskie osnovy i praktika* [Sharia justice. Theoretical foundations and practice] (In Rus.)
- Ugolovno–protseessual’nyy kodeks Respubliki Pol’sha* [Code of Criminal Procedure of the Republic of Poland]https://legislationline.org/sites/default/files/documents/f6/Pol-ish%20CPC%201997_am%202003_en.pdf (In Rus.)
- Ugolovno–protseessualnyy kodeks Rossiyskoy Federatsii* [Criminal procedure code of the Russian Federation], 18.12.2001
- http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/50cc4ba5b9174a79ff3a7c8fe-091aed08316c8f9/ (In Rus.)
- Bayles, M. D. (1987). *Principles of law*. A normative analysis, Law and philosophy library (In Eng.)
- Criminal Procedure Code of the French Republic*, 1958. (In Eng.)
- Cyprus v. Turkey, 4 Eur. H. R. Rep. 482, 537 (1982). (In Eng.)
- Criminal Procedure Code of the Czech Republic, 1997* https://sherloc.unodc.org/cld/uploads/res/document/cze/code-of-criminal-procedure-of-the-czech-republic_html/Code_of_Criminal_Procedure_of_the_Czech_Republic.pdf (In Eng.)
- Rolholm, D. J. (1996). *Justice and Constitutional Law: new sides of influence*. New York, 178 (In Eng.)
- Resolution of the Constitutional Council of France*, No. 99–411, 16.06.1999. (In Eng.)
- Daury–Fauveau, M. (2010). *Infractions assimilées au recel*. Non–justification de ressources et facilitation de la justification de ressources fictives. Juris Classeur Pénal. [Offences assimilated to concealment. Non–justification of resources and facilitation of the justification of fictitious resources] (in Fr.)
- François, T., Fenouillet D. (1996). *Droit civil. Les personnes, la famille, les incapacités*. 7e edition. Paris. Dalloz. [Civil law. People, family, disabilities. 7th edition] (in Fr.)
- Ouvrard, L. (2000). *La prostitution. Analyse juridique et choix de politique criminelle*. Paris. [Prostitution. Legal analysis and choice of criminal policy] (in Fr.)
- Carballo Armas, P. (2004). *La presuncion de inocencia en la jurisprudencia del Tribunal Constitucional*. Madrid. [The presumption of innocence in the jurisprudence of the Constitutional Court] (In Sp.)
- STC 128/1995 de 26 de julio // *Boletin Oficial del Estado*. 1995. № 200. [STC 128/1995 of July 26 // Official State Bulletin. 1995. № 200] (In Sp.)
- Vallejo, J. (2002). *Tendencias actuales de la Jurisprudencia Constitucional Penal*. Madrid. [Current Trends in Criminal Constitutional Jurisprudence] (In Sp.)
- Juy–Burmman, R. (2001). Il processo penale in Germania. In M. Chiavario (Ed.), *Procedura penali d’Europa* (pp. 180 et seq.). Padova. [The criminal trial in Germany. In M. Chiavario (Ed.), *Criminal Procedures of Europe* (pp. 180 et seq.). Padua] (in It.)

Анна Оганесян

*Ведущий специалист отдела анализа индивидуальных обращений
Правового консультативного управления Конституционного суда РА,
Соискатель кафедры права Европейского университета
Эл. адрес: Anna.hovhannisyan2210@gmail.com*

ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В НАЦИОНАЛЬНОЙ ПРАВОВОЙ СИСТЕМЕ: МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ПРАВОВОЙ ФИКСАЦИИ

Данная статья посвящена закреплению принципа презумпции невиновности в правовых системах отдельных государств. В частности, делается ссылка на закрепление принципа презумпции невиновности в законодательстве Российской Федерации, Королевства Испании, Французской Республики, ряда мусульманских стран, Китайской Народной Республики и других стран. Цель изучения темы – осветить действие принципа презумпции невиновности в правовых системах отдельных государств, изучить применимость этого принципа в этих странах, выделить страны, где принцип презумпции невиновности не действует, провести сравнительный анализ и в результате определить основную сущность презумпции невиновности и область её применения по отдельным правовым системам государств. Результаты исследования дадут более детальное представление об определении этого принципа в отдельных государствах, в результате чего мы сможем выделить недостатки и преимущества существующих нормативных актов о нем в отдельных государствах и локализовать их во внутригосударственной правовой системе Республики Армения.

Ключевые слова: Презумпция невиновности, правовая система, зарубежные страны, правовые системы отдельных государств.

Anna Hovhannisyan

*Leading specialist of the Individual Complaints Analysis Division
in Legal Advisory Department of the Constitutional Court of the Republic of
Armenia, Ph.D. student of Law at the European University
Email: Anna.hovhannisyan2210@gmail.com*

PRESUMPTION OF INNOCENCE IN THE NATIONAL LEGAL SYSTEM: INTERNATIONAL EXPERIENCE OF LEGAL FIXATION

This article is dedicated to stipulating the principle of presumption of innocence in the legal systems of individual states. In particular, reference is made to fixing the principle of presumption of innocence in the legislation of the Russian Federation, the Kingdom of Spain, the French Republic, a number of Muslim countries, the People's Republic of China and other countries. The purpose of the study of the topic is to highlight the operation of the principle of the presumption

of innocence in the legal systems of individual states, to study the applicability of this principle in those countries, to spot the countries where the principle of the presumption of innocence does not work, to perform a comparative analysis and as a result to define the main essence of the presumption of innocence and the field of its application according to internal legal systems of certain states. The results of the study will provide a more detailed understanding of the determination of this principle in certain states, as a result of which we will be able to highlight the shortcomings and advantages of the existing regulations regarding it in individual states and localize them in the domestic legal system of the Republic of Armenia.

Key words: Presumption of innocence, legal system, foreign countries, legal systems of individual states.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. ապրիլի 7-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. ապրիլի 12-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. մայիսի 10-ին:

Անդրանիկ Սիմոնյան
Հայ-Ռուսական համալսարանի հայցորդ
Էլ. հասցե՝ simonyan21@gmail.com

DOI: 10.53614/18294952-2023.1-45

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հոդվածը նվիրված է օպերատիվ-հետախուզական գործունեության (այսուհետ՝ ՕՀԳ) արդյունքների դերի և նշանակության, դրա կիրառման հնարավորությունների և ուղղությունների սահմանմանն ու վերլուծությանը: Ուսումնասիրելով քննարկվող հարցի վերաբերյալ մասնագիտական գրականությունում առկա մոտեցումները, ինչպես նաև եզրակացնելով, որ ՕՀԳ արդյունքների օգտագործման հիմնական ուղղությունները բխում են օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներից ու խնդիրներից և հիմնված են այդ գործունեության սկզբունքների վրա, սույն հոդվածով առաջարկվում է ՕՀԳ արդյունքների օգտագործման հիմնական ոլորտների դասակարգման համապարփակ և տրամաբանական տարբերակ, որը թեև սպառիչ չէ, բայց նայնպես բխում է օրենքի պահանջներից և ունի գործնական նշանակություն:

Ելնելով ՕՀԳ արդյունքների օգտագործման հետ կապված օրենսդրական նորմերի վերլուծության արդյունքներից՝ կարող ենք եզրակացնել, որ այդ արդյունքների օգտագործման արդյունավետության բարձրացման կարևոր ուղղություն պետք է համարել օպերատիվ տեղեկատվության հավաքագրումը, համակարգումը և վերլուծությունը, այլ կերպ ասած՝ օպերատիվ տեղեկատվական բազայի ստեղծումը:

Վերջիններիս հնարավորությունները հավասարապես կարող են օգտագործվել ինչպես հանցագործությունների բացահայտման, այնպես էլ դրանց կանխման, վերացման ու բացա-

հայտման գործընթացներում, ինչպես նաև ՕՀԳ իրականացնող մարմինների առջև ծառացած այլ խնդիրների լուծման համար:

Ամփոփելով՝ կատարվել է հետևյալ եզրահանգումը, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման ուղղությունները, դրանց օգնությամբ լուծված խնդիրները բազմազան են և բխում են օպերատիվ-հետախուզական գործունեության ընդհանուր նպատակներից և քրեական դատավարությունից:

Հիմնաբառեր. օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունք, քրեական վարույթ, քրեադատավարական իրավական նորմեր, նախաքննության մարմին, օպերատիվ տեղեկատվություն:

Ներածություն

Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետությունն էապես պայմանավորված է դրա արդյունքների ճիշտ և նպատակային օգտագործման հնարավորություններով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ գործունեության արդյունքները ստացվում և ձևավորվում են ՕՀԳ նպատակներին, խնդիրներին ու սկզբունքներին համապատասխան, դրանց օգտագործումը ևս պետք է լինի նպատակային: ՕՀԳ արդյունավետության ապահովման տեսանկյունից առավել կարևորվում է դրա արդյունքների օգտագործման ուղղությունների ձգքստումն ու բացահայտումը: Այս հարցում մասնագիտական գրականությունում առկա է երկու տարբեր տեսակետ: Որոշ գիտնականներ և պրակտիկ մասնագետներ կարծում են, որ օպերատիվ-հետախուզական գործունեության բնույթն ու նպատակը ուղղված են հանցավորության դեմ պայքարին, և որպես այդպիսին դրա իրականացման ողջ գործընթացը պետք է սահմանափակվի միայն այս խնդրի լուծմամբ: Ի հակադրումն դրան, օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներն ու խնդիրներն առավել լայն մեկնաբանման կողմնակիցները իրավացիորեն պնդում են, որ օպերատիվ միջոցառումների իրականացման պրակտիկան ցույց է տալիս, որ ստացված արդյունքների օգտագործման հնարավորություններն ավելի լայն են: ՕՀԳ-ի իրականացման արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը կարող է օգտագործվել ոչ միայն քրեական, այլև տարբեր իրավախախտումներ կանխելու և դրանց կատարման համար պատասխանատուներին պատժելու, կառավարչական որոշումներ կայացնելու, անհայտ կորածների որոնման, ինչպես նաև հանցավոր գործունեության հետ կապ չունեցող մի շարք խնդիրներ լուծելու համար: Բայցևայնպես ՕՀԳ-ի արդյունքների օգտագործման հարցն առավել քննարկվում է քրեական դատավարությունում, քանի որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացուցման մեջ օգտագործելու հնարավորության և թույլատրելի սահմանների հարցը դեռևս բաց է և շատ արդիական: Մեր կարծիքով, այս խնդրի լուծման ուղիները գտնելու համար անհրաժեշտ է նախևառաջ դիտարկել և հասկանալ այդ իրավահարաբերությունների էությունը և դրանց սահմանումը:

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել ՕՀԳ-ի արդյունքների դերն ու նշանակությունը, ինչպես նաև դրանց օգտագործման հեռանկարների բացահայտումն ու վերլուծությունը քրեական դատավարությունում:

Մեթոդ

Հոդվածում քննարկվող հարցի վերլուծությունն իրականացվել է մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների վերլուծություն՝ հաշվի առնելով տեղի ունեցած փոփոխությունները: Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման ուղղությունները ձգգրտելու և բացահայտելու համար կիրառվել են նաև նորմատիվ իրավական ակտերի ֆորմալ իրավական վերլուծության և համակարգակառուցվածքային մեթոդները:

Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման ուղղությունները

Որպեսզի ապահովվի քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների դատական հեռանկարները, առաջնային նշանակություն է ստանում գործունեության այդ տեսակի կիրառման արդյունքում ստացված տեղեկությունների ձեռք բերման կապակցությամբ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված իրավաչափության մի շարք պայմանների ապահովումը:

Մասնագիտական գրականության մեջ խնդրո առարկային անդրադարձել են մի շարք հեղինակներ: Մասնավորապես Ս.Պ. Բալանյանն առանձնացնում է քրեական դատավարությունում ՕՀԳ արդյունքների օգտագործման հետևյալ հիմնական ուղղությունները.

- «որպես առիթ և հիմք քրեական վարույթ նախաձեռնելու համար,
- քննչական ու վարույթային գործողությունների նախապատրաստման և իրականացման համար,
- քրեական վարույթով ապացուցման գործընթացում,
- քրեական դատավարության այլ խնդիրների լուծման համար» (Բալանյան, 2017, էջ 233):

Հատկանշական է, որ ռուս հեղինակները հիմնականում ՕՀԳ արդյունքների օգտագործման ուղղությունները նշելիս հիմնվում են ՕՀԳ մասին ՌԴ օրենքի 11-րդ հոդվածի դրույթների վրա (Маркушин, 2013, էջ 260-261, «Теория оперативно-розыскной деятельности», 2008, էջ 553):

Այդուհանդերձ ՕՀԳ արդյունքների օգտագործման հիմնական ուղղություններն ածանցվում են ՕՀԳ նպատակներից, խնդիրներից և հիմնվում են ՕՀԳ սկզբունքների վրա: Վերոգրյալը նկատի ունենալով՝ ՕՀԳ արդյունքների օգտագործման հիմնական ուղղությունները կարելի դասակարգել հետևյալ կերպ.

- հանցագործությունները ծնող պատճառների և դրանց կատարմանը նպաստող պայմանների հայտնաբերում և վերացում (կանխարգելում՝ ընդհանուր և մասնավոր),

- նախապատրաստվող, կատարվող և կատարված հանցագործությունների հայտնաբերում, կանխում, խափանում և բացահայտում,
- հանցագործություններ նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց, ինչպես նաև նախաքննությունից, դատաքննությունից և պատժի կրումից խուսափող անձանց հայտնաբերում,
- անհայտ կորած անձանց հետախուզում և հայտնաբերում,
- քրեական վարույթներով վկաների, հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և փաստաթղթերի հետախուզում և հայտնաբերում,
- ազգային անվտանգության ապահովում (երկրի անվտանգության արտաքին և ներքին սպառնալիքների, ռազմական, տնտեսական, էկոլոգիական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների հայտնաբերում և չեզոքացում),
- հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց և օբյեկտների անվտանգությանն ուղղված սպառնալիքների հայտնաբերում և չեզոքացում,
- տնտեսական և կոռուպցիոն հանցավորության, ապօրինի ծագում ունեցող գույքի հետ կապված, տնտեսական մրցակցության բնագավառում հանցավորության և այլ իրավախախտումների հայտնաբերում, կանխում և խափանում,
- պետական գաղտնիքի պահպանություն, սահմանային և այլ վարչաիրավական ռեժիմների խախտումների հայտնաբերում, կանխում և խափանում,
- ազգային անվտանգության և ոստիկանության մարմիններում, ինչպես նաև այլ պետական մարմիններում աշխատանքի անցնելու դիմում ներկայացրած անձանց ուսումնասիրում, օրենքով նախատեսված դեպքերում նրանց բարեվարքության ստուգում:

Հարկ է նշել, որ ՕՀԳ արդյունքների օգտագործման վերը ներկայացված հիմնական ուղղությունների արդյունքները քննիչի դասակարգումը թեև սպառիչ չէ, սակայն այն բխում է օրենսդրության պահանջներից և ունի գործնական նշանակություն:

Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հնարավորությունները քրեական դատավարությունում և հանցագործությունների կանխման գործում

ՕՀԳ արդյունքների օգտագործման հիմնական ուղղությունների շարքում, *inter alia*, առավել ընդգծվում է քրեական վարույթի ընթացքում ՕՀԳ արդյունքների օգտագործման հարցը, որի վերաբերյալ հիմնախնդիրների ուսումնասիրումն առավել, քան հրատապ է:

Նախ և առաջ ՕՀԳ արդյունքները քննիչի կողմից օգտագործվում են որպես առիթ և հիմք քրեական վարույթ նախաձեռնելու համար: Այդ կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ արմատավորված կարծիքն առ այն, որ «քրեական գործ հարուցելու հարցը լուծելու համար ներկայացվող ՕՀԳ արդյունքները պետք է պարունակեն հանցագործության հատկանիշ-

ների մասին վկայող բավարար տվյալներ, մասնավորապես՝ որտեղ, երբ, որ հանցագործության ինչպիսի հատկանիշներ են հայտնաբերվել, ինչ հանգամանքներում...» («Теория оперативно-розыскной деятельности», 2018, էջ 507-508): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 173-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քննիչն իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը ստացվել է՝

1) ֆիզիկական անձից,

2) իրավաբանական անձից,

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից՝ նրա գործունեության իրականացման կապակցությամբ,

4) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնից, քննիչից, դատախազից կամ դատավորից՝ իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել ՀՀ ՔՕ-ով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը հանցագործության մասին ներկայացվող հաղորդման բովանդակության կապակցությամբ արդեն արտահայտել է իրավական դիրքորոշում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում արձանագրել է, որ հանցագործության մասին հաղորդումը քրեական գործ հարուցելու համար առիթ դառնալու համար պետք է պարունակի տեղեկություն նախապատրաստվող կամ կատարված կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող, այլ ոչ թե ցանկացած տվյալների առկայության մասին (ՀՀ վճռաբեկ դատարանի № ՎԲ-133/07, № ԵԿԴ/0118/11/13 և № ԵԿԴ/0154/11/14 որոշումներ):

Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման վերլուծությունից հետևում է, որ ներկայիս քրեադատավարական իրավակարգավորումների համատեքստում քննիչի կամ դատախազի կողմից հանրային քրեական վարույթ կարող է նախաձեռնվել այն պարագայում, երբ ներկայացված հաղորդման բովանդակությունը պարունակում է առերևույթ հանցագործության հատկանիշների վերաբերյալ տեղեկություններ, ընդ որում՝ այն ծավալով, որպեսզի հնարավոր լինի նկարագրված արարքին տալ նախնական իրավական գնահատական: Հակառակ դեպքում ղեկավարվելով ՔԴՕ 179-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ քննիչը քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն չի կազմում, որի վերաբերյալ գրավոր տեղեկացնում է հսկող դատախազին՝ նշելով քրեական վարույթ չնախաձեռնելու հիմքը:

ՀՀ ՔԴՕ-ի 177-րդ հոդվածը սահմանում է օպերատիվ-հետախուզական

գործունեություն իրականացնող մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի ներկայացրած հաղորդման ձևն ու բովանդակությունը: Մասնավորապես, հոդվածի 2-րդ մասը պահանջում է, որ հաղորդման մեջ անպայման բացահայտվի համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձի այն լիազորությունը, որի իրականացման ընթացքում նրան հայտնի է դարձել առերևույթ հանցանքի փաստը: Ինչպես նաև հաղորդմանը կարող են կցվել համապատասխան փաստը հաստատող նյութեր:

Հարցի նման իրավակարգավորումը վերահաստատում է այն հետևությունը, որ ՕՀԳ արդյունքները նախքան քրեական վարույթ նախաձեռնելու համար նախաքննության մարմնին ներկայացնելը պետք է նախապես մանրագնին քննարկել ՕՀԳ մարմնում այն նպատակով, որպեսզի օգտագործված ուժերն ու միջոցները, ձևերն ու մեթոդները, ինչպես նաև ՕՀԳ մարմնի գաղտնի աշխատակիցները և գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք չբացահայտվեն:

Ավելին՝ ՀՀ ՔԴՕ-ի 173-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված է, որ քրեական վարույթ չի կարող նախաձեռնվել, եթե հանցանքի մասին տեղեկությունը ստացվել է սույն հոդվածով չնախատեսված, այդ թվում՝ անհայտ կամ չբացահայտված աղբյուրից: Դրանից հետևում է, որ նախքան օպերատիվ աղբյուրից ստացված տեղեկությունը ներկայացնելը, անհրաժեշտ է պատշաճ ձևով դրանց իրավաչափության (լեգալացման) համար հիմքեր ստեղծվեն, որպեսզի քննիչը նշված հիմքով չմերժի վարույթի նախաձեռնումը:

Միևնույն ժամանակ ՕՀԳ-ի արդյունքների օգտագործման կարիք կարող է առաջանալ նաև արդեն նախաձեռնված քրեական վարույթի ընթացքում ապացուցման ենթակա փաստական հանգամանքների (ՀՀ ՔԴՕ-ի 102-րդ հոդված) պարզաբանման և ստուգման ընթացքում: Ինչպես գիտենք քրեական վարույթի ընթացքում ապացուցումը՝ օրենքով նախատեսված ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ հաստատելու կամ հերքելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է: Որպես կանոն, ապացույցները քրեական վարույթի ընթացքում հավաքվում են ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված ապացուցողական գործողությունների կատարման միջոցով (քննչական և գաղտնի քննչական գործողություններ, փորձաքննություններ), իսկ հավաքված ապացույցները քրեական վարույթի ընթացքում ենթակա են պատշաճ ստուգման՝ ստացված ապացույցների ձևի ու բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ստացման աղբյուրները վերհանելու միջոցով: Թվարկված գործողություններն առանց ՕՀԳ մարմնի հետ փոխգործողության և համապատասխան ՕՀՄ-ների անցկացման, բավականին դժվար կարող է լինել: Ավելին, ՀՀ ՔԴՕ-ի 188-րդ հոդվածն իրավունք է վերապահում քննիչին վարույթ նախաձեռնելու հետ միաժամանակ ՕՀԳ իրավասություն ունեցող մարմնին հետաքննություն իրականացնելու հանձնարարություն տալ, որի ընթացքում քննիչի հանձնարարությամբ ՕՀԳ

մարմինն իրականացնում է ՕՀՄ-ներ և գաղտնի քննչական գործողություններ (վերջինները դատարանի թույլտվությամբ) և արդյունքները տրամադրել քննիչին: Ինքսին պարզ է, թե տվյալ դեպքում ինչպիսի դերակատարություն կարող են ունենալ ՕՀԳ իրականացնող մարմինը և ՕՀԳ արդյունքները քրեական վարույթի ապացուցողական գործընթացում:

Ընդ որում, քրեական վարույթի ընթացքում նախաքննությանը ցուցաբերվող օգնությունը բխում է նաև ՀՀ ՔԴՕ-ի հետաքննության մարմնի լիազորությունները սահմանող 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հետևյալ դրույթից՝ հետաքննիչը «օժանդակում է ապացուցողական և վարույթային այլ գործողությունների կատարմանը»:

ՕՀԳ արդյունքների օգտագործման հիմնական ուղղություններից է նաև դրանք որպես ապացույց, այն է՝ ՀՀ ՔԴՕ 96-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ արտավարույթային փաստաթուղթ ձևանաչելը:

Այդուհանդերձ, խնդրո առարկայի վերաբերյալ առկա են որոշակի վերապահումներ: Մասնավորապես ՔԴՕ-ի 97-րդ հոդվածի 10-րդ մասում սահմանված է. «Օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված արտավարույթային փաստաթղթերը չեն կարող օգտագործվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքով մեղադրանքը հիմնավորելու համար: Այդ արտավարույթային փաստաթղթերը կարող են օգտագործվել միայն այն դեպքում, երբ դրանք ստացվել են քրեական վարույթ նախաձեռնելուց առավելագույնը չորս ամիս առաջ՝ ծանր հանցագործության մեղադրանքը հիմնավորելու համար, կամ ութ ամիս առաջ՝ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքը հիմնավորելու համար»: Այնուհետև նշված իրավանորմում թվարկում են երեք տասնյակից ավելի հանցակազմեր, որոնցով արտավարույթային փաստաթղթերի օգտագործման ժամկետային սահմանափակում չի սահմանվում:

Քրեական վարույթի շրջանակներից դուրս, այդ թվում՝ ՕՀԳ-ի արդյունքում ստացված նյութերը՝ արտավարույթային փաստաթուղթ ձևանաչելու և հետևաբար՝ որպես ապացույց օգտագործելու օգտին է խոսում նաև ՔԴՕ-ի 96-րդ հոդվածի 4-րդ մասի այն դրույթը, ըստ որի՝ քրեական վարույթի շրջանակներից դուրս, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կատարված ստուգման կամ վերստուգման արդյունքները կարող են ձևանաչվել արտավարույթային փաստաթուղթ և կցվել վարույթի նյութերին միայն այն դեպքում, երբ առանց դրանց վարույթի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզումն օբյեկտիվորեն անհնար է:

Վերը ներկայացված վերլուծության արդյունքներից ելնելով՝ կարծում ենք անհրաժեշտ է ՕՀԳ օրենքում պարտադիր սահմանել «ՕՀԳ-ի արդյունքներ» հասկացությունը, ինչպես նաև դասակարգել այդ արդյունքները ՔԴՕ-ի վերը նշված իրավակարգավորումներին համապատասխան: Իսկ ՔԴՕ-ի 86-րդ հոդվածի 2-րդ մասը վերախմբագրել և սահմանել հետևյալ կերպ. «**Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքով կազմված փաստաթղթերը և որևէ կրիչի վրա ամրագրված տվյալները քրեական վարույթում որպես ապացույց կարող են ձևանաչվել և օգտագործվել սույն**

օրենսգրքով սահմանված կարգով»:

ՕՀԳ արդյունքների օգտագործման քննարկվող ուղղության կապակցությամբ, կարծում ենք, տեղին է մեջբերել ՌԴ սահմանադրական դատարանի հայտնած դիրքորոշումն առ այն, որ ՕՀԳ արդյունքները հանդիսանում են այնպիսի փաստերի ձեռքբերման աղբյուրներ, որոնք ստացված լինելով ՕՀԳ օրենքով սահմանված կարգով, ապացույցներ կարող են դառնալ միայն քրեադատավարական համապատասխան միջոցներով ամրագրելու ճանապարհով» (Определение Конституционного Суда РФ, 04.02.1999, № 18):

Հաջորդ ուղղությունը՝ ՕՀԳ-ի արդյունքների օգտագործումն է քրեական դատավարության բնականոն ընթացքի ապահովման գործում, այսինքն՝ ՕՀԳ մարմինները քրեական վարույթի ընթացքում ակտիվ դերակատարում ունեն ոչ միայն ապացույցների ձեռք բերման և ապացուցողական գործողություններին օժանդակելու մեջ, այլ նաև եղած ապացույցների, վարույթի ընթացքում օգտագործվող ուժերի և միջոցների անվտանգային ապահովման գործընթացը կազմակերպելու մեջ: Այդ պարտականությունը բխում է ՀՀ ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի դրույթներից, որի 1-ին մասում սահմանված է, որ քրեական վարույթին ներգրավված անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց է կիրառվում, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին ողջամտորեն կարող է սպառնալ իրական վտանգ: Իսկ նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը սահմանում է վարույթին ներգրավված անձանց շրջանակը՝ դատավորը, վարույթի հանրային մասնակիցը՝ քննիչը, դատախազը, հետաքննության մարմնի աշխատակիցները, վարույթի մասնավոր մասնակիցը՝ մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, տուժողը, գույքային պատասխանողը, նրանց օրինական և լիազոր ներկայացուցիչը, վարույթին օժանդակող անձը՝ վկան, նրա օրինական ներկայացուցիչը և փաստաբանը, փորձագետը, թարգմանիչը, հոգեբանը, ընթերական, դատական նիստի քարտուղարը: Վարույթին ներգրավված է համարվում նաև ձերբակալվածը, ենթադրյալ հանցանքի մասին հաղորդում ներկայացրած անձը, ինչպես նաև ցանկացած այլ անձ, որի իրավաչափ շահերին առնչվում է վարությանին ակտը: Բացի դրանից, ՕՀԳ իրականացնող մարմնի (հետաքննության մարմնի) լիազորությունների մեջ է մտնում նաև ՀՀ ՔԴՕ-ի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում սահմանված՝ *«միջոցներ է ձեռնարկում քրեական վարույթի համար նշանակություն ունեցող առարկաները և փաստաթղթերը, ինչպես նաև դեպքի վայրը պահպանելու ուղղությամբ»* դրույթի պահանջների կատարումը:

ՕՀԳ մարմնի դերակատարությունը կարևորվում է հատկապես նախաքննությունից, դատաքննությունից, ինչպես նաև պատժի կրումից խուսափող, անհայտ կորած անձանց հետախուզումը, որը ենթադրում է նրանց գտնվելու վայրի հայտնաբերումը՝ հետազայում նրանց նկատմամբ քրեադատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու կամ քաղաքացիաիրավական հետևանքներ առաջացնող որոշումներ ընդունելու համար: Չնայած նշված հե-

տախտուգական միջոցառումները քրեադատավարական բնույթ չեն կրում, սակայն դրանք կարող են իրականացվել նախքան քրեական վարույթ նախաձեռնելը, ինչպես նաև քրեական վարույթի ընթացքում և հանդիսանալով ՕՀԳ մարմինների խնդիրներից մեկը՝ ապահովում են քրեական վարույթի բնականոն ընթացքը: Հետախուզման գործընթաց ձեռնարկելու և իրականացնելու խնդիրը ծագում է քննիչի կամ դատարանի որոշմամբ, քննությունից և դատից, ինչպես նաև պատժի կրումից խուսափող մեղադրյալի կամ դատապարտյալի նկատմամբ:

ՕՀԳ մարմինների գործունեության հետ կապված քրեական դատավարությունից անմիջականորեն ածանցվում է դատապարտված, քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող կամ պատիժը կրելուց հետո ազատ արձակված, այսպես ասած քրեական ենթամշակույթ կրող, քրեական աստիճանակարգության համակարգում բարձր դիրք զբաղեցնող և հանցանք կատարելուց կամ կազմակերպելուց չհրաժարված անձանց նկատմամբ կանխարգելիչ նպատակներով ՕՀԳ արդյունքների օգտագործումը:

Վերջին տարիներին ՀՀ-ում ակտիվ աշխատանքներ են ծավալվել նման անձանց կողմից կրկնահանցավորությունը կանխելու և խափանելու ուղղությամբ: ՀՀ ՔՕ-ում՝ 322-325-րդ հոդվածներով հանցավոր է ճանաչվել՝ քրեական աստիճանակարգության կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը, նման խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը, քրեական ենթամշակույթ կրող անձին դիմելը: Գործնականում նման անձանց և խմբավորումների նկատմամբ քրեակատարողական հիմնարկներում և ազատության մեջ ՕՀՄ-ներ իրականացնելը և հետևաբար ՕՀԳ-ի արդյունքներ ձեռք բերելը թեև օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով կապված է որոշակի դժվարությունների հետ, այդուհանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ ՕՀԳ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետն ՕՀԳ մարմինների նպատակ (խնդիր) է համարում նաև՝ քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեության ապահովումը, քրեակատարողական հիմնարկներում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների նախագգուշացումը, կանխումը և բացահայտումը: Քրեագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև ազատության մեջ գտնվող քրեական աստիճանակարգության համակարգում բարձր դիրք զբաղեցնող անձինք հաճախ իրենց շուրջ ստեղծում են հանցավոր ուղղվածության խմբավորումներ, որոնք կազմակերպում կամ իրականացնում են տարաբնույթ հանցանքներ, ինչպես քրեակատարողական հիմնարկներում, այնպես էլ դրանցից դուրս: Հաճախ այդ խմբավորումների պարագլուխները, այսպես կոչված՝ «օրենքով գողը», «կարգավարը» և վերջիններիս կողմից լիազորված «նայողը» հարցերի որոշակի շրջանակ են լուծում մարզում, քաղաքում կամ պայմանականորեն որոշված տարածքներում քրեական «կարգուկանոն» պահպանելու համար, այդ թվում՝ հանցագործություններ կազմակերպելու և իրականացնելու հետ կապված (Гуров, 1990):

Որպես կանոն, այդ պարագլուխների և հանցավոր խմբավորումների վերաբերյալ քրեակատարողական համապատասխան հիմնարկության կամ տարածքային ՕՀԳ մարմիններն օպերատիվ հաշվառման գործեր են բացում, իրականացնում են ՕՀՄ-ներ, երբեմն էլ համատեղ, դրանց հանցավոր գործունեությունը բացահայտելու և օրենքով սահմանված համապատասխան կարգով այդ հանցանքները քրեադատավարական միջոցներով կանխելու և խափանելու նպատակով: Հաճախ ՕՀԳ արդյունքներն իրացվում են ընդհանուր և մասնավոր կանխարգելիչ միջոցառումների իրականացմամբ, երբեմն էլ քրեադատավարական՝ քրեական վարույթ նախաձեռնելու միջոցով:

Եզրակացություն

ՕՀԳ արդյունքների օգտագործման արդյունավետության բարձրացման կարևոր ուղղություն պետք է համարել օպերատիվ տեղեկությունների հավաքումը, համակարգումն ու վերլուծությունը, այլ խոսքով՝ օպերատիվ տեղեկատվական բազայի ստեղծումը: Վերջինիս հնարավորությունները հավասարապես կարող են օգտագործվել ինչպես հանցագործությունների հայտնաբերման, այնպես էլ դրանց կանխման, խափանման և բացահայտման գործընթացներում, ինչպես նաև՝ ՕՀԳ մարմինների առջև դրված մյուս խնդիրների լուծման նպատակով:

Այսպիսով՝ ՕՀԳ արդյունքների օգտագործման ուղղությունները, դրանց միջոցով լուծվող խնդիրները բազմազան են և բխում են ՕՀԳ և քրեական վարույթի ընդհանուր նպատակներից: ՕՀԳ արդյունքների ստացման օրինականությունից, դրանց հավաստիությունից և ժամանակին ստացվելու հանգամանքից մեծապես կախված է հանցավորության դեմ պայքարի և իրավապահայան այլ գործունեության արդյունավետությունը:

Օգտագործված գրականության ցանկ

- Բալանյան, Ս.Պ. (2017). *Օպերատիվ-հետախուզական գործունեություն (տեսական մաս)*: Երևան:
- ՀՀ վճռաբեկ դատարանի Է. Կարապետյանի գործով 13.07.2007 թ. № ՎԲ-133/07 որոշում:
- ՀՀ վճռաբեկ դատարանի Ռ. Նիսանյանի գործով 31.05.2014 թ. № ԵԿԴ/0118//11/13 որոշում:
- ՀՀ վճռաբեկ դատարանի Հ. Մանուկյանի գործով 30.03.2019 թ. № ԵԿԴ/0154/11/14 որոշում:
- Маркушин, А.Г. (2013). *Оперативно-розыскная деятельность*. М.: Юрайт.
- Теория оперативно-розыскной деятельности* (2008). Под. ред. Горяинова К.К., Овчинского В.С., Синилова Г.К., М.: Инфра.
- Теория оперативно-розыскной деятельности* (2018). Учебник, под. ред. К. К. Горяинова, В. С. Овчинского, 4-ое изд., Москва.
- Определение Конституционного Суда РФ от 04.02.1999г. № 18 по жалобе граждан М.Б.Никольской и М.И.Сапронова на нарушение конституционных прав

отдельными положениями ФЗ Об оперативно-розыскной деятельности.

Гуров, А. И. (1990). *Профессиональная преступность, прошлое и современность*. М., юрид. лист.

References

- Balanyan, S.P. (2017). Operativ-hetakhuzakan gortsuneut'yun (tesakan mas) [Operative-investigative activity (theoretical part)]: Yerevan: (In Arm.)
- HH vchrrabek datarani E. Karapetyani gortsov 13.07.2007 t'. № VB-133/07 voroshum [E. Karapetyan case of the RA Court of Cassation on 13.07.2007, Decision No. BB-133/07]: (In Arm.)
- HH vchrrabek datarani R. Niazyni gortsov 31.05.2014 t'. № YeKD/0118//11/13 voroshum [R.Niazyan case of the RA Court of Cassation on 31.05.2014. Decision No. EKD/0118//11/13]: (In Arm.)
- HH vchrrabek datarani H. Manukyani gortsov 30.03.2019 t'. № YeKD/0154/11/14 voroshum [H. Manukyan case of RA Court of Cassation 30.03.2019. Decision No. EKD/0154/11/14.]: (In Arm.)
- Markushin, A.G. (2013). *Operativno-rozysknaya deyatel'nost'* [Operational-search activity]. M.: Yurayt. (In Rus.)
- Teoriya operativno-rozysknoy deyatel'nosti* [Theory of operational-search activity] (2008). Pod. red. Goryainova K.K., Ovchinskogo V.S., Sinilova G.K., M.: Infra. (In Rus.)
- Teoriya operativno-rozysknoy deyatel'nosti* [Theory of operational-search activity] (2018). Uchebnik, pod. red. K. K. Goryaninova, V. S. Ovchinskogo, 4-oye izd., Moskva. (In Rus.)
- Opredeleniye Konstitutsionnogo Suda RF [Determination of the Constitutional Court of the Russian Federation] ot 04.02.1999g. № 18 po zhalobe grazhdan M.B.Nikol'skoy i M.I.Sapronova na narusheniye konstitutsionnykh prav ot del'nykh polozheniyami FZ Ob operativno-rozysknoy deyatel'nosti. (In Rus.)
- Gurov, A. I. (1990). *Professional'naya prestupnost', proshloye i sovremennost'* [Professional crime, past and present. M., legal sheet]. M., yurid. list. (In Rus.)

Андраник Симонян

Соискатель Российско-Армянского Университета РА
Эл. адрес: simonyan21@gmail.com

ВОЗМОЖНОСТИ И НАПРАВЛЕНИЯ ИСПОЛЬЗОВАНИЯ РЕЗУЛЬТАТОВ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Данная статья посвящена определению и анализу роли и значения результатов оперативно-розыскной деятельности, а также возможностей и направлений их использования. Изучив материал, существующий в профессиональной литературе по рассматриваемой теме, а также сделав вывод о том, что основные направления использования результатов оперативно-розыскной деятельности вытекают из целей и задач оперативно-розыскной деятельности

и базируются на принципах оперативно-розыскной деятельности, в данной статье мы предложили комплексный и логичный вариант классификации основных направлений использования результатов оперативно-розыскной деятельности, который хотя и не является исчерпывающим, но вытекает из требований законодательства и имеет практическое значение.

По итогам анализа законодательных норм в связи с использованием результатов оперативно-розыскной деятельности мы пришли к выводу, что важным направлением повышения эффективности использования результатов оперативно-розыскной деятельности необходимо считать сбор, согласование и анализ оперативной информации, иначе говоря, создание оперативной информационной базы. Возможности последнего в равной степени могут быть использованы как при выявлении преступлений, так и в процессах их предупреждения, пресечения и раскрытия, а также в целях решения иных задач, стоящих перед органами, осуществляющими оперативно-розыскную деятельность.

Подводя итоги, мы пришли к выводу, что направления использования результатов оперативно-розыскной деятельности и решаемые с их помощью задачи многообразны и вытекают из общих целей оперативно-розыскной деятельности и уголовного процесса.

Ключевые слова: результат оперативно-розыскной деятельности, уголовный процесс, уголовно-процессуальные правовые нормы, орган предварительного следствия, оперативная информация.

Andranik Simonyan

*Ph.D. student at Russian-Armenian University of the RA
Email: simonyan21@gmail.com*

POSSIBILITIES AND DIRECTIONS OF USAGE OF RESULTS OF INVESTIGATIVE ACTIVITIES

The article is devoted to identification and analysis of the role and significance of results of investigative activities, as well as the identification and analysis of the possibilities and directions of using them.

Studying the existing inputs related to the topic in the professional literature, as well as concluding that the main directions of using the results of investigative activities are derived from the goals and issues of investigative activities and are based on the principles of investigative activities, we have proposed a comprehensive and logical way of classifying the main directions of using the results of investigative activities. Although the conclusions of the article are not exhaustive, they derive from requirements of the legislation and have practical significance.

As a result of the analysis of the legislative regulations regarding the use of the results of investigative activities, we have concluded that collection,

coordination and analysis of operative information, i.e. compilation of an investigative informational base, should be considered an important direction for increasing efficiency of usage of results of investigative activities. The possibilities of the latter can equally be used both in the detection of crimes and in the processes of their prevention, disruption and disclosure, as well as for the purpose of solving other problems faced by agencies conducting investigative activities.

In conclusion, directions of using results of investigative activities, as well as problems solved through them, are diverse and derive from the general goals of investigative activities and criminal proceedings.

Key words: result of investigative activity, criminal proceedings, criminal-procedural regulations, investigative body, operative information.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. ապրիլի 3-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. ապրիլի 6-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. մայիսի 4-ին:

Զավեն Սմբատյան

*Հայաստանում Եվրոպական համալսարանի հայցորդ,
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության
վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ
Էլ. huuugte` zaven.smbatyan@yerevan.am*

DOI: 10.53614/18294952-2023.1-58

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածում հանգամանորեն քննարկվում են վարչական ակտի հասկացության սահմանման տեսական-իրավական հիմնահարցերը: Քննարկվում են նաև վարչական ակտ հասկացության սահմանման ներպետական և միջազգային իրավական կարգավորումները:

Սույն հոդվածի նպատակը իրավական հետազոտության հիման վրա վարչական ակտի հեղինակային հասկացության սահմանումն է, ինչպես նաև միջազգային և ներպետական տեսական և գործնական փորձի հիման վրա այդ հասկացության հստակ խարսխումը ՀՀ գործող օրենսդրական դաշտում:

Հոդվածում քննարկվում է այնպիսի հարց, որն այս կամ այն չափով արտացոլում է ստացել տարբեր հեղինակների աշխատություններում, սակայն թեմայի բովանդակությունը կազմող ինստիտուտի շուրջ ծառացող հիմնախնդիրների վերաբերյալ առանձին համալիր գիտական քննարկման ու իրավական վերլուծության առարկա չի եղել, ինչը փորձ է արվել կատարել սույն աշխատանքում:

Սույն աշխատանքի արժեքն ու գործնական նշանակությունը, ինչպես նաև նորույթը դրսևորվում է վարչական ակտի

հասկացության բնորոշման տարբեր երկրների իրավական փորձով, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի առաջարկությամբ, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դատողություններով, որոնց արդյունքում հողվածում հիմնավորված է այն դատողությունը, ըստ որի վարչական ակտն օրենքով սահմանված ձևին համապատասխան ընդունված, արտաքին դրսևորմամբ, կարգավորող ազդեցությամբ, անհատական իրավական ակտ է, որն ընդունվում է վարչական մարմինների կամ վարչական մարմնի անունից վարչական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված սուբյեկտի կողմից՝ իրենց իրավասությունների իրականացման ընթացքում, կոնկրետ անձի (անձանց խմբի) համար իրավունքների, իրավական կարգավիճակի կամ պարտականությունների սահմանման, փոփոխման, հաստատման, կամ դադարեցման նպատակով, ինչպես նաև կարող է ուղղված լինել այդպիսի իրավական հետևանքներ առաջացնելուն:

Հիմնաբառեր. վարչական ակտ, սահմանում, հասկացություն, վարչական մարմին, տարր, իրավունք, պարտականություն:

Ներածություն

Վարչական իրավունքը հանրային իրավունքի առավել տարածված ճյուղերից մեկն է, որի շրջանակներում առանցքային դերակատարում ունի վարչական ակտի ինստիտուտը:

Սույն աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը վարչաիրավական հարաբերություններն են, որոնք ծագում են վարչական ակտի հասկացության սահմանման արդյունքում և այդ հասկացության տարրերի կենսագործումից:

Վարչական ակտի հասկացության վերաբերյալ թե՛ ՀՀ գործող օրենսդրական դաշտում, թե՛ տեսական ընկալմամբ առկա է սահմանումներ, որոնք ոչ ամբողջական են ամփոփում այս ինստիտուտի էությունը:

Սույն հոդվածով փորձ է արվելու՝ իրավական հետազոտության հիման վրա սահմանել վարչական ակտի կատարելագործված հեղինակային հասկացություն:

Մեթոդ

Սույն ուսումնասիրության մեթոդական հիմքը ձևավորվում է ֆորմալ տրամաբանական և ֆորմալ իրավական մեթոդներով, համակարգային կառուցվածքային, տեխնիկական, համեմատական և իրավական վերլուծության մեթոդներով, որոնք օգտագործվել են ուսումնասիրության, համակարգման, հասկացությունների և իրավական բովանդակությունների բացահայտման ընթացքում:

Արդյունքներ

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը սահմանում է, որ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ձանաչելուն (Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենք, հոդվ. 53, կետ 1):

Վերոգրյալ իրավանորմի լույսի ներքո, անդրադառնալով վարչական ակտի հասկացությանը, անհրաժեշտ է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտի հասկացությունից բխում են հետևյալ տարրերը.

1) վարչական ակտը պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի կարևոր պարունակել նորմեր և նախատեսում է պարտադիր երաշխավորման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա կանոններ՝ դրանում ուղղակիորեն նշված կամ անձանց համար, այսինքն՝ հստակորեն որոշակի հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների կողմից, որոնք թվարկված են ՀՀ գործող օրենսդրության մեջ,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն, նրա հասցեատերն այնպիսի անձ է, որն աշխատանքային, կազմակերպական, ենթակայական կամ այլ ուղղակի կապի մեջ չի կարող գտնվել վարչական ակտն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում, այն միակողմանի կամարտահայտում է, որի հիմքում ընկած են հատուկ իրավական նորմերը,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ և որոշակի գործի կարգավորման նպատակով, այն ուղղված է կոնկրետ գործի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում կամ կարող է ուղղված լինել այդօրինակ հետևանքների առաջացմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերոգրյալ իրավական դատողություններին արձանագրել է, որ «յուրաքանչյուր գործով վարչական ակտի հատկանիշների պարզաբանման համար դատարանը պետք է գնահատի վիճարկվող ակտի անհատական ակտ լինելու, վարչական մարմնի կողմից ընդունված լինելու, արտաքին ներգործություն ունենալու, հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու, կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելու, անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու հանգամանքների միաժամանակյա առկայությունը» («Օլիմպ» արտադրական կոդպերատիվն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/4538/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվա-

կանի որոշում):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը զարգացնելով վերոգրյալ իրավական դատողությունները արձանագրել է, որ «վարչական ակտին բնորոշ կարևորագույն հատկանիշն այն է, որ վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար» (Վարդիթեր Ավոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշում):

Հետագայում ՀՀ վճռաբեկ դատարանը, վերափոխելով նախկինում արտահայտած դիրքորոշման մի մասը և զարգացնելով մյուս մասը, տարածական մեկնաբանելով «ուղղված է» ձևակերպումը արձանագրել է, որ «փաստաթուղթը պետք է որակվի որպես վարչական ակտ ինչպես այն դեպքում, երբ դրանով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար առաջանում են ուղղակի հետևանքներ, այնպես էլ այն դեպքում, երբ ուղղված (միտված) են այդ հետևանքների առաջացմանը և ակներև է, որ դրանում արձանագրված խախտումներն ինքնին վատթարացնում են վերջիններիս իրավական կամ փաստացի դրությունը:

Այսինքն՝ վարչական ակտի որակումն օրենսդիրը պայմանավորել է ոչ թե դրանով ուղղակի իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հանգամանքով, այլ միայն նշված իրավական հետևանքների առաջացմանն ուղղված լինելու հանգամանքով» (ՀՀ վճռաբեկ դատարանի 17.12.2021 թվականին թիվ ՎԴ/11082/05/20 վարչական գործով կայացված նախադեպային որոշում):

Տարբեր երկրներում, պայմանավորված իրավընկալման մեթոդիկայով, օրենսդրական և դոկտրինալ մակարդակով, տարբեր կերպ են սահմանում վարչական ակտի հասկացությունը, որպիսի հանգամանքով պայմանավորված տարբեր երկրներում վարչական ակտը՝ որպես իրավական ակտի առանձին տարատեսակ, իրավական տարբեր առանձնահատկություններ ունի:

Վարչական ակտի սահմանումը տրվել է նաև Եվրոպայի Միության նախարարների խորհրդի կողմից անդամ երկրների լավ կառավարման վերաբերյալ թիվ Դրղըզստանի CM/Rec(2007)7 առաջարկով:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Վարչական վարույթի մասին» օրենքի (ընդունվել է 25-ը մայիսի 1976 թվականի) 35-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտը ցանկացած հրաման, որոշում կամ այլ ինքնիշխան միջոց է, որը մարմինը ընդունել է հանրային իրավունքի ոլորտում

անհատական գործը կարգավորելու համար, և որն ուղղված է արտաքին աշխարհի վրա ուղղակի իրավական հետևանքներ թողնելուն:

Միդոլայի Հանրապետության վարչական օրենսգրքի (ընդունվել է 19 հուլիսի 2018 թվականի № 116) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհատական վարչական ակտը հանրային իշխանության մարմնի կողմից հանրային իրավունքի բնագավառում եզակի դեպքի կարգավորման համար ընդունվող ցանկացած կարգադրություն, որոշում կամ այլ պաշտոնական միջոց է՝ հանրային իրավական հարաբերությունների ստեղծման, փոփոխման կամ դադարեցման միջոցով ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու նպատակով:

Ղրղըզստանի Հանրապետության «Վարչական գործերի վարման կարգի, դրանց հաշվառման մատյանի, վարչական ակտերի հաշվառման մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտը վարչական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի ակտ է, որը միաժամանակ օժտված է հանրային-իրավական և անհատական-որոշակի հատկանիշներով, ունի արտաքին ազդեցություն, չունեն ներգերատեսչական բնույթ և առաջացնում են իրավական հետևանքներ, մասնավորապես՝ հաստատում, փոփոխում կամ դադարեցնում են դիմողի և (կամ) շահագրգիռ անձի իրավունքներն ու պարտականությունները:

Թեև Ռուսաստանի Դաշնության իրավահամակարգում միասնական վարչական ակտ հասկացությունը բացակայում է, այնուամենայնիվ «Վարչական ընթացակարգերի մասին» դաշնային օրենքի նախագիծը տալիս է վարչական ակտի իրավական սահմանումը: Նման ակտը համարվում է կոլեգիալ մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից կոնկրետ վարչական գործի քննարկման ընթացքում ծագած որոշակի հարցերի լուծման իրավապահ ձև:

Ավստրիայի Հանրապետությունում գործող իրավակարգավորման համաձայն՝ վարչական ակտ է հանդիսանում՝ որոշումը կամ միջոցը, որը վարչական մարմինը կայացրել է իր պաշտոնական լիազորություններն իրականացնելիս, պաշտոնապես և օրենքի ուժով, անհատապես նույնականացված անձանց հետ կապված իրավական հարաբերությունների վերաբերյալ:

Ֆրանսիական իրավունքը վարչական ակտի տեսակի հարցը քննարկելիս այն բաժանում է երկու տեսակի՝ ա) միակողմանի վարչական ակտ և բ) վարչական պայմանագիր:

Ֆրանսիայի Հանրապետության իրավահամակարգում վարչական ակտի հասկացությունը բնորոշվում է հետևյալ կերպ. «Միակողմանի վարչական ակտը վարչական մարմնի կողմից միակողմանիորեն ընդունված իրավական ակտ է, որը փոփոխում կամ հրաժարվում է փոխել կառավարվող անձանց իրավունքները կամ պարտականությունները՝ անկախ նրանց համաձայնությունից»:

Վարչական ակտն իրավական ակտ է, որը բխում է վարչական մարմնից և ուղղված է ընդհանուր շահերի ապահովմանը: Այն պետք է համապատասխանի վարչական օրինականությունը կազմող իրավական նորմերի ամբողջությանը»:

Կարևոր առանձնահատկություն ունի այս ոլորտում ֆրանսիական օրենսդրությունը, որը վարչական մարմին է դիտում նաև իրավաբանական անձանց, որոնք կարող են օրենքի ուժով այս կամ այն անհատական իրավական ակտ կայացնել:

Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն անդամ երկրներին լավ կառավարման վերաբերյալ իր թիվ CM/Rec (2007)7 առաջարկության մեջ արձանագրել է, որ «վարչական որոշումներ» նշանակում է կարգավորող, ոչ նորմատիվ որոշումներ, որոնք ընդունվում են պետական մարմինների կողմից հանրային իշխանության իրավասությունների իրականացման ընթացքում (Recommendation CM/Rec (2007)7)

Ինչպես արդեն նախորդիվ նշվեց՝ վարչական ակտը որպես միջոց ընդունվում է վարչական մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում ներազդման ենթակա կոնկրետ դեպքը կարգավորելու համար:

Դրա նախադրյալը հանրային իրավունքով նախատեսված գերատեսչական միջոցի առկայությունն է:

Քննարկում

Ասվածի համատեքստում ամփոփելով վերոգրյալ ամբողջ դատողությունները ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներով հիմնավորվում է վարչական ակտի ՀՀ օրենսդրությամբ սահմանված հասկացության տեսական ընկալման հետևյալ իրավական չափանիշները.

- Վարչական ակտը պետք է ունենա արտաքին դրսևորում և ոչ մի կերպ չպետք է շոշափի ներքին ծառայողական կամ ենթակայական հարցեր:
- Վարչական ակտը կարող է դրսևորվել միայն անհատական իրավական ակտի ձևով և չի կարող նախատեսել նորմատիվային ձևակերպումներ, այսինքն՝ չի կարող պարունակել վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:
- Վարչական ակտը կարող է ընդունվել միայն ՀՀ գործող օրենսդրությամբ որպես վարչական մարմին որակվող իրավունքի հատուկ սուբյեկտի կողմից:
- Վարչական ակտը կարող է կարգավորել միայն հանրային իրավահարաբերություններ կարգավորող հարց և չի կարող բխել մասնավոր իրավունքի բնագավառից, այսինքն՝ այն կարող է կարգավորել վարչական մարմինների և անձանց միջև ձևավորված հարաբերությունները, որը բխում է վարչական մարմինների իրավասությունների իրացումից:
- Վարչական ակտը կարող է կարգավորել միայն կոնկրետ գործը և չի կարող նախատեսել վարքագծի համընդհանուր կանոններ:
- Վարչական ակտը կարող է անձանց համար սահմանել, փոփոխել, վերացնել, ձանաչել իրավունքներ և պարտականություններ կամ կարող է ուղղված լինել այդպիսի իրավունքների և պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը, վերացմանը կամ ձանաչմանը:

Անփոփելով միջազգային իրավական փորձը վարչական ակտի հասկացության ընկալման էության վերաբերյալ, ինչպես նաև համադրելով այն ՀՀ գործող օրենսդրության մեջ տեղ գտած հասկացության բացերի հետ, տանք վարչական ակտի հասկացությանը բնորոշ տարրերի հետևյալ դասակարգումը.

1. **Վարչական ակտը պետք է ընդունվի օրենքով սահմանված ձևին համապատասխան.** այսինքն՝ այն պետք է համապատասխանի ֆորմալ տրամաբանության պահանջներին, որպեսզի պայմանների պահպանման պարագայում վարչական ակտը որակվի որպես հատուկ տիպի ակտ (վարչական ակտ):
2. **Վարչական ակտը պետք է ունենա արտաքին իրավական դրսևորում.** վարչական ակտի արտաքին իրավական դրսևորման մեջ ընկալվում է այն փաստական հանգամանքը, որ վարչական ակտը չպետք է ուղղված լինի ընդունող մարմնի ներքին խնդրի լուծմանը, այլ պետք է իրավական ազդեցություն ունենա վարչական մարմնից դուրս, անձի կամ անձանց խմբի վրա: Այն ոչ մի կերպ չպետք է շոշափի ներքին ծառայողական կամ ենթակայական հարցեր:
3. **Վարչական ակտն ունի կարգավորող ազդեցություն.** հիշյալ տարրի էությունից բխում է, որ վարչական ակտն իր էությամբ ուղղված է կոնկրետ դեպքի շրջանակներում կոնկրետ հարաբերությունը կարգավորելուն, այլ կերպ ասած ուղղված է աբստրակտ բնույթի իրավահարաբերությունը կազույալացնելուն, որի տրամաբանության ներքո արդեն դրսևորվում է կարգավորող ազդեցությունը, որը չի կարող կրել համընդհանուր և մասնավոր բնույթ:
4. **Վարչական ակտն հանդիսանում է անհատական իրավական ակտ.** վարչական ակտը կարող է կարգավորել միայն կոնկրետ գործը և չի կարող նախատեսել վարքագծի համընդհանուր կանոններ, որոնք բնորոշ են նորմատիվ իրավական ակտերին:
5. **Վարչական ակտը կարող է ընդունվել միայն վարչական մարմնի կամ դրա համար համապատասխան լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից:**

Այս հայեցակարգը արմատապես տարբերվում է ներկայումս ՀՀ-ում գործող իրավահամակարգում տեղ գտած այն սահմանումից, ըստ որի վարչական ակտը կարող է ընդունվել միայն վարչական մարմնի կողմից:

Ըստ մեր կողմից ներկայացվող դատողության՝ վարչական ակտը կարող է ընդունվել ոչ միայն վարչական մարմինների կողմից, այլև դրա համար լիազորված սուբյեկտների կողմից, որպեսզի փաստական հանգամանքը ամբողջությամբ բխի իրավական տրամաբանությունից, իսկ ներկայիս կարգավորումը փորձում է բավականին լայն մեկնաբանել՝ պայմանավորված դրա կիրառելիությամբ:

Օրինակ՝

Իրավիճակ առաջին՝ Երևանի քաղաքապետը իրավասու է կայացնել անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական

ակտեր: Վերջինս լիազորված է իր այդ իրավասությունը փոխանցել այլ պաշտոնատար անձի, ով սակայն չի ներառվում վարչական մարմին հասկացության տրամաբանության մեջ:

Իրավիճակ երկրորդ՝ համայնքի ղեկավարը հանդիսանում է համայնքի տարածքում առկա գերեզմանատների կառավարիչը: Վերջինս իր այդ լիազորությունը կարող է փոխանցել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված ոչ առևտրային կազմակերպությանը: Ստեղծված կազմակերպությունը (Բնակչության հատուկ սպասարկման ՀՈԱԿ) տրամադրում է, օրինակ, վրահուղարկման թույլտվություն կամ գերեզմանատան տնօրինությունը տրամադրում է գերեզմանի վկայական: Նման իրավիճակում օբյեկտիվորեն առաջ է գալիս մի տեսակետ, ըստ որի վարչական ակտը չի կարող կայացվել միայն վարչական մարմնի կողմից և կարող է կայացվել պետաիրավական իրավագործությամբ օժտված իրավունքի սուբյեկտի կողմից:

6. Վարչական ակտը պետք է հանդիսանա հանրային իրավունքում պետաիրավական լիազորությունների իրականացման արդյունք.

Հիշյալ տարրի էությունը դրսևորվում է այն դատողության լույսի ներքո, որ վարչական մարմնի ցանկացած գործունեություն պետք է արտոնված լինի օրենքով և վերջինս վարչական ակտ կայացնելիս պետք է իրացնի իր կոնկրետ սահմանված իրավասությունը:

Վարչական ակտերի միջոցով առաջացող կազուալ իրավահարաբերություններին լուծում տալու վարչական ակտի գործառնությունը կենսագործվում է մի շարք սկզբունքների հիման վրա, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի արտոնման սկզբունքը կամ այլ կերպ ասած լիազորման սկզբունքը:

Արտոնումն իրավունքի գերակայության առանցքային տարր է և արտոնման ինստիտուտը նպատակ է հետապնդում ապահովել իրավունքի գերակայությունը: Այս համատեքստում իրավունքի գերակայության ապահովումն իրենից ենթադրում է, որ վարչական մարմինը կարող է գործել և սահմանափակել անձի ազատությունը միայն այն ժամանակ, երբ նա լիազորված է դրա համար: Այսինքն՝ վարչական մարմնի գործողությունները պետք է արտոնված լինեն ինչ-որ իրական աղբյուրով:

Այսպիսով, վարչական իրավունքի ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը պետք է նախատեսեն իրավական դրույթ, թե որ պաշտոնատար անձինք կարող են իրականացնել օրենքով պատվիրակված լիազորություններ և ինչպես պետք է գնահատել այդ լիազորությունների ծավալը:

Այն պարագայում, երբ որոշակի լիազորություններ են պատվիրակվում պաշտոնատար անձանց կամ հաստատություններին, այդ պարտականությունները և հայեցողական լիազորությունները պաշտոնատար անձի համար անձնական են:

7. Վարչական ակտը պետ է վերաբերի կոնկրետ անձի կամ կոնկրետ անձանց խմբի.

Վարչական ակտը չի կարող նախատեսել համընդհանուր վարքագծի կանոններ այլ պետք է ունենա կոնկրետ անձի կամ անձանց խմբի իրավունք-

ները շոշափող բույթ:

8. Վարչական ակտը առաջացնում է իրավունքներ, իրավական կարգավիճակ կամ պարտականություններ սահմանման, փոփոխման, հաստատման, կամ դադարեցման իրավական հետևանք, կամ ուղղված է այդպիսի իրավական հետևանքներ առաջացնելուն:

Վերոգրյալ տարրի լույսի ներքո ակնադիտական է այն հայեցակարգը, ըստ որի ՀՀ գործող օրենսդրությունը խոսում է միայն իրավունքներ և պարտականություններ առաջացնելու ինստիտուտի մասին, սակայն վարչական ակտով սահմանվում է նաև իրավական կարգավիճակ, որը կարող է իրենից չենթադրել որևէ իրավունք կամ պարտականություն, հետևապես այդ տարրի նախատեսումը նույնպես արդիական է գործող իրավակարգավորման մեջ:

Օրինակ՝ նախագահի հրամանագրով, որևէ անձի շնորհվում է վաստակավոր արտիստի կոչում կամ նախարարի հրամանով հաստատվում է հաշմանդամության կարգ:

Հատկանշական է նաև, որ վարչական ակտ պետք է որակել ոչ միայն այն անհատական իրավական ակտը, որը ուղղակի կերպով սահմանում, փոփոխում, հաստատում կամ դադարեցնում է իրավունքներ, պարտականություններ կամ իրավական կարգավիճակ, այլև այն անհատական իրավական ակտը, որը ուղղված է այդպիսի հետևանքներ առաջացնելուն և կարող է առաջացնել այդօրինակ հետևանքներ:

Ամփոփելով հոդվածում տեղ գտած դատողությունները վարչական ակտի տեսական, իրավական և միջազգային ընկալումների վերաբերյալ՝ հարկ է սահմանել վարչական ակտի հետևյալ հասկացությունը. «Վարչական ակտն օրենքով սահմանված ձևին համապատասխան ընդունված, արտաքին դրսևորմամբ, կարգավորող ազդեցությամբ անհատական իրավական ակտ է, որն ընդունվում է վարչական մարմինների կամ վարչական մարմնի անունից վարչական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված սուբյեկտի կողմից իրենց իրավասությունների իրականացման ընթացքում, կոնկրետ անձի (անձանց խմբի) համար իրավունքների, իրավական կարգավիճակի կամ պարտականությունների սահմանման, փոփոխման, հաստատման կամ դադարեցման նպատակով, ինչպես նաև կարող է ուղղված լինել այդպիսի իրավական հետևանքներ առաջացնելուն:

Սույն հոդվածի արդյունքը դրսևորվում է ներպետական և միջազգային իրավական փորձի ամփոփմամբ, որի արդյունքում, բացահայտելով ներպետական օրենսդրության մեջ հասկացության և այլ աղբյուրներում ամրագրված հասկացությունների տարրերը, ինչպես նաև դրանց գնահատման արդյունքում միասնական հասկացության սահմանումը, որով հոդվածը հասել է իր առջև դրված նպատակին, այն է՝ ներպետական և միջազգային իրավական փորձի հիման վրա վարչական ակտի հեղինակային և կատարելագործված հասկացության սահմանումը:

Եզրակացություն

Անփոփելիվ հողվածի արդյունքները՝ նպատակահարմար է արձանագրել հետևյալ եզրահանգումները.

1. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն անդամ երկրներին լավ կառավարման վերաբերյալ իր թիվ CM/Rec (2007)7 առաջարկության մեջ արձանագրել է. «Վարչական ակտը հասկացության առանցքային տարր է հանդիսանում. վարչական ակտն ունի կարգավորող ազդեցություն, որը ներպետական իրական համակարգում ամբողջական արտացոլված չէ»:
2. ՀՀ գործող օրենսդրությունը չի նախատեսում վարչական ակտի հասկացության այն առանցքային բնորոշ տարրը, ըստ որի վարչական ակտը ոչ միայն կարող է սահմանել, փոփոխել, հաստատել կամ դադարեցնել իրավունքներն ու պարտականությունները, այլև իրավական կարգավիճակը:
3. ՀՀ գործող օրենսդրությունը չի նախատեսում վարչական ակտի հասկացության այն առանցքային բնորոշ տարրը, ըստ որի վարչական ակտը կարող է կայացվել ոչ միայն հենց վարչական մարմինների կողմից, այլ նաև վարչական մարմնի անունից վարչական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված սուբյեկտի կողմից՝ իրենց իրավասությունների իրականացման ընթացքում (օրինակ՝ Երևանի քաղաքապետը վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219.1-րդ հոդվածի ուժով իրավասու է պատվիրակել այլ անձի կայացնել «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումներ):
4. Վերոգրյալի համատեքստում ՀՀ գործող օրենսդրության մեջ անհրաժեշտ է կատարել փոփոխություն՝ սահմանելով վարչական ակտի առավել կատարելագործված հասկացություն, որը բխում է թե՛ իրավական տրամաբանությունից, թե՛ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի առաջարկությունից, մասնավորապես՝ անհրաժեշտ է սահմանել հետևյալ իրավական հասկացությունը՝ վարչական ակտն օրենքով սահմանված ձևին համապատասխան ընդունված, արտաքին դրսևորմամբ, կարգավորող ազդեցությամբ անհատական իրավական ակտ է, որն ընդունվում է վարչական մարմինների կամ վարչական մարմնի անունից վարչական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված սուբյեկտի կողմից իրենց իրավասությունների իրականացման ընթացքում, կոնկրետ անձի (անձանց խմբի) համար իրավունքների, իրավական կարգավիճակի կամ պարտականությունների սահմանման, փոփոխման, հաստատման, կամ դադարեցման նպատակով, ինչպես նաև կարող է ուղղված լինել այդպիսի իրավական հետևանքներ առաջացնելուն:

Օգտագործված գրականության ցանկ
սումնամեթոդական, դաստիարակչական, կազմակերպչական աշխատանքը, դպրոցի ցույց տված արդյունքները, և վերլուծության արդյունքների հիման վրա պլանավորել դպրոցի աշխատանքը և մշակել նոր ռազմավարություն: Քուինը հստակ կապ է տեսնում կառավարման գործընթացում ռազմավարության, պլանավորման և կազմակերպության ապագա զարգացման միջև: Նա սահմանում է «ռազմավարական պլանավորում» հասկացությունը որպես կազմակերպության հիմնական նպատակների, քաղաքականության և գործողությունների ինտեգրում մի ամբողջության մեջ (Quinn, 1993):

Այսպիսով, ռազմավարական պլանավորումն իրականացվում է որոշակի ժամանակաշրջանում, հաշվի առնելով ներքին և արտաքին գործոնների վերլուծության արդյունքները, որոնք կարող են շոշափելի ազդեցություն ունենալ կազմակերպության զարգացման վրա (Puffitt, Stoten and Winkley, 1992):

Այսպիսով, դպրոցի տնօրենը պետք է մշակի դպրոցի ՏՀՏ-ները ներդնելու և կիրառելու համապատասխան ռազմավարություն: Դրա համար նա պետք է ունենա բավարար մակարդակ ապահովող մասնագիտական, ռեֆլեքսիվ, կառավարման, հաղորդակցական, ինչպես նաև տեխնոլոգիական կոմպետենցիաներ: Կարևոր է այն, որ ռեֆլեքսիվ-մասնագիտական, կառավարման-հաղորդակցական կոմպետենցիաները փոխկապակցված են: Հնարավոր է հասնել մասնագիտական գործունեության, կառավարման ոլորտներում բարձր արդյունքների, եթե դպրոցի տնօրենի և աշխատակազմի ռեֆլեքսիվ, հաղորդակցական կոմպետենցիաները բավարար չափով ձևավորված և զարգացած չեն:

Դպրոցի նորարարական տեխնոլոգիաներով կառավարման կարևոր պայման է տնօրենի տեխնոլոգիական կոմպետենցիայի բարձր մակարդակը:

Առաջնորդի տեղեկատվական և տեխնոլոգիական կոմպետենցիան ներառում է նրա կառավարման մոտիվացիան և արժեքային համակարգը, կառավարման տեղեկատվականացման, տեղեկատվության կառավարման և ծրագրային ապահովման և տեխնիկական գիտելիքների և հմտությունների, մասնագիտական նշանակալի անձնական հատկությունների (անկախություն, ստեղծագործականություն, ռեֆլեքսիվություն, համակարգչային գործիքներ օգտագործելու վախի բացակայություն) մակարդակ, և այն դրսևորվում է կառավարիչի համապատասխան տեխնիկական միջոցներից օգտվելու /համակարգիչ, ինտերակտիվ գրատախտակ, պրոեկտոր և այլն/ կարողունակություններով (Панова, 2007):

Տեխնոլոգիական մակարդակում դպրոցի տնօրենը պետք է տիրապետի որոշակի ծրագրային ապահովման և տեխնիկական միջոցների կիրառման հմտությունների: Նա պետք է կարողանա կազմակերպել իր կոլեկտիվի /աշխատակազմ, ուսուցիչներ/ տեղեկատվական գործունեությունը: ՏՀՏ-ների միջոցով թվայնացվում և պահպանվում են ծրագրային ապահովման և ժամանակակից կիրառական ծրագրային փաթեթները: Փաստորեն դպրոցի կառավարման ժամանակակից մոդելը ներառում է տեղեկատվության հավաքագրման և պահպանման, մշակման և կրթական, դաստիարակչական, կազմակերպչական նպատակներով կիրառվող ՏՀ տեխնոլոգիաները: Այն

ներառում է նաև «կառավարչի տեղեկատվական գործունեության համար ավտոմատացված աջակցության համակարգերի ստեղծման և գործունեությունն ապահովելու կարողությունը» (Филина, 2019, էջ 519–521):


Հատկանշական է այն, որ երբ դպրոցի ղեկավարը լավ է տիրապետում համակարգչին, ավելի քաջատեղյակ է իր անձնակազմի կարիքների մասին: Տեքստերի մշակման, աղյուսակների, ծրագրերի ներկայացման, վեր էջերի և ինտերնետի օգտագործումը պարտադիր պայման են համակարգչային հմտությունները զարգացնելու համար: Հետ չմնալու, մշտապես մրցունակ լինելու համար առաջնորդը պետք է հետևի վերջին տեխնոլոգիաների զարգացման միտումներին: Դպրոցի ղեկավարը պետք է լավ տեղեկացված և տեխնոլոգիապես կոմպետենտ լինի: ՏՀՏ-ները հաջողությամբ ներդնելով պետք է խրախուսել աշխատակիցներին ակտիվ մասնակիցը լինել դրանց ներդրման և կիրառման գործընթացում: Նորարարական տեխնոլոգիաների ներմուծման ակտիվ մասնակցությունը պետք է խրախուսվի, քանի որ այդպիսի մասնակցությունը զարգացնում է նրանց հաղորդակցական, մասնագիտական, հաղորդակցական, մասնագիտական կոմպետենցիաները: Ապահովվում է դպրոցում բարձր վերահսկողության մակարդակ: Բոլոր ուսուցիչները պետք է պատրաստ լինեն իրենց մասնագիտական, մանկավարժական փորձը փոխանակելուն, անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացնելու, ընդհանուր առմամբ ՏՀՏ-ների կիրառման ոլորտում ակտիվ համագործակցելուն:

Գործընկերությունը և համագործակցությունը կարող են խթանել տեխնոլոգիական զարգացումը և նպաստել դպրոցի ղեկավարների որոշումների կայացմանը: ՏՀՏ-ների ներդնման և կիրառման ոլորտներում հստակ տեսլական ունենալը կարևոր է դպրոցներում ՏՀՏ-ների ինտեգրման և կառավարման հարցում իմաստուն որոշում կայացնելու համար: Նախաձեռնող դպրոցի ղեկավարները պետք է ուսումնասիրեն բազմաթիվ ուղիներ տեխնոլոգիական ռեսուրսներ ձեռք բերելու համար՝ ուսանողների շրջանում ՏՀՏ-ների հասանելիությունն ու հավասարությունը բարձրացնելու համար:

«ՏՀՏ-ների միջոցով նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու համար դպրոցները պետք է.

- ստեղծեն թիմ, որը բաղկացած կլինի տարբեր հմտություններ և կարողություններ ունեցող ուսուցիչներից,
- ձեռք բերեք նոր տեղեկություններ այլ փորձագետներից, ինչպիսիք են այլ դպրոցների ուսուցիչները,
- կիրառել մենթորական համակարգ՝ ՏՀՏ-ների մասին նվազագույն հմտություններ ունեցող ուսուցիչներին օգնելու համար: Ուսուցիչները պետք է հնարավորություն ունենան մասնակցելու ՏՀՏ վերապատրաստման դասընթացների:

ՏՀՏ-ների ներդրմամբ և կիրառմամբ դպրոցի կառավարման մոդելի կարևոր բաղադրիչ է առաջավոր դպրոցների հետ փորձի փոխանակման ծրագրերի ստեղծումը, առաջավոր կրթության համակարգերին ինտեգրումը» (Adu, 2013, էջ 10–16):



Գծապատկեր 3. ՏՀՏ-ների միջոցով դպրոցի կառավարման օպտիմալ մոդելը

Ընդհանուր առմամբ, դպրոցի ՏՀՏ-ների միջոցով կառավարման օպտիմալ մոդելը ներառում է կրթության կառավարման ժամանակակից սկզբունքները, դպրոցի կառավարման ավանդական և ժամանակակից նորարարական տեխնոլոգիաները, դպրոցի կառավարման ոճերը, ռազմավարությունները, դպրոցի կառավարումը կազմակերպող անձանց մասնագիտական, հաղորդակցական, ռեֆլեքսիվ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիական կոմպետենցիաները, դպրոցի տարբեր ստորաբաժանումների վերահսկողության մեխանիզմները, մշտադիտարկման ընթացակարգերը:

Եզրակացություն

Դպրոցի ՏՀՏ-ների միջոցով կառավարման օպտիմալ մոդելը ներառում է կրթության կառավարման ժամանակակից սկզբունքները, դպրոցի կառավարման ավանդական և ժամանակակից նորարարական տեխնոլոգիաները, դպրոցի կառավարման ոճերը, ռազմավարությունները, դպրոցի կառավարումը կազմակերպող անձանց մասնագիտական, հաղորդակցական, ռեֆլեքսիվ, ինչպես նաև տեղեկատվական – տեխնոլոգիական կոմպետենցիաները, դպրոցի տարբեր ստորաբաժանումների վերահսկողության մեխանիզմները, մշտադիտարկման ընթացակարգերը:

ՏՀՏ-ների ներդրմամբ և կառավարմամբ դպրոցի կառավարման մոդելը դիտարկվում է տարբեր մակարդակներում՝ կազմակերպչական և կառավարչական, տեղեկատվական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական:

Դպրոցի կառավարման մոդելը, տեղեկատվական մակարդակում, ենթադրում է կրթության տարբեր ձևերի ծրագրային և մեթոդական համալիրների ստեղծում և մշտական թարմացում: ՏՀՏ-ների ներդրման և կիրառման տեսանկյունից տվյալ մոդելը ներառում է կրթական ծրագրերի ապահովում, հեռահար-հեռավար սեմինարների, գիտաժողովների, հանդիպումների կազմակերպում, մեթոդական և փորձարարական աշխատանքի տեղեկատվական աջակցության միջոցների մշակում:

Դպրոցի կառավարման այս մոդելն, կազմակերպչական և կառավարչական մակարդակներում, ապահովում է ուսումնական գործունեության բովանդակության և տեխնոլոգիաների, ուսումնական գործընթացի, անձնակազմի, լոգիստիկայի կառավարման գործառնությունների իրականացումը: Այս մոդելի գործառնությունները ներառում են տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն ախտորոշման, կրթության որակի և կրթական աշխատանքի արդյունավետության գնահատման համար:

Հնարավոր չէ հասնել մասնագիտական գործունեության, կառավարման ոլորտներում բարձր արդյունքների, եթե դպրոցի տնօրենի և աշխատակազմի ռեֆլեքսիվ, հաղորդակցական կոմպետենցիաները բավարար չափով ձևավորված և զարգացած չեն:

Օգտագործված գրականության ցանկ

- Մատինյան, Ն. Ռ. (2022). *Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման ուղիները շարունակական կրթության համալրելու մեջ*: Թեկն. Ատ., Եր.:
- Каспржак, А., Кобцева, А., Цатрян, М. (2020). Директора школ в мегаполисах. Как они управляют образовательным процессом // *Образовательная политика*. Т. 82, № 2, էջեր 70–85:
- Лефевр, В. А. (2009). *Лекции по теории рефлексивных игр*. М.:Когито–Центр.
- Лефевр, В. А., Смолян, Г. Л. (2010). *Алгебра конфликта*. 4–е. изд. М.: Книжный дом «Либроком».
- Модели и методы управления персоналом: Российско-британское учебное пособие* (2001)/ под ред. Е.Б. Моргунова // (Серия «Библиотека журнала «Управление персоналом»). М.: ЗАО «Бизнесшкола «Интел-Синтез».
- Панова, И. В. (2007). *Формирование информационно-технологической компетентности будущего руководителя дошкольного образовательного учреждения*. Дис. канд. пед. наук: Нижегород. гос. университет, Нижний Новгород.
- Реализация ценностного подхода в образовании* (2014). Коллективная монография. Отв. ред. Л.А. Ибрагимова, О.И. Истрофилова. Нижневартговск.
- Сергеева, В., Дмитриев, М.(2001). *Управление образовательными системами*. М.
- Тромпенаарс, Ф., Куберг, П. Х. (2019). *100 ключевых моделей и концепций управления*. – М.: Издательство Манн, Иванов и Фербер.
- Филина, А. Г. (2019). Содержание и структура информационной компетентности руководителей образовательных организаций // *Молодой ученый*. № 20 (258), էջեր 519–521: URL: <https://moluch.ru/archive/258/59267/> (մուտք՝ 23.11.2022)

- Adu, E.O. (2013). The use and management of ict in schools: strategies for school leaders // *European Journal of Computer Science and Information Technology (EJCSIT)*, Vol.1, No.2, էջեր 10–16, September 2013 Published by European Centre for Research Training and Development UK (www.ea-journals.org).
- Antonyan, L., Arakelyan, N. (2023). Main components of school management model using information and communications technologies//*Main Issues Of Pedagogy And Psychology*10(1), էջեր 87–98:
- Bush, T. (2011). *Theories of educational leadership and management*: University of Nottingham, UK, Sage.
- Everard, K. B., Morris, G., Wilson I. (2004). *Effective School Management*. Paul Chapman Publishing. – London.
- Hou, Y., Cui, Y., Zhang, D. (2019). Impact of instructional leadership on high school student academic achievement in China // *Asia pacific education review*. 2019. Vol. 20. No. 4. էջեր 543–558:
- Puffitt, R., Stoten, B. and Winkley, D. (1992). *Business Planning for Schools*, London, Longman.
- Quinn, J. (1993). Managing Strategic Change. In *Managing Change*. Mabey, C. and Mayon-White, B.(1993), (eds.), Paul Chapman Publishing Ltd, UK, գլուխ 6, էջեր 65–84.
- The principles of educational leadership and management* (2010). Edited by Tony Bush, Les Bell and David Middlewood. Ed. 2nd ed., Los Angeles : SAGE.

References

- Matinyan, N. RR. (2022) Usutsch'i masnagitakan reflek'siv hmtut'yunneri zargats'man ughinery sharunakakan krt'ut'yan hamatek'stum [Ways to develop teacher's professional reflective skills in the context of continuing education]: T'ekn. At./, Yer., , 143ej. (In Arm.)
- Kasprzhak, A., Kobtseva, A., Tsatryan, M. (2020). Direktora shkol v megapolisakh. Kak oni upravlyayut obrazovatel'nyy protsessom [Principals of schools in metropolitan areas. How do they manage the educational process?] // *Obrazovatel'naya politika*. T. 82, № 2, ejer 70–85: (In Rus.)
- Lefevr V. A. (2009). *Lekci po teorii refleksivnykh igr* [Lectures on the theory of reflexive games]. M. Kogito– Centr, S. 9–13 (In Rus.)
- Lefevr, V.A., Smolyan, G. L. (2010). *Algebra konflikta* [The conflict of Algebra]. 4–e. izd. M.: Knizhniy dom «Librokom». (In Rus.)
- Modeli i metody upravleniya personalom: Rossiysko–britanskoye uchebnoye posobiye* [Models and methods of personnel management: Russian–British study guide] (2001). Pod red. Ye.B. Morgunova Ser. B–ka zhurn. «Upravleniye personalom» (Seriya «Biblioteka zhurnala «Upravleniye personalom»). M. Biznes–shkola «Intel Sintez». (In Rus.)
- Panova, I. V. (2007). Formirovaniye informatsionno–tekhnologicheskoy kompetentnosti budushchego rukovoditelya doshkolnogo obrazovatel'nogo uchrezhdeniya [Formation of information technology competence of the future head of a preschool educational institution]. Dis. kand. ped. nauk, Nizhegor. gos. universitet, Nizhniy Novgorod, (In Rus).

- Realizatsiya tsennostnogo podkhoda v obrazovanii* [Implementation of the value approach in education] (2014). Kollektiv. monogr. / otv. red. L.A. Ibragimova, O.I. Istrofilova. Nizhnevartovsk. (In Rus.)
- Sergeyeva, V., Dmitriyev M. (2001). *Upravleniye obrazovatel'nyimi sistemami* [Management of educational systems]. (In Rus.)
- Trompenaars, F., Kuberg, P. KH. (2019). *100 klyuchevykh modeley i kontseptsiy upravleniya* [100 key models and concepts of management]. M.: Izdatelstvo Mann, Ivanov i Ferber, (In Rus.)
- Filina, A. G. (2019). Soderzhaniye i struktura informatsionnoy kompetentnosti rukovoditeley obrazovatel'nykh organizatsiy [The content and structure of information competence of heads of educational organizations]: // *Molodoy uchenyy*. № 20 (258). Ejer 519–521. URL: <https://moluch.ru/archive/258/59267/> (data obrashcheniya: 23.11.2022). (In Rus.)
- Adu, E.O. (2013). The use and management of ict in schools: strategies for school leaders // *European Journal of Computer Science and Information Technology (EJCSIT)*, Vol.1, No.2, էջեր 10–16, September 2013 Published by European Centre for Research Training and Development UK (www.ea-journals.org). (In Eng.)
- Antonyan, L., Arakelyan, N. (2023). Main components of school management model using information and communications technologies // *Main Issues Of Pedagogy And Psychology* 10(1), էջեր 87–98: (In Eng.)
- Bush, T. (2011). *Theories of educational leadership and management*: University of Nottingham, UK, Sage. (In Eng.)
- Everard, K. B., Morris, G., Wilson I. (2004). *Effective School Management*. Paul Chapman Publishing. – London. (In Eng.)
- Hou, Y., Cui, Y., Zhang, D. (2019). Impact of instructional leadership on high school student academic achievement in China // *Asia pacific education review*. 2019. Vol. 20. No. 4. էջեր 543–558: (In Eng.)
- Puffitt, R., Stoten, B. and Winkley, D. (1992). *Business Planning for Schools*, London, Longman. (In Eng.)
- Quinn, J. (1993). Managing Strategic Change. In *Managing Change*. Mabey, C. and Mayon-White, B.(1993), (eds.), Paul Chapman Publishing Ltd, UK, գլուխ 6, էջեր 65–84. (In Eng.)
- The principles of educational leadership and management* (2010). Edited by Tony Bush, Les Bell and David Middlewood. Ed. 2nd ed., Los Angeles : SAGE. (In Eng.)

Лилит Антонян

*Соискатель кафедры педагогики Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна,
директор ереванской основной школы №125 имени С. Бюрата
Эл. почта: antonyanlilit5@gmail.com*

ОПТИМАЛЬНАЯ МОДЕЛЬ УПРАВЛЕНИЯ ШКОЛОЙ С ИСПОЛЬЗОВАНИЕМ ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ

В статье рассмотрена оптимальная модель управления школой с внедрением и управлением ИКТ на разных уровнях: организационно-управленческом, информационном, учебно-методическом, научно-исследовательском. На разных уровнях управления руководители школ должны обладать достаточным уровнем профессиональных, рефлексивных, управленческих, коммуникативных, а также технологических компетенций. Невозможно достичь высоких результатов в сферах профессиональной деятельности и управления, если недостаточно сформированы и развиты рефлексивные и коммуникативные компетенции директора и сотрудников школы.

На информационном уровне модель управления школой предполагает создание и постоянное обновление программно-методических комплексов различных форм обучения. С точки зрения внедрения и применения ИКТ эта модель включает обеспечение образовательных программ, организацию дистанционных семинаров, конференций, совещаний, разработку средств информационного обеспечения методической и экспериментальной работы. На организационно-управленческом уровне модель управления школой обеспечивает реализацию функций управления содержанием и технологией образовательной деятельности, образовательным процессом, персоналом, логистикой. В функции этой модели входит использование информационных технологий для диагностики качества образования и оценки эффективности воспитательной работы.

Ключевые слова: профессиональная компетентность, рефлексивная компетентность, технологическая компетентность, медиатека, рефлексивный менеджмент, стратегическое планирование

Lilit Antonyan

*Ph.D. student of Pedagogy Chair at the Armenian
State Pedagogical University after Kh. Abovyan,
Director of the Yerevan School #125 after Smbat Byurat,
Email: antonyanlilit5@gmail.com*

THE OPTIMAL SCHOOL MANAGEMENT MODEL USING INFORMATION AND COMMUNICATIONS TECHNOLOGY

The model of school management involving introduction and management of ICTs is considered at different levels: organizational and managerial, informational, methodological, and scientific research level. At different levels of management, school managers must have a sufficient level of professional, reflexive, managerial, communicative, and technological competencies. It is not possible to achieve high results in the fields of professional activity and management if reflexive and communicative competences of the school principal and staff are not sufficiently formed and developed.

At the informational level, the school management model implies creation and constant updating of the relevant software and methodical complexes of various forms of education. From the point of view of implementation and application of ICT, this model includes provision of educational programs, organization of remote seminars, conferences, meetings, development of information support tools for methodical and experimental work.

At the organizational and managerial levels, the school management model ensures the implementation of educational activity content and technology, educational process, personnel, and logistics management functions. The functions of this model include usage of information technologies for analysis of the quality of education and the evaluation of the effectiveness of educational work.

Key words: professional competence, reflexive competence, technological competence, media library, reflexive management, strategic planning

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. ապրիլի 7-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. ապրիլի 14-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. մայիսի 10-ին:

Արմինե Մատենցյան
*Եվրոպական համալսարանի Զբոսաշրջության և
սպասարկման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ matentsyana@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2023.1-119

ԱՅԼԸՆՏՐԱՆ-ՔԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄ

Հոդվածում դիտարկվում է փորձառական զբոսաշրջության հայեցակարգը: Զբոսաշրջության զարգացման որոշակի փուլում սկսեցին ի հայտ գալ ավանդականից ակնհայտորեն տարբերվող առաջարկներ՝ այսպես կոչված «հակազբոսաշրջության» ձևաչափեր: Սրանք քիչ հայտնի զբոսաշրջային ուղիություններով, զանգվածային զբոսաշրջության երթուղիներից և տեսարժան վայրերից հեռու իրականացվող ճանապարհորդություններ են, որոնց արժեքային նորարարությունը ճանապարհորդի կողմից ոչ ստանդարտ փորձառություն ձեռք բերելն է «Փորձառական զբոսաշրջություն» եզրույթն առաջարկել է ֆրանսիացի ժող. Անրի, 1990 թվականին, ով մշակել է նաև դրա մեթոդներն ու մասսայականացրել դրանք:

Փորձառական զբոսաշրջությունը կարող է վերագրվել «կապույտ օվկիանոսի» ռազմավարությանը, անհայտ շուկայական տարածությունը: Հետևաբար՝ այս հայեցակարգը կարող է նշանակալի հնարավորություններ ստեղծել ոլորտում ՓՄՁ զարգացման համար:

Հոդվածում անդրադարձ է արվել փորձառական զբոսաշրջության տեսակներին, ներկայում ձևավորված բավական լայն շրջանակի հիմնական հասկացություններին: Համա-

կարգված ներկայացվել են փորձառական զբոսաշրջության ավելի քան երեք տասնյակ ձևեր՝ խմբավորված ութ տեսակներում, ներկայացվել են դրանց հիմնական սկզբունքները և շուկայում դիրքավորման խնդիրները: Քննարկվել է փորձառական ճանապարհորդությունների ձևերի ժամանակագրական վերափոխման միտումը, ինչը դրսևորվում է «այլընտրանքային» հասկացությունից՝ «հայեցակարգային» զբոսաշրջության գաղափարին անցումով:

Հիմնաբառեր. այլընտրանքային զբոսաշրջություն, փորձառական զբոսաշրջություն, ընկղմում միջավայրի մեջ, ոչ ստանդարտ փորձառություն, զբոսաշրջության հայեցակարգային միտումներ:

Ներածություն

Զբոսաշրջության ոլորտում ավելի ու ավելի մեծ տարածում են գտնում այնպիսի զբոսաշրջավայրերը, ճանապարհորդական գաղափարներն ու զբոսաշրջային առաջարկները, որոնք շուկայում դիրքավորվում են որպես ոչ զանգվածային: Այլընտրանքային նպատակներով հայտնի տեսարժան վայրեր այցելելը կամ առհասարակ ոչ ստանդարտ զբոսաշրջային ուղևորությունների ընտրությունը, դասական էքսկուրսիոն ծրագրերի փոխարեն բոլորովին նոր փորձառությունը և անսովոր տպավորությունները նախընտրելը՝ զբոսաշրջության ոլորտում ձևավորված միտումներից է: Տեղացիների տներում հյուրընկալվելը և փոխանակման համակարգով ուղևորություններն այլևս նորություն չեն դեստինացիայի մշակույթի և հասարակական միջավայրում ընկղմվելու սիրահարների համար: Ներկայումս նման ճանապարհորդությունների նոր ձևաչափեր են ի հայտ գալիս: Գոյություն ունեն ծրագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում կամավորական գործունեությունը զուգորդել ձամփորդելու հետ: Օրինակ, մի շարք երկրներում գործող Au Pair ծրագիրը (AuPairWorld) հնարավորություն ընձեռում հյուրընկալվել մեկ այլ երկրի ընտանիքում և որևէ տնային աշխատանք կատարել (տան տերերի երեխաներին խնամել և այլն): Որպես փոխհատուցում առաջարկվում է սնունդ, կացարան, որոշակի գումար՝ փոքր ծախսերի համար, հյուրընկալող երկրի լեզուն սովորելու (կախված երկրից՝ լեզվի նման դասընթացների համար վճարում է հյուրընկալող ընտանիքը կամ Au Pair ծրագիրը), ինչպես նաև ընդունող երկրի մշակույթին ծանոթանալու հնարավորություն: Մեկ այլ օրինակ է WWOOF շարժումը, որը միավորում է ֆերմերներին և գյուղատնտեսական աշխատանքներ կատարող կամավորներին ամբողջ աշխարհում (WWOOF): Նոր Զեվանդիայում և Ավստրալիայում կենդանիների խնամքին առնչվող կամավորական ծրագրերում ընդգրկվածներին առաջարկվում է կացարան և սնունդ:

Համաշխարհային զբոսաշրջության հետաքրքիր միտումներից է փորձառական ճանապարհորդության պահանջարկի ձևավորումը՝ ավելի ընկղմող, աուտենտիկ կամ վավերական, արկածային և/կամ ակտիվ ճանապարհորդության գաղափարը փոխանցելու համար: Զբոսաշրջիկները գնալով հեռա-

նում են ստանդարտացված փաթեթային շրջագայություններից՝ հոգուտ անհատականացված առաջարկի, որը նրանց թույլ է տալիս ճանապարհորդել ավելի խոր գգացմունքային և անհատական մակարդակով:

Ավելին, ոլորտում բարձրացել է փորձառական զբոսաշրջության կարևորության ըմբռնումը: Առաջադեմ զբոսաշրջային ընկերությունները ձգտում են զբոսաշրջիկներին տրամադրել հենց այդպիսի փորձառություն՝ կենտրոնանալով հիմնականում երեք բաղադրիչի վրա՝ ոգեշնչում, անհատականացում և ինքնաբացահայտման հնարավորություն (Rafat, 2014): Ընդ որում, դեռևս սակավաթիվ են այս բնագավառում տեսական ուսումնասիրությունները, ինչպես նաև ընկղմող ծամփորդությունների կուտակված փորձը մեթոդապես ամբողջացնելու փորձերը: Սույն հետազոտությամբ փորձ է արվել ինչ-որ չափով լրացնել այդ բացը¹:

Մեթոդաբանական և տեսական հիմքեր

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել զբոսաշրջության տեսության և գործնական ոլորտի հեղինակավոր մասնագետների ուսումնասիրությունները, գիտամեթոդական դատողություններն ու ձևակերպումները, տուրիստիկայի գիտական գրականության մշակումները, հեղինակավոր ամսագրերի հոդվածները և տարբեր մասնագիտացված համացանցային ռեսուրսները: Խնդրո առարկան հետազոտվել է տերմինաբանական համեմատության, ինչպես նաև միջազգային զբոսաշրջության պրակտիկայում ձևավորված այլընտրանքային զբոսաշրջության մի շարք տեսակների և դրանց ենթաձևերի բովանդակային և կազմակերպման ձևաչափերի վերլուծության և դասակարգման մեթոդներով:

Արդյունքներ և քննարկում

«Փորձառական զբոսաշրջություն» հասկացության ձևավորման պատմական ակնարկ

«Փորձառական զբոսաշրջություն» հասկացությունը ի հայտ եկավ 1990 թվականին, երբ Ֆրանսիացի լրագրող Ժոել Անրին Ստրասբուրգում հիմնեց փորձառական զբոսաշրջության Latourex լաբորատորիան՝ համախոհների յուրահատուկ մի ակումբ, որը կոչված էր ձևավորելու ճանապարհորդությունների նոր փիլիսոփայություն: Անրին համոզված էր, որ Latourex-ը ոչինչ չի վաճառելու՝ ոչ մի ծառայություն, ոչ մի ապրանք, անկախ նրանից, թե որքան պահանջված են դրանք: Իր գաղափարների մեծ մասը հիմնված

¹ Որպես ուսումնասիրվող ուղղությամբ Հայաստանում տարվող կարևոր աշխատանք, անհրաժեշտ է նշել Սևծովյան ավազանի երկրներում ժառանգության և մշակույթի վրա հիմնված փորձառական զբոսաշրջության խթանման "Pro Extour" միջազգային նախագիծը, որի գործընկերներից մեկը Երևանի պետական համալսարանն է: Նախագծի իրականացման շրջանակում ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնում բացվել է փորձառական զբոսաշրջության հաբ-լսարան, որի նպատակն է փորձառական զբոսաշրջության ոլորտում հետազոտությունների անցկացումն ու փորձարկումը, նորարարական գաղափարների խթանումը, փորձառական զբոսաշրջությամբ զբաղվող ձեռներեցների մասնագիտական հմտությունների ձևավորումը:

Էր անվճար այցելության սկզբունքների վրա: Անրին կարծում էր, որ զբոսաշրջային ճանապարհորդությունը զբոսաշրջիկի համար պետք է բացահայտում լինի, և սա ավելին է, քան պարզապես որևէ երկրի տեսարժան վայրեր դիտելը: Բացի այդ, այսպես կոչված «զբոսաշրջային թակարդներ» այցելելը (զբոսաշրջիկների համար հատուկ կազմակերպված և սարքավորված տեսարժան վայրեր, տարածքներ և այլն) երկիրը բացահայտելու ամենավատ ճանապարհն է, քանի որ այնտեղ շատ քիչ են տեղացիները, գրեթե ներկայացված չեն ավանդույթները և բացակայում է կյանքի իսկությունը: Անրիի գաղափարի համաձայն՝ փորձառական զբոսաշրջությունը ճանապարհորդության մոտեցում է, որի ժամանակ զբոսաշրջիկները չեն այցելում սովորական զբոսաշրջային վայրեր (կամ այցելում են դրանք անսովոր ձևով կամ անսովոր նպատակով): Սա զբոսաշրջության այլընտրանքային ձև է, որտեղ ուղղությունները ընտրվում են ոչ թե իրենց ստանդարտ տուրիստական արժանիքների հիման վրա, այլ ինչ-որ գաղափարի կամ փորձի հիման վրա: Փորձառական զբոսաշրջությունը հիմնված է այն փաստի վրա, որ ճանապարհորդությունը դառնում է խաղ, որի ժամանակ այցելուն փորձարկում է տարածությունը և շրջակա միջավայրը ճանաչելու անսովոր ձևը՝ ընկղմվելով դրա մեջ: Զբոսաշրջության փորձառական ձևերի խաղային բնույթը կարմիր թելի պես անցնում է ժողով Անրիի ողջ հայեցակարգի միջով (Henry, 2016, էջեր 49–51):

Այսպիսով, կարելի է առանձնացնել ժողով Անրիի առաջարկած փորձառական տուրիզմի հիմնական սկզբունքները՝ ոչ ստանդարտ ճանապարհական փորձ, անսովոր նպատակ, որը միավորում է մասնակիցներին նոր վայրին ծանոթանալու հեռանկարի շուրջ, գործընթացի մեջ ընկղմվելը և նոր զգացմունքային փորձառությունները, ինքնամոտիվում և արդյունքների քննարկում համախոհների հետ:

Բացի այդ, ժողով Անրիի առաջարկած շատ գաղափարներ հաջողությամբ դրամայնացվել են էքսկուրսիաների և փորձառական տուրերի տեսքով: Ավելին, փորձառական ճանապարհորդության գաղափարները դառնում են զբոսաշրջային հոսքերի կառավարման գործիք և զբոսաշրջային մոտիվացիա և պահանջարկ ձևավորելու հնարավորություն, որոնք օգտագործվում են տեղական իշխանությունների կողմից դեստինացիաների պլանավորման և տարածքային զարգացման համար:

2005 թվականին Ռեյչել Էնթոնիի հետ Ժ. Անրին հրատարակում է «Փորձառական ճանապարհորդության ուղեցույց» (The Lonely Planet Guide to Experimental Travel), որը դառնում է առաջին ոչ ստանդարտ ուղեցույցներից մեկը (Antony, Henry, 2005): Ավանդական ուղեցույցը նախատեսված է զբոսաշրջիկին այցելավայրում կողմնորոշելու համար, օգնելու նրան ընտրել երթուղին տեսարժան վայրերի նկարագրության միջոցով: Փորձառական ճանապարհորդության ուղեցույցը չի պարունակում սովորական նկարագրություններ, այն զբոսաշրջիկին առաջարկում է ընդամենը վարկած, ճանապարհորդության գաղափար, դրա իրականացման մեթոդներ, անհրաժեշտ պայմաններ և սարքավորումներ: Զբոսաշրջիկ-փորձարարը կարող է ինք-

նուրույն ստուգել վարկածը՝ օգտագործելով ուղեցույցում առաջարկված մեթոդները, իսկ հեղինակները՝ որպես վարկածի հիմնավորում, հնարավորություն են ստանում ներկայացնելու սեփական փորձի և ստացված արդյունքների նկարագրությունը:

Գրականության ակնարկ

Ժոել Անրիի գաղափարները, որոնք հրապարակվել են «Փորձառական ճանապարհորդության ուղեցույց»-ում, կարող էին մնալ ընդամենը տարօրինակ կոնցեպտներ, որոնք հետաքրքիր կլինեին միայն անսովոր զգայական փորձառությունների ընտրյալ սիրահարների համար: Այնուամենայնիվ, մարդաշատ ուղղություններով և ստանդարտ հուշանվերներով զանգվածային զբոսաշրջությունից հոգնած հասարակության զարգացումը պայմանավորեց զբոսաշրջության փորձառական ուղղության աճող ժողովրդականությունը: Ծանփորդությունն ինքնին մարդու համար միշտ եղել է սովորական, առօրյա իրականությունից կտրվելու, իրեն նոր դերում փորձելու, ուրիշներից տարբերվելու միջոց: Սոցիալական ցանցերի զարգացումը հնարավորություն է տվել կիսվել այս փորձով: Արդյունքում շատերի համար հասանելի են դարձել հայտնի ուղղությունները, զանգվածների համար զբոսաշրջությունը դարձել է ժամանցի միջոց և արդեն դադարել է հաջողության և սոցիալական նշանակության որոշիչ գործոն լինել: Այսպիսով, սա մի կողմից հանգեցրել է նոր, անսովոր տեսարժան վայրերի և հանգստի տեսակների արժևորմանը, իսկ մյուս կողմից ձևավորել են ճանապարհորդների հատուկ խմբեր, որոնք սոցիալական ցանցերի շնորհիվ ստեղծում են այդ թրենդները: Այսպիսով, փորձառական տուրիզմը դարձել է իրական ֆենոմենոլոգիական միտում, որը շատ առումներով տարբերվում է Ժոել Անրիի մշակած բնօրինակ հայեցակարգից: Սակայն մինչ այժմ այն արժանի արտացոլում չի գտել գիտական աշխատություններում և ակնարկներում: Իր հատկություններով փորձառական զբոսաշրջությունը, որպես ստանդարտ զանգվածային ճանապարհորդության այլընտրանք, մոտ է «այլընտրանքային զբոսաշրջություն» հասկացությանը, այս երկու տերմինները երբեմն փոխարինվում են «հակատուրիզմ» հոմանիշով:

Արտասահմանյան պրակտիկայում փորձառական ճանապարհորդությունները ուսումնասիրվում են որոշ վերլուծական կազմակերպությունների կողմից (օրինակ, Skift-ի զեկույցներում): Ս. Ռոբինսոնը կարծում է, որ «փորձառական ճանապարհորդությունը» ի սկզբանե ստեղծագործական է և ունի ցանկացած տարածք զբոսաշրջային վայրի վերածելու ներուժ, և դրա առարկայական դաշտը գտնվում է տարբեր գիտակարգերի հատման կետում՝ մշակութային ուսումնասիրություններ, վարքագծային հոգեբանություն, աշխարհագրություն, տուրիստիկա և այլն, և ներկայումս չկա ակադեմիական գիտություն, որն ուսումնասիրում է զբոսաշրջության և էքսպերիմենտալիզմի հարաբերությունները (Robinson, 2016, էջեր 14-17):

Ինչպես նշվեց վերևում, հրապարակումներում հանդիպող «փորձառական զբոսաշրջություն» եզրույթի ամենամոտ անալոգը «այլընտրանքային զբոսա-

շրջություն» հասկացությունն է, ուստի դիտարկենք վերջինի վերաբերյալ առկա տեսակետները՝ հասկանալու համար, թե արդյո՞ք այս երկու հասկացությունները կապված են, թե՞ դրանք տարբեր երևույթներ են:

RSCI eLibrary համակարգում հայտնաբերվել է 10258 արդյունք «այլընտրանքային տուրիզմ» հարցման համար, Google Scholar համակարգում՝ 17900 արդյունք: Դրանցից միայն մի փոքր մասն է հատկացված փորձառական զբոսաշրջության թեմային: Մասնավորապես, լայնորեն ուսումնասիրված է զբոսաշրջության գյուղական և էկոլոգիական ձևերի խնդիրը որպես այլընտրանքային զբոսաշրջության ուղղություն (Кундигус, Чемянина և համահեղ., 2011, Фоменко, Ленкова, 2019): Որպես այլընտրանքային՝ տարբեր հեղինակներ հաճախ դիտարկում են զբոսաշրջության վիրտուալ և արկածային ձևերը, էնոտուրիզմը (գինու զբոսաշրջությունը), ինչպես նաև էթնիկ զբոսաշրջության որոշ տեսակներ (Елохина, 2018), (Санкин, Шекинова, 2018, Фоменко, Ленкова, 2019): Կան նաև մի շարք հրապարակումներ, որոնք նվիրված են անմիջապես այլընտրանքային տուրիզմի հայեցակարգի քննարկմանը (Брасалес և համահեղ., 2020, Спорыхина, 2019):

Հեղինակների մեծ մասը համակարծիք է, որ այլընտրանքային զբոսաշրջությունը զանգվածային զբոսաշրջության հակապատկեր է, որն իր էությանը մոտ է, եթե ոչ նույնական, կայուն զբոսաշրջությանը: Համաձայն ՄԱԿ ԶՀԿ-ի, այլընտրանքային կարելի է համարել զբոսաշրջության բոլոր տեսակները, որոնք համապատասխանում են կայուն զարգացման գաղափարին, իսկ այլընտրանքային զբոսաշրջությունն ինքնին «զբոսաշրջության զարգացման և խթանման պլանավորված և կառավարվող ձև է, որում առկա է զբոսաշրջիկի և հյուրընկալողի մշակույթների, նպատակների ու ակնկալիքների մերձեցում, ինչը նպաստում է փոխըմբռնման ավելի բարձր մակարդակին, դեստինացիայի ավելի խորը ընկալմանը և զբոսաշրջային հետաքրքրությունների առավել ամբողջական բավարարմանը» (UNWTO. Thesaurus on Tourism):

Կան նաև քննադատական տեսակետներ «այլընտրանքային տուրիզմ» հասկացության վերաբերյալ: Մասնավորապես, այն քննադատների կողմից դիտվում է որպես ոչ այլ ինչ, քան զանգվածային զբոսաշրջության բնույթից դժգոհողների նորաձև գաղափար (Елохина, 2018, էջեր 89–93): Քննադատները պնդում են, որ այլընտրանքային զբոսաշրջությունը հստակ սահմանում չունի, և դրա այլընտրանքայինության չափանիշներն ու պարամետրերը պարզ չեն (Cohen, 1989, էջեր 127–142):

Այսպիսով, կարելի է որոշակի եզրակացություն անել. «փորձառական տուրիզմ» եզրույթը, որը ներդրվել է 1990 թվականին Ժոել Անրիի կողմից, այսօր բավարար չի արտացոլվում գիտական գրականության մեջ. ռուսալեզու կոնտենտում թեմայի վերաբերյալ գտնվել է միայն մեկ գիտական հրապարակում (Афанасьева, Афанасьев, 2021), և այս թեմայով անգլերեն գիտական հրապարակումները շատ հազվադեպ են: Մինչդեռ գործնականում արագորեն զարգանում են զբոսաշրջության փորձառական ձևերը, որոնք այլ կերպ են կոչվում՝ «այլընտրանքային տուրիզմ», «հակատուրիզմ», «ինտե-

լեկտուալ տուրիզմ», «հեղինակային տուրիզմ»-ն այլն:

Այլընտրանքային կամ փորձառական զբոսաշրջության գործնական ձևերը

Ելնելով վերը նշված սահմանումներից՝ մենք տեսնում ենք, որ այլընտրանքային տուրիզմը հաճախ դիրքավորվում է որպես կայուն զբոսաշրջության տեսակ: Գործնականում այն իրականացվում է լայն ձևաչափով, մասնավորապես, կարելի է նշել տեղական բնակչությանը օգնելու կամ վայրի բնության պաշտպանության ծրագրեր իրականացնելու կամավոր ձամփորդությունները, որոնք մի կողմից իսկապես կայուն զբոսաշրջության մեխանիզմ են, իսկ մյուս կողմից՝ մասնակիցների համար կրում են հստակ փորձառական բնույթ: Նաև այլընտրանքային զբոսաշրջության համեմատաբար նոր միտում է համարվում այսպես կոչված «ետնախորշային տուրիզմը» (slum tourism, tryщёбный туризм)² որպես քաղաքային տուրիզմի տեսակ, այն ուղղված է աղքատության մասին գիտելիքների և դրա դեմ պայքարի միջոցների հանրահռչակմանը, և նման գործունեությունից ստացված հասույթն ուղղվում է օգնելուն տեղական համայնքներին, որոնց աղքատ, հետամնաց բնակավայրերը ցուցադրվում են զբոսաշրջիկներին: Մյուս կողմից, զբոսաշրջիկները, ովքեր հանդես են գալիս որպես ետնախորշային տուրերի սպառողներ, հաճախ առաջնորդվում են ոչ թե աղքատներին օգնելու գաղափարով, այլ սեփական նյարդերը ջղաձգելու, սովորականից տարբերվող կենսամիջավայր տեսնելու, ծայրահեղ հույզեր գգալու ցանկությամբ: Մեկ այլ օրինակ կարող են լինել զբոսաշրջային այն առաջարկները, որոնք հիմնված են իմերսիվ կամ ընկղմող, սթորիթելինգի և առասպելացման տեխնոլոգիաների վրա (օրինակ՝ այցելություններ լեգենդների և միֆերի թանգարաններ և այլն) (Afanasiev, Afanasieva, 2017, էջեր 27–49):

Փորձառական տուրիզմի ձև կարելի է համարել նաև ջեյլո զբոսաշրջության (Jailoo tourism³) և բնիկ զբոսաշրջության (Indigenous tourism³) դրսևորումները, որոնք գտնվում են զբոսաշրջության էթնիկ և էկոլոգիական տեսակների հատման կետում: Իրոք, շատ ձանապարհորդներ, ովքեր ձգտում են ապրել բնիկ մարդկանց մեջ, առաջին հերթին ցանկանում են վերապրել անսովոր փորձ, լինել այլ դերում, զգալ, թե ինչ է նշանակում հնարավորինս ներդաշնակ ապրել բնական միջավայրի հետ:

Հոդվածը պատրաստելու շրջանակներում խորը որոնում է իրականացվել

2 Jailoo – դրդգերենից թարգմանաբար նշանակում է «ամառային արոտավայր» և վերաբերում է Ղրդզստանի զբոսաշրջության որոշակի փորձին: Ղրդզ քոչվորները ձմռանը ապրում են հովտային գյուղերում, իսկ ամռանը շարժվում են դեպի լեռներ: Որոշակի շրջաններում ապրող դրդգներն ունեն կիսաքոչվորական կենսակերպ, քանի որ Ղրդզստանի լեռնային լանդշաֆտներն ավելի հարմար են անասնաբուծության համար, քան բուսաբուծության:

3 Indigenous tourism – բնիկ զբոսաշրջությունը բնութագրվում է որպես զբոսաշրջային բիզնես, որը պատկանում, շահագործվում կամ վերահսկվում է բնիկ ժողովուրդների կողմից: Սա կայուն զբոսաշրջության տեսակ է, որը պատասխանատվություն է դրսևորում տեղական բնիկ համայնքի նկատմամբ և նպաստում է նրա ավանդական բնակության տարածքի զարգացմանը:

Google և Yandex որոնողական համակարգերում, սոցիալական ցանցերում (Facebook, Instagram), զբոսաշրջային արձագանքների և ակնարկների հարթակներում (TripAdvisor, Otravik և այլն)՝ օգտագործելով «այլընտրանքային» և «փորձառական» հիմնաբառերը՝ գումարած «զբոսաշրջություն», «զբոսաշրջության տեսակներ», «տուրեր», «շրջագայություններ» բառերը: Չհաջողվեց գտնել այնքան արդյունք, որքան սպասվում էր, թեև ստացված տեղեկատվությունը թույլ է տալիս որոշակի հետևություններ անել: Մասնավորապես՝ արձանագրվել են բազմաթիվ հեղինակային բլոգներ և տեղեկատվական ռեսուրսներ, որոնք ներկայացնում են հետաքրքիր գաղափարներ և առաջարկություններ ավանդական հանգստից, ծանոթ ուղղություններից և հանրահայտ տեսարժան վայրերից ձանձրացած ճանապարհորդների համար: Դրանցից մի քանիսը ներկայացվում են ստորև (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ոչ ստանդարտ (այլընտրանքային) զբոսաշրջությանն առնչվող համացանցային ռեսուրսները

	Համառոտ նկարագրություն
www.transformationaltravel.com	TransformationalTravelCouncil – Փոխակերպող ճանապարհորդությունների խորհուրդ՝ միջազգային հասարակական կազմակերպություն է, որը խթանում է զբոսաշրջության այլընտրանքային ձևերը, հավաքում և ներկայացնում է ոչ ստանդարտ ճանապարհորդությունների կազմակերպման փորձը, խորհրդատվական օգնություն է տրամադրում զբոսաշրջային ընկերություններին և անհատներին
www.latourex.org	Ժոել Անրիի «Լատուրեքս» փորձառական զբոսաշրջության լաբորատորիայի (LATOUREX – Laboratory of Experiential Tourism) կայքը, որը ներկայացնում է փորձառական տուրիզմի գաղափարներ
https://travelcollecting.com	Հեղինակային կայք, որը ստեղծվել է ոչ ստանդարտ զբոսաշրջության փորձը կուտակելու, ներկայացնելու, ինչպես նաև ճամփորդությունների կազմակերպման նպատակով
https://purelifeexperiences.com	Հարթակ, որը հավաքում է անսովոր ճամփորդությունների դեպքերի ուսումնասիրությունները, որոնում է հետաքրքիր զբոսաշրջային արդյունք, որը փոխում է մարդու ստանդարտ ընկալումը, ոգեշնչում է ճանապարհորդներին անհատական մակարդակում՝ առաջացնելով խորը զգացմունքներ, այդ թվում՝ սթորիթելինգի (storytelling) էֆեկտների միջոցով

www.thealternativetravelguide.com	The Alternative Travel Guide by Sasha Naslin – Սաշա Նասլինի այլընտրանքային ճանապարհորդական ուղեցույցը, որը ներկայացնում է հեղինակի ճամփորդական փորձը, պարունակում է խորհուրդներ զբոսաշրջիկների համար, ինչպես նաև այլընտրանքային տուրիզմի կազմակերպման գաղափարներ
www.experientialstar.com	Կայք, որը դիրքավորվում է որպես ոչ ստանդարտ, արկածային զբոսաշրջային փորձառությունների անվճար հավաքածու: Ռեսուրսի այցելուները կարող են նաև օգնություն ստանալ իրենց դուր եկած ճանապարհորդությունը կազմակերպելու հարցում
www.roadjunky.com/1201/101-experimental-travel-ideas	101 Experimental Travel Ideas – Փորձառական ճանապարհորդության 101 գաղափար՝ ոչ ստանդարտ զբոսաշրջային գաղափարների և խորհուրդների բլոգ
www.nathab.com	Nat Hab – կազմակերպություն, որն ունի երկու նպատակ՝ բնության պահպանում Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հետ համագործակցությամբ և այդ նպատակով ճանապարհորդությունների կազմակերպում: Nat Hab-ի առաքելությունն է խորը փորձառությամբ էկոտուրիստական գործունեության կազմակերպումը, որի հասույթը ուղղվում է տեղական համայնքներին և վայրի բնությանը աջակցելուն

Այսպիսով, գործնականում զբոսաշրջության այլընտրանքային ձևերը, որոնք նպաստում են տարածքի կայուն զարգացմանը, կարելի է համարել փորձառական՝ զբոսաշրջային ոչ ստանդարտ փորձ ձեռք բերելու առումով: Հետևաբար, բոլոր տեսակի ակնարկներում «փորձառական» կոչվող ուղեցույցներն ու առցանց ռեսուրսները, զբոսաշրջության այլընտրանքային և փորձառական ձևերը հիմնականում խառնվում են և դիտարկվում որպես նույնական հասկացություններ: Օրինակ, Սաշա Նասլինի «Այլընտրանքային ճանապարհորդական ուղեցույց»-ը ոչ միայն բլոգ է և անսովոր ճամփորդությունների գաղափարների հավաքածու, այլ նաև առաջարկում է ռեսուրսներ դրանց իրականացման համար (ուղեբեռի պահասենյակների, հյուրատների, հոսթելների և ռեստորանների հասցեներ ու գներ, տեղական լեզուների ուսումնասիրության փորձագետների և անսովոր էքսկուրսիաների զբոսավարների կոնտակտային տվյալներ և այլն):

TripAdvisor-ում գտնվեց մի քանի առաջարկ ընկերություններից, որոնք իրենց դիրքավորում են որպես «հակատուրիստական», օրինակ՝ We Hate Tourism («Մենք ատում ենք զբոսաշրջությունը»): Նման ընկերություններն առաջարկում են շրջել քաղաքներում «ոչ տուրիստական» երթուղիներով, ծանոթանալ տեղի բնակիչների կողմից սիրված վայրերին, սակայն նրանց ծառայություններից օգտվող զբոսաշրջիկների ակնարկներում հաճախ

հայտնվում են բացասական կարծիքներ, որ դրանք սովորական շրջագայություններ և էքսկուրսիաներ են, բայց գերաբժեք:

Խաղային բնույթը և ոչ ստանդարտ փորձառությունը շարժիչ ուժ են հանդիսանում էքսկուրսիոն արդյունքի նոր ձևաչափերի համար (քվեստային շրջագայություններ, հեղինակային շրջագայություններ, շրջագայություններ գերեզմանոցներով, կատակոմբներով, գետնանցումներով և տանիքներով): Եվ ինչպես այլընտրանքային և զանգվածային զբոսաշրջության դեպքում, այնպես էլ հեղինակային էքսկուրսիոն արդյունքը հակապող է գործում զանգվածային տեսարժան վայրերի կամ ստանդարտ թեմատիկ էքսկուրսիաների համար: Ստացված արդյունքների զգալի մասը հենց այլընտրանքային, հեղինակային էքսկուրսիաներն են, որոնց համար ձևավորվում են առանձին կայքեր՝ օրինակ Tripster-ը: Սակայն այս հոդվածի շրջանակներում հեղինակային էքսկուրսիաների առանձնահատկություններն ու խնդիրները հնարավոր չէ դիտարկել որպես հայեցակարգային զբոսաշրջային և էքսկուրսիոն գործունեության ձևաչափ:

Փորձառական զբոսաշրջության սկզբունքները

Փորձառական ճանապարհորդությունների առկա պրակտիկայի հիման վրա կարելի է առանձնացնել դրանց հիմնական սկզբունքներից մի քանիսը.

Իսկություն. Իսկական փորձառական ճանապարհորդությունը դուրս է գալիս տեսարժան վայրերի մակերեսային դիտարկման շրջանակներից՝ կենտրոնանալու իսկության և ոգեշնչման վրա:

Գիտակցված մոտեցում. այլընտրանքային զբոսաշրջության կարևոր հատկանիշ է, որը հիմնված է այնպիսի տպավորությունների և հաճույքի ստացման վրա, որոնք դեստինացիայի միջավայրում խորասուզվելուն խոր զգացմունքային արձագանքի արդյունք են: Միաժամանակ զբոսաշրջիկը գիտակցում է, որհոգատար (չվնասող) այցը նպաստում է դեստինացիայի կայուն զարգացմանը:

Իմերսիվություն կամ ընկղմվածություն. զբոսաշրջային ճանապարհորդություն կատարելիս խորը ընկղմում բնության, մշակույթի, հասարակության հույզերի և կենցաղի մեջ:

Ակտիվություն. դեստինացիայի մթնոլորտում ամբողջությամբ ընկղմվելու համար ճանապարհորդները ակտիվ մասնակցություն են ունենում, այլ ոչ թե պարզապես դիտորդի դերում հանդես գալիս: Նրանք փնտրում են գործնական փորձ, շփվում են մարդկանց հետ, փորձում են լեզու սովորել կամ նոր հմտություններ ձեռք բերել:

Փոխակերպող բնույթ. քանի որ փորձառու ճանապարհորդներին ավելի շատ են հետաքրքրում այն վայրը, որտեղ նրանք գտնվում են, նրանք հաճախ ձեռք են բերում դրա շատ ավելի խորը ըմբռնում և կարեկցանքի զգացում սոցիալական և բնական միջավայրի խնդիրների նկատմամբ: Օրինակ, հաճախ են դեպքերը, երբ նրանք վերադառնում են արձակուրդից, որտեղ տեսել են վտանգված տեսակների պահպանման խնդիրներ, և սկսել են աշխատել այդ ուղղությամբ (կամ ավելի շատ նվիրատվություններ անել):

Մտածողության այս փոփոխությունը փոխակերպող է, իսկ հանգստը վերածվում է կյանքը փոխող փորձի:

Կենտրոնացում տեղական համայնքների վրա. մի կողմից, փորձառական ճանապարհորդության իրազեկումն ու խորասուզումը կենտրոնացնում է զբոսաշրջիկի ուշադրությունը տեղական համայնքների, նրանց մշակույթի, սոցիալական խնդիրների վրա, իսկ մյուս կողմից՝ ճանապարհորդության այս ձևաչափը աշխատատեղեր է ստեղծում տեղի բնակիչների համար, քանի որ առանց զբոսաշրջային կրթության մարդը կարող է դառնալ զբոսավար-ուղեկցորդ, ներկայացնել իր արհեստն ու հմտությունները, գումար վաստակել վարպետաց դասեր տալով և այլն:

Կայունություն. զբոսաշրջության փորձառական և այլընտրանքային ձևերը նպաստում են (ձգտում են դրան) տարածքի, դրա բոլոր համակարգերի կայուն զարգացմանը:

Զբոսաշրջության փորձառական ձևերի ըմբռնման և դիրքավորման խնդիրները

Ակնհայտ է, որ վերը թվարկված փորձառական ճանապարհորդության հիմնական նշանները հաճախ անորոշ են և դեկլարատիվ բնույթ ունեն: Ոչ ստանդարտ ճանապարհորդությունների առկա փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ կան զբոսաշրջության ոլորտում դրանց տեղը հասկանալու և ուղղությունների զարգացման գործում դրանց դերի հետ կապված մի շարք խնդիրներ, որոնցից առավել ցայտուն արտահայտված են հետևյալները.

Համացանցում թեգերի ուռճացված տերմինաբանական բազմազանությունը, որը հասկացությունների շփոթություն է առաջացնում, քանի որ այն տերմինների քանակը, որոնք նկարագրում են տվյալ երևույթը (փորձառական, այլընտրանքային, ինտելեկտուալ, տարաշխարհիկ, հեղինակային, ոչ ստանդարտ և այլն), չի նպաստում դրա հստակ բյուրեղացմանը: Այդ իսկ պատճառով այլընտրանքային և փորձառական զբոսաշրջային գործունեության մեջ հաճախ ընդգրկում են զբոսաշրջության ցանկացած ոչ զանգվածային ձև, ներառյալ VIP հատվածը, էկոտուրիզմը, գյուղական և ագրոտուրիզմը և այլն:

«Փորձարարականությունը» կամ էքսպերիմենտալիզմը որպես հաջող մարքեթինգային տեխնիկա. «փորձառական» հայեցակարգը հաճախակի և լայնորեն օգտագործվում է այս կամ այն տուրի, զբոսաշրջային ծառայությունների մատուցման ձևերի համար՝ ուշադրություն գրավելով և ենթագիտակցորեն հաճախորդի մոտ ստեղծելով զբոսաշրջային պրոդուկտի յուրահատկության, անգամ բացառիկության ընկալում: Նման մոտեցումը չեզոքացնում է երևույթի իրական ըմբռնումը՝ այն դարձնելով հիմնականում հաջողակ մարքեթինգային հնարք:

«Հեղինակային տուրիզմ» և «փորձառական տուրիզմ» հասկացությունների անսահմանությունը. ակնհայտ է զբոսաշրջության այս ձևերի հստակ ըմբռնման և որևէ չափանիշի կամ հաստատված բնութագրական նշանների

բացակայությունը, արդյունաբերության շատ փորձագետների կողմից այս երկու հասկացությունների նույնական մեկնաբանելը, մինչդեռ դրանք ունեն կազմակերպչական, հայեցակարգային, բովանդակային բաղադրիչների տարբերություններ:

«Անկայուն կայունության» խնդիրը (Афанасьева, Афанасьев, 2021, էջ 31). նկատվում է որոշակի հակասություն գրոսաշրջության այս ձևերի հայտարարված սկզբունքների և կայուն զարգացման հայեցակարգի փաստացի իրականացման միջև: Դրա ամենավառ օրինակը կարող են լինել Ջոնոլունգմա (Էվերեստ) վերելքներ առաջարկող բազմաթիվ գրոսաշրջային ծրագրերը, որոնք դիրքավորվում են որպես էկոտուրիզմի եզակի պրոդուկտ, որը հասանելի չէ բոլորին, նպաստում է էկոհամակարգերի պահպանմանը, բայց միևնույն ժամանակ այս լեռը վերածում են աշխարհի ամենաբարձր աղբավայրի, ուր վտանգավոր կենսագործընթացներ են զարգանում:

Կան նաև այլ խնդիրներ այլընտրանքային կամ փորձառական կոչվող գրոսաշրջության ձևերի թե՛ դիրքավորման, թե՛ իմաստային բովանդակության մեջ: Այստեղից էլ բխում է դրանց էական ըմբռնման վիճելիությունը, ինչպես նաև գրոսաշրջային ծառայությունների համակարգում դրանց տեղի անորոշությունը:

Փորձենք ամփոփել այսպես կոչված փորձառական (այլընտրանքային, ոչ ստանդարտ, փոխակերպող, ինտելեկտուալ և այլն) ճանապարհորդության գոյություն ունեցող հիմնական տեսակներն ու առաջարկները (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Ժամանակակից պրակտիկայում ներդրված փորձառական գրոսաշրջային արդյունքի հիմնական տեսակներն ու ձևերը

Փորձառական ճանապարհորդության տեսակները (ըստ հիմնական շարժառիթների)	Փորձառական ճանապարհորդության իրականացման առաջարկվող ձևերը
Համի փորձառություններ (Taste experiences) Ընկղմում տեղական մշակույթի մեջ՝ գաստրոնոմիայի և ավանդական խոհանոցի միջոցով	- Խոհարարության վարպետաց դասեր - Գաստրոնոմիական տուրեր և սննդի բազար-շոփինգ (գնումներ շուկաներից) - Մսնդի, գինիների և տնայնագործական խմիչքների համտեսում - Մասնակցություն գաստրոնոմիական փառատոներին
Մշակութային և ոգեշնչող փորձառություններ (Cultural & Inspiration experiences) Ընկղմում տեղական մշակույթի (այդ թվում՝ ազգագրականի) մեջ՝ նրա առանձնահատկությունների ուսումնասիրության միջոցով	- Մշակութային դասեր և սեմինարներ տեղական արհեստներ սովորելու, ավանդական հմտություններ ձեռքբերելու համար - Աշխատանք տեղական համայնքներում, կամավորություն (մշակութային կամավորական տուրիզմ) - Մասնակցություն փառատոներին, տեղական ավանդական տոներին - Գրական շրջագայություններ - Այլ ընկղմող իրադարձություններ և պրակտիկաներ

Հոգևոր փորձառություններ (Spiritual experiences) Ծամփորդություններ՝ հոգևոր պրակտիկաներին միանալու նպատակով	▪ Յոգա-ռեթերիտներ և մեդիտացիաներ ▪ Առողջության վերականգնման և դետոքս տուրեր ▪ Վեդայական տուրեր ▪ Շրջագայություններ՝ տեղական ավանդական ծեսերին և հավատալիքներին ծանոթանալու համար
Բնության և շրջակա միջավայրի փորձառություններ (Nature & Environment experiences) Բնության և կենդանիների հետ էթիկական փոխազդեցություն՝ բնական միջավայրի վրա նվազագույն ազդեցությամբ	▪ Ֆոտո և տեսա սաֆարիներ (վայրի կենդանիների նկարահանում) ▪ Թռչնադիտումներ, կենդանիների դիտումներ: ▪ Այցելություն կենդանիների վերականգնողական կենտրոններ ▪ Էկոկամավորություն (մասնակցություն բնապահպանական ծրագրերին)
Կրթամանցային փորձառություններ (Edutainment experiences) Ծանապարհորդություններ կրթական փորձի և նոր հմտությունների ձեռքբերման համար՝ տեղական սոցիալական միջավայրում ընկղմվելու միջոցով	▪ Դաշտային սեմինարներ, հանրամատչելի դասախոսություններ, հանդիպումներ գիտնականների, փորձագետների, հայտնի մեդիաանձանց հետ ▪ Վարպետաց դասեր (լուսանկարչություն, գեղանկարչություն, դաբբություն, բրուտագործություն, գորգագործություն, իկերանա, օրիգամի, թեյախմության արվեստ և այլն) ▪ Լեզվի դասընթացներ տեղացիների հետ ▪ Հնագույն մարտարվեստների ուսուցում
Հյուրանոցային փորձառություններ (Hotel experiences) Ծանապարհորդություն, որի շարժառիթը յուրահատուկ կենսափորձի համար արտասովոր հյուրանոցներում մնալն է	▪ Բնակություն ավանդական հյուրանոցներում, ինչպիսիք են ոյուկանները Ծապոնիայում, ժառանգության հյուրանոցները Հնդկաստանում, պարադորները Իսպանիայում, արևելյան ժողովուրդների յուրտները, քոչվոր բեդվինների «բեյթ ալ-շար» վրանները և այլն ▪ Բնակություն ստորգետնյա, քարանձավային, ստորջրյա և այլ արտասովոր հյուրանոցներում ▪ Բնակություն բնապահպանական գոտիներում ստեղծված էկո-հյուրանոցներում, որոնք լիովին ներդաշնակ են բնության հետ, և որոնց դիզայնը ինտեգրում է արտաքին միջավայրը ներքինին ▪ Բնակություն այսպես կոչված «էմպիրիկ» հյուրանոցներում, որոնք իրենց հյուրերին առաջարկում են տեղական մշակույթի հետ կապված փորձ (օրինակ՝ Հավայան կղզիներում գտնվող հյուրանոցները, որոնք հյուրերին առաջարկում են ուկուլելեի կամ հուլայի դասեր)

Արկածային փորձառություններ (Adventure experiences) Արկածային զբոսաշրջություն՝ դեստինացիայի շրջակա միջավայրի մեջ (այդ թվում՝ բնական, բնապատմական) ակտիվ փոխազդեցությամբ ընկղմվելու միջոց	▪ Քվեստ-տուրեր (հատուկ սցենարներով մոդելավորված խաղային իրավիճակներ, որոնցում մասնակիցները պետք է ուսումնասիրեն շրջապատող աշխարհը և պատմությունը, որոնեն գանձեր, բացահայտեն գաղտնիքներ, լուծեն հանելուկներ, փրկվեն վտանգներից, մարզեն իրենց հիշողությունը, տրամաբանությունը, հնարամտությունը, ինտուիցիան և այլն) ▪ Էքստրեմալ զբաղմունքներ բնության գրկում (սկուրադայվինգ, առագաստային նավարկություն, վինդսերֆինգ, ռաֆթինգ և կայակինգ, զիփ-լայնինգ, բեյսջամփինգ, լեռնային և անտառային արշավներ, ժայռամագլցում և սբայրանինգ, լեռնային հեծանվավազք, ձիավարություն, սպելեոտուրիզմ, պարագլայդինգ և պարահոքինգ, արտաճանապարհային 4WD, գլեյդսփինգ և այլն) ▪ Արտասովոր արկածներ (օրինակ՝ մարաթոն Չինական Մեծ պատի վրայով, տորնադոների «հետապնդում») ▪ Տիեզերական արկածներ (մարզումներ, թռիչքներ դեպի Երկրի ցածր ուղեծիր) ▪ Ռազմական տուրիզմ (ռազմական գործողությունների շրջաններ այցելելը) ▪ Վայրի բնության գրկում գոյատևման դասընթացներ
--	---

Էթնիկ և ազգագրական փորձառություններ (Ethnic and ethnographic experiences)

Մշակութաձանաչողական տուրիզմի ուղղություն, որը կապված է բնիկների ավանդական բնակավայրերի, ազգագրական գյուղերի, փոքր կամ անհետացող էթնիկ խմբերի, մարդաբանական արգելոցների այցելությունների և այնտեղ ապրելու հետ՝ ավանդական մշակույթի, սովորույթների և կենցաղի մեջ ընկղմվելու նպատակով:

- Ծանապարհորդություններ դեպի ազգագրական գյուղեր և համալիրներ (ծանոթություն ավանդական մշակույթի և սովորույթների հետ)
- Ծանապարհորդություններ դեպի անթրոպոլոգիական արգելոցներ (ծանոթություն փոքրաթիվ, անհետացման եզրին գտնվող էթնիկ խմբերի, քաղաքակրթությունից հետ մնացած ցեղախմբերի ապրելակերպի հետ)
- Զեյլո տուրիզմ (Կենտրոնական Ասիայի երկրներում լեռնային անասնապահների բնակավայրերի այցելություն)
- Աբորիգենային կամ բնիկների տուրիզմ / aboriginal, indigenous tourism (ծանոթություն «էկզոտիկ»/հեռավոր ժողովուրդների, պրիմիտիվ մշակույթ ունեցող համայնքների հետ: Ընդ որում, բնիկ ժողովուրդներն անմիջականորեն ներգրավված են զբոսաշրջության արդյունաբերության կազմակերպման մեջ, տրամադրում են կացարան և սնունդ, իրականացնում են էքսկուրսիոն ծրագրեր)
- Էթնո-հնագիտական տուրիզմ (պատմական հետահայացով ծանապարհորդություններ՝ էթնիկ մշակույթների համապարփակ ուսումնասիրության նպատակով, որտեղ շարժառիթը հետաքրքրությունն է պատմության, հնագիտության, ազգագրական ժառանգության և որոշակի տարածքի բնակչության հին ապրելակերպի նկատմամբ: Դա կարող են լինել գոյություն ունեցող կամ անհետացած մշակույթներ: Զբոսաշրջության ձևում կարևոր դեր են խաղում մշակութային լանդշաֆտները

Եզրակացություն

Մեր կարծիքով, այսօր կարելի է խոսել անգամ ոչ այնքան զբոսաշրջության փորձառական ձևերի մասին, քանի որ եռներով առկա տեսակետների վերլուծությունից՝ զբոսաշրջության խոշոր ավանդական ձևերի որոշակի հոսանքներ իրենց էությանը փորձառական են (օրինակ՝ յոգա-ռեթրիտները սակրալ զբոսաշրջության հոսանք է, յուրտում ապրելը՝ էթնիկ զբոսաշրջության դրսևորում է, բերքահավաքի մասնակցելը՝ գյուղական զբոսաշրջության տարր է), այլ ավելի շուտ հայեցակարգային զբոսաշրջության մասին: Հայեցակարգային մոտեցումն ընդգծում է ծանապարհորդության միասնական գաղափարը, որի իրականացումը թույլ է տալիս ամբողջությամբ ընկղմվել դեստինացիայի սոցիալական կամ բնական միջավայրում, լրացնում

է դրան՝ արտացոլելով զբոսաշրջային ռեսուրսների նկատմամբ ոչ գիշատիչ, ոչ սպառողական, խնայող, մեղմ ու պատասխանատու (և հետևաբար ոչ ստանդարտ) վերաբերմունքը: Հայեցակարգային մոտեցումը կենտրոնացած է այն գաղափարի վրա, որ ճանապարհորդը ձեռք է բերում նոր, ոչ սովորական փորձ: Սա ամենակարևոր արժեքն է, որը զբոսաշրջիկը ստանում է որոշակի տուրի ընթացքում, որտեղ ուշադրությունը կենտրոնացված է զանգվածային զբոսաշրջության հիմնական միտումներից դեպի հայեցակարգային ճանապարհորդություն անցում կատարելու վրա: Այս առումով կտրուկ փոխվում է զբոսաշրջային ապրանքի և ծառայության կազմակերպման, արտադրության և վաճառքի մոդելը: Ըստ Skift-ի վերլուծաբանի՝ “Free Report. The Rise of Experiential Travel” զեկույցի հեղինակի (Rafat, 2014), այսօր հիմնական միտումներից մեկը զբոսաշրջային ընկերությունների առաջացումն է, որոնք իրենց դիրքավորում են որպես «ճամփորդության դիզայներներ» (կամ այլ կերպ՝ ճամփորդության ռեժիսորներ, ճամփորդության մոդերատորներ, զբոսաշրջային զգացմունքների տնօրեններ և այլն), որոնց տարբերությունը ավանդական զբոսաշրջային օպերատորներից հանգում է զբոսաշրջային արդյունքի արտադրության տեխնոլոգիայի մանրամասներին, որտեղ հիմնական գաղտնիքը կայանում է նրանում, որ բոլոր տարրերը, նույնիսկ ամենափոքրն ու ամենաաննշանը, համադրվեն նոր, մանրակրկիտ մտածված ձևով (Petzold, 2020):

Այսպիսով, կարելի է ասել, որ «փորձառական զբոսաշրջություն» հասկացությունը, որն ի հայտ եկավ համեմատաբար վերջերս՝ 1990 թվականին, այսօր «այլընտրանքային տուրիզմ», «հակատուրիզմ», «հեղինակային տուրիզմ», «ոչ ստանդարտ տուրիզմ» և այլ նմանատիպ հասկացությունների միջոցով՝ այսպես կոչված «տպավորությունների արդյունաբերության» ինտենսիվ զարգացման համատեքստում, վերածվում է «հայեցակարգային զբոսաշրջություն» հասկացության, որը շատ վերլուծաբանների և փորձագետների կողմից դիտարկվում է որպես ոլորտի զարգացման կարևորագույն միտումներից մեկը: COVID-19 համաճարակը, որը կտրուկ ընդհատեց զանգվածային ստանդարտացված զբոսաշրջության դարաշրջանը՝ նպաստեց այս միտման ավելի ցայտուն դրսևորմանը: Եվ, ինչպես ցույց են տվել մեր հետազոտության արդյունքները, այսօր զբոսաշրջության համաշխարհային շուկայում հայտնվում են ավելի ու ավելի շատ առաջարկներ՝ ուղղված անսովոր, ոչ տրիվիալ զբոսաշրջային փորձ ձեռք բերելու հետաքրքրությունը բավարարելուն, որոնք շատ հաճախ կոչվում են «հեղինակային տուրեր»: Նաև այս միտումը սերտորեն կապված է այն սերունդների հոգեբանական, վարքային, արժեքային-մոտիվացիոն բնութագրերի հետ, որոնք այսօր դառնում են զբոսաշրջային արդյունքի գերակշռող սպառողներ:

Այս համատեքստում, նոր և յուրահատուկ փորձառություններ առաջարկող զբոսաշրջային արդյունքի մշակման համար, մեր օրերի ճանապարհորդների տարբեր սերունդների վարքագծային օրինաչափությունների ուսումնասիրությունը և նրանց որոշ խմբերի⁴ զբոսաշրջային շարժառիթների վերլու-

4 Օրինակ, «անհայտների կամ X սերունդը»՝ «փորձառական տուրիզմ» երևույթի գեներատորները,

ծությունը հանդիսանում է զբոսաշրջության տեսության և պրակտիկայի հեռանկարային և խոստումնալից հետազոտական ուղղություն:

Օգտագործված գրականության ցանկ

- Афанасьева, А.В., Афанасьев, О.Е. (2021). Контексты экспериментального туризма в теоретическом и практическом форматах: компаративный анализ, разновидности и тренды // *Современные проблемы сервиса и туризма*. Т.15, №1, էջեր 21–33: URL: <https://ru.calameo.com/read/00425107692a676de3273> (մուտք՝ 19.02.2023)
- Брасалес, Э.Д., Тапия, П.Х., Королева, И.С. (2020). Альтернативный туризм как вид устойчивого туризма // *Научный результат. Технологии бизнеса и сервиса*. Т.6, №2, էջեր 3–19: URL: <https://cyberleninka.ru/article/n/alternativnyy-turizm-kak-vid-ustoychivogo-turizma> (մուտք՝ 20.02.2023)
- Елохина, А.К. (2018). Перспективы и проблемы развития театрального туризма как альтернативного вида туризма на территории Волгоградской области. // *Проблемы и перспективы развития туризма в Южном федеральном округе: Сб. науч. тр.*, էջեր 89–93: URL: <https://elibrary.ru/item.asp?id=39143413> (մուտք՝ 21.02.2023)
- Кундиус, В.А., Чермянина, В.В., Кудинова, М.Г., Балашова, С.П., Санталова, В.Н. (2011). Сельский туризм на Алтае как альтернативный вид деятельности в стратегии диверсификации сельской экономики // *Вестник Алтайского государственного аграрного университета*. №9(83), էջ 113–119:
- Санкин, А.В., Шекинова, Г.А. (2018). Управление в сфере туризма: трекинговый туризм как разновидность альтернативного туризма. // *Влияние новой геополитической реальности на государственное управление и развитие Российской Федерации: Мат. Междунар. науч. конф., посвя. 80-летию ФГБОУ ВО, «Чеченский государственный университет»*, էջեր 41–44:
- Спорыхина, С.Н. (2019). Альтернативный туризм: вопросы терминологии // *Научный взгляд в будущее*. ISSN 2415–766X (P)/ 2415–7538 (O). Т.2. №15, էջեր 64–68. URL: <https://www.scilook.eu/index.php/slif/article/view/slif15-02-018/pdf15-02-018> (մուտք՝ 24.02.2023)
- Фоменко, Е.В., Ленкова, М.И. (2019). Экономические аспекты развития альтернативных видов туризма: опыт зарубежных стран. // *Вестник Академии знаний*. №1(30), էջեր 181–185. URL: <https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskie-aspekty-razvitiya-alternativnyh-vidov-turizma-opyt-zarubezhnyh-stran> (մուտք՝ 28.02.2023)
- Afanasiev, O., Afanasieva, A. (2017). Museums of dark mythologies in the tourist place. In *book: Virtual Traumas and Exploring the Roots of Dark Tourism*. Hershey, Pennsylvania: IGI Global, էջեր 26–49: URL: https://www.researchgate.net/publication/320046655_Museums_of_Dark_Mythologies_in_the_Tourist_Place (մուտք՝ 05.01.2023)
- Antony, R., Henry, J. (2005). *Lonely Planet Guide to Experimental Travel*. Melbourne, Vic.;

«հազարամյակի կամ Y սերունդը»՝ «հակատուրիզմ» երևույթի գեներատորները, «տնակյացների կամ Z սերունդը»՝ հայեցակարգային տուրիզմի գեներատորները:

- Oakland, CA: Lonely Planet. URL: https://openlibrary.org/books/OL8907388M/Lonely_Planet_Guide_To_Experimental_Travel (մուտք՝ 09.01.2023)
- Cohen, E. (1989). Alternative tourism – A Critique. In: Singh, T.V., Theuns, H.L. & Go, F.M. (eds). *Towards Appropriate Tourism: The Case of Developing Countries*. Frankfurt am Main, Peter Lang, էջեր 127–142. URL: https://www.researchgate.net/publication/285551109_Alternative_Tourism-A_Critique (մուտք՝ 25.01.2023)
- Henry, J. (2016). Tourisme expérimental: la ville comme terrain de jeu. *L’Observatoire*. Vol.2. Iss.48, էջեր 49–51: URL: <https://www.cairn.info/revue-l-observatoire-2016-2-page-49.htm> (մուտք՝ 27.01.2023)
- Petzold, Ch. (2020). *The Top 10 Experiential Travel Agencies from Around the Globe*. URL: <https://avidvoyagers.com/the-top-10-experiential-travel-agencies-from-around-the-globe/> (մուտք՝ 29.01.2023)
- Rafat, A. (2014). *Free Report: The Rise of Experiential Travel*. Skift. Released: 03 June 2014. URL: <https://skift.com/2014/06/03/launching-free-skift-report-the-rise-of-experiential-travel/> (մուտք՝ 03.02.2023)
- Robinson, Sh. (2016). *Experimental travel: in practice, as performance*. Thesis (Ph.D.). Western Sydney University. URL: <https://researchdirect.westernsydney.edu.au/islandora/object/uws:44844/> (մուտք՝ 08.02.2023)
- United Nations World Tourism Organization. “*Thesaurus on Tourism and Leisure Activities*”. Madrid: UNWTO, 2001. (pdf)
- WWOOF. “*Experience sustainable living on local organic farms & family homes worldwide!*” URL: <https://wwooof.net/> (մուտք՝ 12.02.2023)
- AuPairWorld. “*Find your au pair or host family – today!*” URL: <https://www.aupairworld.com> (մուտք՝ 14.02.2023)
- We Hate Tourism*. URL: <https://www.wehatetourismtours.com> (մուտք՝ 14.02.2023)

References

- Afanasieva, A.V., Afanasiev, O.E. (2021). Konteksty eksperimentalnogo turizma v teoreticheskom i prakticheskom formatakh: komparativnyi analiz, raznovidnosti i trendy [Contexts of experimental tourism in theoretical and practical formats: comparative analysis, varieties and trends] // *Sovremennye problemy servisa i turizma*. T.15. №1. ejer 21–33. URL: <https://ru.calameo.com/read/00425107692a676de3273> (accessed: 19.02.2023) (In Rus.)
- Brasales, E.D., Tapia, P.Kh., Korolyeva, I.S. (2020). Alternativnyi turizm kak vid ustoychivogo turizma [Alternative tourism as a type of sustainable tourism] // Nauchnyi rezultat. *Tekhnologii biznesa I servisa*. T.6, №2, ejer 3–19. URL: <https://cyberleninka.ru/article/n/alternativnyy-turizm-kak-vid-ustoychivogo-turizma> (accessed: 20.02.2023) (In Rus.)
- Yelokhina, A.K. (2018). Perspektivy i problemy razvitiya teatralnogo turizma kak alternativnogo vida turizma na territorii Volgogradskoy oblasti [Prospects and problems

- of theatrical tourism development as an alternative type of tourism in the Volgograd region] // *Problemy i perspektivy razvitiya turizma v Yuzhnom federalnom okruge*: Sb. nauch. tr. Ejer 89–93. URL: <https://elibrary.ru/item.asp?id=39143413> (accessed: 21.02.2023) (In Rus.)
- Kundius, V.A., Chermyanina, V.V., Kudinova, M.G., Balashova, S.P., Santalova, V.N. (2011). Selskiy turizm na Altaye kak alternativnyi vid deyatel'nosti v strategii diversifikatsii selskoy ekonomiki [Rural tourism in Altai as an alternative activity in the strategy of rural economy diversification] // *Vestnik Altayskogo gosudarstvennogo agrarnogo universiteta*. №9(83). Ejer 113–119. (In Rus.)
- Sankin, A.V., Shchekinova, G.A. (2018). Upravlenie v sfere turizma: trekingovy turizm kak raznovidnost alternativnogo turizma. [Management in the field of tourism: trekking tourism as a kind of alternative tourism] // *Vliyanie novoy geopoliticheskoy real'nosti na gosudarstvennoe upravlenie i razvitie Rossiyskoy Federatsii: Mat. mezhdunar. nauch. konf., posv. 80-letiyu FBGOU VO Chechenskiy gosudarstvennyi universitet*. Ss. 41–44. (In Rus.)
- Sporykhina, C.N. (2019). Alternativnyi turizm: voprosy terminologii [Alternative tourism: questions of terminology] // *Nauchnyi vzglyad v budushcheye*. T.2. №15, ejer 64–68. URL: <https://www.scilook.eu/index.php/slif/article/view/slif15-02-018/pdf15-02-018> (accessed: 24.02.2023) (In Rus.)
- Fomenko, Ye. V., Lenkova, M. I. (2019). Ekonomicheskie aspekty razvitiya alternativnykh vidov turizma: opyt zarubezhnykh stran. [Economic aspects of the development of alternative types of tourism: the experience of foreign countries] // *Vestnik Akademii znaniy*. №1(30).Ejer 181–185. URL: <https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskie-aspekty-razvitiya-alternativnykh-vidov-turizma-opyt-zarubezhnykh-stran> (accessed: 28.02.2023)(In.Rus.)
- Afanasiev, O., Afanasieva, A. (2017). Museums of dark mythologies in the tourist place. *In book: Virtual Traumascape and Exploring the Roots of Dark Tourism*. Hershey, Pennsylvania: IGI Global, Pp. 26–49. URL: https://www.researchgate.net/publication/320046655_Museums_of_Dark_Mythologies_in_the_Tourist_Place (accessed: 05.01.2023) (In Eng.)
- Antony, R., Henry, J. (2005). *Lonely Planet Guide to Experimental Travel*. Melbourne, Vic.; Oakland, CA: Lonely Planet. https://openlibrary.org/books/OL8907388M/Lonely_Planet_Guide_To_Experimental_Travel (accessed: 09.01.2023) (In Eng.)
- Cohen, E. (1989). Alternative tourism – A Critique. *In*: Singh, T.V., Theuns, H.L. & Go, F.M. (eds). *Towards Appropriate Tourism: The Case of Developing Countries*. Frankfurt am Main, Peter Lang, pp. 127–142. URL: https://www.researchgate.net/publication/285551109_Alternative_Tourism-A_Critique (accessed: 25.01.2023)
- Henry, J. (2016). Tourisme expérimental: la ville comme terrain de jeu. *L'Observatoire*. Vol.2. Iss.48, pp. 49–51: URL: <https://www.cairn.info/revue-l-observatoire-2016-2-page-49.htm> (accessed: 27.01.2023)
- Petzold, Ch. (2020). *The Top 10 Experiential Travel Agencies from Around the Globe*. URL:

- <https://avidvoyagers.com/the-top-10-experiential-travel-agencies-from-around-the-globe/> (accessed: 29.01.2023)_
- Rafat, A. (2014). *Free Report: The Rise of Experiential Travel*. Skift. Released: 03 June 2014. URL: <https://skift.com/2014/06/03/launching-free-skift-report-the-rise-of-experiential-travel/> (accessed: 03.02.2023)_
- Robinson, Sh. (2016). *Experimental travel: in practice, as performance*. Thesis (Ph.D.). Western Sydney University. URL: <https://researchdirect.westernsydney.edu.au/islandora/object/uws:44844/> (accessed: 08.02.2023)
- United Nations World Tourism Organization. “*Thesaurus on Tourism and Leisure Activities*”. Madrid: UNWTO, 2001. (pdf)
- WWOOF. “*Experience sustainable living on local organic farms & family homes worldwide!*” URL: <https://wwooof.net/> (accessed: 12.02.2023)
- AuPairWorld. “*Find your au pair or host family – today!*” URL: <https://www.aupairworld.com> (accessed: 14.02.2023)
- We Hate Tourism*. URL: <https://www.wehatetourismtours.com> (accessed: 14.02.2023)

Армине Матенцян

*Преподаватель кафедры туризма и
сервиса Европейского университета
Эл. адрес: matentsyana@gmail.com*

АЛЬТЕРНАТИВНЫЕ ИЛИ ЭКСПЕРИМЕНТАЛЬНЫЕ ПУТЕШЕСТВИЯ КАК НАПРАВЛЕНИЕ РАЗВИТИЯ КОНЦЕПТУАЛЬНОГО ТУРИЗМА

В статье рассматривается одно из понятий туризма, которое на практике применяется под названиями «альтернативный» или «экспериментальный» туризм. На определенном этапе развития туризма стали появляться предложения, явно отличающиеся от традиционных и представленные в так называемых «антитуристических» форматах. Это неизведанные и необычные путешествия по малоизвестным туристическим направлениям, где самой важной ценностью является нестандартный опыт путешественника. Данный формат путешествий, концептуализированный Жозелем Анри в 1990 году, стал первым проявлением растущего в настоящее время феномена персонализации туристических услуг. В современной зарубежной литературе есть ряд исследователей, занимающихся исследованиями этого понятия. Можно считать, что на сегодняшний день сформировался широкий круг терминов, описывающих многообразие форм экспериментального туризма, некоторые из которых рассмотрены в статье. В статье также обобщены текущие предложения по экспериментальным путешествиям, в результате чего было выявлено более 30 форм последних, сгруппированных в 8 подтипов. Сформулированы основные принципы экспериментальных путешествий и рассмотрены некоторые проблемы их позиционирования на рынке. Обсуждается тенденция хронологи-

ческой трансформации форм экспериментального путешествия, проявляющаяся в переходе от понятия «альтернативный» к идее «концептуального» туризма.

Ключевые слова: альтернативный туризм, экспериментальный туризм, погружение в окружающую среду, нестандартный опыт, концептуальные направления в туризме.

Armine Matentsyan

Lecturer at Tourism and Service Department,

European University

Email: matentsyana@gmail.com

ALTERNATIVE OR EXPERIENTIAL TRAVEL AS A CONCEPTUAL TOURISM DEVELOPMENT TREND

The article considers one of the concepts of tourism, which is practically applied under the names of “alternative” or “experiential” tourism. At a certain stage of tourism development, offers clearly different from traditional ones began to appear in the so-called “anti-tourism” formats. These are off-the-beaten-track and off-the-beaten-attraction journeys to the lesser-known tourist destinations, where the most important value is the traveler’s non-standard experience. This travel format, conceptualized by Joël Henry in 1990, became the first manifestation of the now growing phenomenon of personalization of travel services. In modern foreign literature, there are a number of researchers concerned with the very concept. It can be considered that today a wide range of terms describing the variety of forms of experiential tourism has been formed, some of which are discussed in the article. Current proposals for experiential travel are summarized in the article, and more than 30 forms of experiential travel grouped into 8 types have been identified. The article also formulates the main principles of experiential travel and considers some issues of their positioning in the market. The tendency of the chronological transformation of the forms of experiential travel, manifested by the transition from the notion of “alternative” to the idea of “conceptual” tourism, is discussed.

Keywords: alternative tourism, experiential tourism, immersion in the environment, non-standard experience, conceptual trends in tourism.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. մարտի 2-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. մարտի 13-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. ապրիլի 12-ին:

Լեզվաբանություն և բանասիրություն

Լալիկ Խաչատրյան

*Խ. Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական
համալսարանի լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էլ. հասցե՝ lingualal51@mail.ru*

DOI: 10.53614/18294952-2023.1-140

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Սույն հոդվածի նպատակն է քննել արմատակրկնությամբ ձևավորված վերլուծական բարդությունները, որոնք հինգերորդ դարի հայերենում որոշակի շերտ են կազմում համադրական կրկնավոր բարդությունների հետ: Վերլուծական կրկնավորները դիտարկվում են Աստվածաշունչ մատանի թարգմանական գրքերում և հինգերորդ դարի ինքնուրույն պատմագրության լեզվում: Քննության այս ձևաչափը հնարավորություն է ընձեռում որոշելու վերլուծական կրկնավորների գործառական հաճախականությունը թարգմանական և ինքնուրույն մատենագրական հուշարձաններում: Մյուս կողմից՝ բացահայտվում են կրկնավոր վերլուծական բարդությունների ձևակազմական կաղապարները, որոնք ցույց են տալիս հին հայերենի բառակազմական հնարավորությունները և կրկնավորների բառակազմական տիպերը:

Հիմնաբառեր. Աստվածաշունչ, արմատակրկնություն, բառագիտություն, անկախ արմատ, կաղապար, վերլուծական բարդություն, հին հայերեն:

Ներածություն

Բառակազմության եղանակներից է արմատակրկնությունը, որի միջոցով ստեղծվել են համադրական և վերլուծական մի շարք բարդությունները: Այդ

կարգի բարդությունները ընդհանուր հայերենի բառային կազմի անբակտե-լի մասն են կազմում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արմա-տակրկնությամբ ձևավորված բարդությունները տարբեր հաճախականությ-յամբ գործածվել են հինգերորդ դարում և մեր լեզվի զարգացման հաջորդ գոյավիճակներում:

Ըստ այդմ՝ աշխատանքում գուգահեռներ են տարվում Աստվածաշնչի և հինգերորդ դարի պատմիչների երկերի միջև՝ պարզելու վերլուծական կրկնավոր բարդությունների գործառական հաճախականությունը տարբեր ուղղվածության և տարբեր ոճերի երկերում:

Մեր ընտրանքում եղած վերլուծական կրկնավորներ բարդությունները հինգերորդ դարում հանդիպում են տարբեր կառուցատիպերով. կան ինչպես պարզ արմատների կրկնությամբ վերլուծական կառույցներ, այնպես էլ նախ-դիրներով ձևավորված կրկնավորներ, ինչպես՝ *արագ արագ, մանր մանր, դաս դաս, յոյժ յոյժ, երկու երկու, եւթն եւթն և խառն ի խուռն, դէմ առ դէմ, լու ի լու* և այլն:

Սյուս կողմից՝ արմատական կրկնավոր բարդությունների մեջ կրկնվող բաղադրիչները հանդիպում են նաև հոդերի կրկնություններ, ինչպես՝ *շեղջու շեղջու, գունդս գունդս* և այլն:

Մեթոդ

Վերլուծական կրկնավորների հետազոտությունը կատարվել է պատմա-համեմատական մեթոդի համաժամանակյա ուսումնասիրության եղանակով: Ուսումնասիրությունը կատարվել է երկու կտրվածքով. նախ դիտարկվել են վերլուծական բարդություններն ըստ պարզ արմատների խոսքիմասային ար-ժեքների, ապա՝ ըստ նախդրավոր կառուցատիպերի:

Արդյունքներ և քննարկում

Արմատակրկնությունը (ռեդուբլիկացիան) բառակազմության եղանակ է, որի դեպքում բարդ բառեր են կազմվում միևնույն հիմքի, արմատի կամ ամ-բողջական բառերի կրկնությամբ (Պետրոսյան, 1987, էջ 76: Стариченок, 2008, էջ 516): Ըստ Հր.Աճառյանի՝ հայերենի կրկնավորների թիվը հասնում է շուրջ 500-ի (Աճառյան, 1957, էջեր 83-93):

Ընդհանրապես, կրկնավոր բարդությունները հանդես են գալիս երկու կարգի կաղապարով. համադրական և վերլուծական:

Մասնագիտական գրականության մեջ համադրական կրկնավոր բար-դությունները բաժանում է երկու տեսակի՝ *անկախ արմատներով* (այլայլել, մեծամեծ, գոյնագոյն, գունդագունդ և այլն), որ կոչում է *լիակապար արմա-տակրկնություն*, և *կախյալ արմատներով* (գրգռել, արհամարհել, խարխափել, ծանծաղ, պապանձիլ և այլն), որ կոչում է *մասնակի արմատակրկնություն* (Туманян, 1972, էջեր 168-170):

Վերլուծական կրկնավոր բարդությունները հանդես են գալիս արմատ-ների անջատ գրությամբ (արագ արագ, գունդ գունդ և այլն), կամ նրանց

բաղադրիչները միավորվում են նախդիրներով (օր ըստ օր է, դէմ ընդ դէմ և այլն). վերջիններս արտահայտության պլանով համընկնում են բառակապակցական կաղապարներին:

Ա.Բագրատունին իր աշխատանքի «Յաղագս բարդութեան բառից» գլխում, քննելով արմատակրկնությամբ առաջացած բարդությունների տեսակները, նկատում է. «Այսպէս երբեմն մի եւ նոյն անուն բարդեալ գտանի ինքն ինքեամբ. պէսպէս, վաղվաղ, վազվազ, բաղբաղայք, բեկբեկ, ծործոր, լուռլուռ» (Բագրատունի, 1852, էջ 660):

Էդ. Աղայանը նկատում է, որ «կրկնական բարդությունների բաղադրիչները պարզապէս կրկնվող բառն ինքն է՝ ամբողջությամբ կամ մի մասով միայն՝ ... Կրկնավոր հարադրությունները բառակապակցություններ չեն, հետևաբար և չունեն կապակցության քերականորեն միմյանց հետ կապված անդամներ. բառակրկնությունները, որպէս վերլուծական բաղադրություններ, ունեն կրկնության եզրեր կամ մասեր, որոնց միավորումով էլ կազմվում են կցական բնույթի կրկնական բարդությունները» (Աղայան, 1984, էջեր 275–276):

Գ. Ջահուկյանն այն տեսակետն է հայտնում, որ կրկնավոր բարդություններն առաջացել են ժամանակագրական տարբեր փուլերում՝ հնդեվրոպական և հետհնդեվրոպական շրջաններում (թիթեռ, բողբոջ, տրտունջ, գրգիռ, թրթիռ...), հնագույն և հին շրջաններում (հետզհետե, մերթընդմերթ...), և ներկայանում են ձևակազմական տարբեր կաղապարներով: Այնուհետև խոսելով կրկնության անդամների արժեքների մասին՝ նկատում է, որ «դրանցից մեկը կրկնության հիմքն է, մյուսը՝ նմանակը», և կրկնության հիմնական անդամը կոչում է կրկնյալ, նմանակը՝ կրկնորդ (Ջահուկյան, 1989, էջ 215):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Աստվածաշունչ մատյանը հայերեն առաջին (թարգմանական) աշխատանքն է՝ մեզ հետաքրքրում է հարցադրումների հետևյալ շրջանակը. հնագույն շրջանից ավանդված կրկնավոր բարդությունները ինչպիսի գործածություն են ունեցել Աստվածաշնչի թարգմանական գրքերում (Աստուածաշունչ, 1997), ինչպիսին է դրաց գործառական հարաբերակցությունը Աստվածաշնչում և հինգերորդ դարի պատմիչների աշխատություններում:

Աստվածաշնչի լեզվին անդրադառնալիս Մ. Աբեղյանը նկատում է. «Աստվածաշնչի լեզուն սկզբից հենց մեր հին գրականության համար դարձել է կլասիկական իր քերականությամբ, իր բառերով ու դարձվածքներով, պատկերավոր ասացվածքներով ու բանաձևերով. և այսպէս ոչ միայն կրոնական, այլև պատմական ու բանաստեղծական երկերի համար, մասնավորապէս այն հետագա շրջանում, երբ գրաբար լեզուն այլևս կենդանի խոսակցական չի եղել» (Աբեղյան, 1968, էջ 108):

Աստվածաշնչի լեզվին ու ոճին առանձին աշխատանք է նվիրել Վ. Առաքելյանը. նա այն կարծիքն է հայտնում, որ այն գրված է պարզ լեզվով, ավելի մոտ է ժողովրդախոսակցական տարբերակին, քանի որ Սուրբ գիրքը թարգմանված էր ժողովրդական լայն զանգվածների համար, մյուս կողմից՝

1 Այս առումով Գ. Ջահուկյանն այլ տեսակետ է հայտնում. «Առաջին հայացքից կարծես թե կրկնության անդամները հավասարաթեք են, սակայն իրականում դրանցից մեկը կրկնության հիմքն է, մյուսը՝ նմանակը» (Ջահուկյան, 1989, էջ 215):

թարգմանիչները «դավանում էին լեզվաոճական առաջադիմական սկզբունքներ»։ «Աստվածաշունչը թարգմանվում էր ժողովրդի համար. թարգմանիչների ազնիվ մտահոգությունն էր այնպես թարգմանել, որ ժողովրդի բոլոր խավերը կարդան ու հասկանան. բայց և կար մի այլ պարագա. սրբազան գիրքը պետք է ունենար իր պատշաճ լեզվաոճական մակարդակը, որ թարգմանիչները չէին կարող նկատի չունենալ, մանավանդ որ հին կրթության մեջ ոճաբանությունը ճարտասանական արվեստի սկզբունքների տեսանկյունով ուսուցվում էր» (Առաքելյան, 1984, էջ 10)։

Ն. Բյուզանդացին, հինգերորդ դարի ոճերն առանձնացնելիս, Աստվածաշունչ մատյանը զետեղում է *Եզնիկյան դասի մեջ*, որ աչքի է ընկնում բառերի ընտրությամբ, ներդաշնակ շարադասությամբ, հարուստ է դարձվածքներով, ասացվածքներով, հոմանիշներով, ճարտասանական միջոցներով (Մկրտչյան, Խաչատրյան, 2016, էջ 68)։

Աստվածաշնչում գործածված կրկնավոր բարդությունները հիմնականում ներմուծել են թարգմանիչները. Ս.Գրքի հունարեն բնագրում, նրանից թարգմանված լատիներեն, գերմաներեն, անգլերեն և հին ռուսերեն տարբերակներում կրկնավոր բարդությունները, հայերենի հետ համեմատած, խիստ նվազ տոկոս են կազմում կամ գրեթե չեն հանդիպում²։

Վերլուծական կրկնավոր բարդությունները հինգերորդ դարի մակարդակում քննելիս մենք ելակետ ենք ընդունում Աստվածաշունչը՝ որպես առաջին մատենագրական երկ, և այդ համատեքստում փորձելու ենք ցույց տալ կրկնավոր բարդությունների գործառական հաճախականությունը մատենագրական այլ երկերում, որոնք ժամանակագրական առումով հաջորդել են Աստվածաշունչ մատյանին։ Դրանք են Խորենացու, Բուզանդի, Եղիշեի, Եզնիկի, Փարպեցու, Ագաթանգեղոսի և Կորյունի աշխատությունները³։

Աստվածաշնչի թարգմանական գրքերում և հինգերորդ դարի մատենագրական հուշարձաններում գործածված վերլուծական կրկնավորները կարելի է ուսումնասիրել տարբեր հայեցակետերով. մենք նախընտրում ենք դրանք ներկայացնել ըստ կրկնվող բաղադրիչների խոսքիմասային արժեքների և ըստ կապակցող նախդիրների։ Ըստ առաջին մոտեցման՝ կարելի է առանձնացնել գոյականական, ածականական, թվականական, մակբայական և բաղադրիչներով վերլուծական կրկնավոր բարդությունների տիպերը։

ա) Գոյականական բաղադրիչներով ձևավորված կրկնավորներ

Այս կարգի կրկնավորների սերիչ կաղապարներ են դառնում հետևյալ գոյականական բաղադրիչները՝ *դաս, գունդ, շեղջ, օր* և այլ բառեր։

Աստվածաշնչում հանդիպում են վերաբերյալ բաղադրիչներով ձևավորված հետևյալ վերլուծական կրկնավոր բարդությունները։

2 Մենք այս տեսկետին հանգել ենք՝ ուսումնասիրելով արմատակրկնության իրողությունը հին հայերենում և նրա համաթեքները ռոմանոգերմանական լեզուներում (լատիներեն, գերմաներեն, անգլերեն) և հին ռուսերենում՝ ըստ Աստվածաշնչի թարգմանական գրքերի։ Տես, Խաչատրյան, 2023, Հ. 1 (26)։

3 Իբրև քննության բնագիր՝ դիտարկել ենք նաև Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստութեան» աշխատությունը, սակայն մեր ընտրանքում եղած կրկնավոր բարդություններից որևէ մեկն այնտեղ չի հանդիպել։

Դաս դաս⁴ վերլուծական բարդությունը գրաբարում առավելապես հանդիպում է համադրական կազմությամբ՝ *դասադաս*: Աստվածաշնչում գործածված է վերլուծական ձևով՝ *դաս-դաս*՝ «խումբ-խումբ, խմբերով» (հոգնակիության) իմաստով, հմմտ. Եւ բազմեցան *դասք դասք*, ուր հարելւր եւ ուր յիսուն (Մարկ., Զ. 40):

Այս կարգի անվանական հարադրությունները Աստվածաշնչում գործածված են –ս ածանցական տարրով, որ բառին հաղորդում է մակբայական արժեք ու նշանակություն: Այդ բառերն են *գունդս գունդս, դասս դասս, շեղջս շեղջս*:

Դիտարկենք այդ բառերը Աստվածաշնչի թարգմանական գրքերում:

Դասս դասս վերլուծական բարդությունը ձևավորվել է *դաս դաս* բարդության սերող հիմքով՝ մակբայակերտ ածանցի միջոցով, այն նշանակում է «խումբ առ խումբ, կարգով»: Անկախ բառական արժեքով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. «Ասէ զաշակերտսն, բազմեցուցէք զդոսս *դասս դասս*՝ յիսուն յիսուն (Ղուկ., Թ. 14):

Հինգերորդ դարի մատենագրության մեջ *դաս դաս* կրկնավոր բարդությունը գործածվել է Ագաթանգեղոսի և Կորյունի երկերում: Հմմտ.

Մեծն Մովսէս յանապատի անդ և ի պարգևական երկրին *դասք դասք* մարգարէից (Ագաթ., 249): Անդ տեսանէին *զդասս դասս* հրեշտակակրօն պաշտօնէիցն (Ագաթ., 419): Գումարել ի կողմանս *դասս դասս* զաշակերտեալսն ճշմարտութեանն (Կոր., 585): Գումարել ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց, *դասս դասս* դպրոցաց (Կոր., 70):

Շեղջս շեղջս կրկնավոր բարդությունը կազմվել է *շեղջ* արմատական բաղադրիչի կրկնությամբ՝ –ս մակբայակերտ ածանցի միջոցով⁵: *Շեղջս շեղջս* վերլուծական բարդությունը «դաս առ դաս, խումբ առ խումբ» իմաստով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Եւ նոքա ածին զտասանորդս զուրակացն եւ ոչխարաց, եւ բերեալ կուտեցին *շեղջս շեղջս* (Բ. Մնա., ԼԱ. 6):

Հանդիպում է Բուզանդի և Ագաթանգեղոսի երկերում, ինչպես՝ Սկսաւ ընկենուլ ի կղզի անդր ձուկն սաստիկ յոյժ, մինչև *շեղջս շեղջս* կուտէր ի ցամաքի կղզւոյն (Բուզ., 79): *Շեղջ շեղջ* կուտեալ էին առ դուրս հնձանին (Ագաթ., 395):

4 Կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը հանգում է իրանական աղբյուրին՝ խոտա-սակ. *dasa* «բաժին» կամ «դաս, կարգ» իմաստներով (ՋՄԲ, 185): Գրաբարում *դաս* արմատը նշանակում է «խումբ (մարդկանց, կենդանիների, առարկաների, զինվորների, հրեշտակների ևն.), կարգ»: Աստվածաշնչում գործածված է «մարդկանց՝ կենդանիների խումբ» իմաստով, հմմտ. Եւ էին ընդ նման, որ բառնային զտապանակն զւթն *դաս* պարուց (Բ. Թագ., Զ. 13): *Դասադաս* համադրական բարդությունն ունի «դաս-դաս, խումբ-խումբ, խմբերով» (հոգնակիության) իմաստ, որ եզակի կիրառությամբ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Դարձեալ յիրանքանչիւր ապարանիցն *դասադաս* մտանէին ի համաշխարհի խնդրուածս (Բ. Մակ., Գ. 18):

5 Կրկնավոր բարդության արմատական բաղադրիչի ծագումն անհայտ է, հավանական է համարվում նրա կապը խեթ. *šeli-* արմատի հետ՝ որպես փոխառություն՝ «հացահատիկի կույտ» նշանակությամբ (ՋՄԲ, 585): *Շեղջ* արմատն անկախ գործածություն ունի գրաբարում. այն նշանակում է «կույտ, դեզ (ցորենի, արմատիքների)»: Այդ իմաստով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Եւ երթիցես ի գերեզման իբրև գցորեան հասեալ... իբրև *զշեղջ* կալոյ ի ժամանակի ամփոփեալ (Յովբ, Ե. 26): *Շեղջաշեղջ* բարդությունը «շեղջ-շեղջ, կուտակ-կուտակ, խիտ առ խիտ» իմաստով գործածական է Աստվածաշնչում. հմմտ. Զերդմունս և գդաշինս հարցն յիշատակեալ՝ *շեղջաշեղջ* դիականցն անկելոց առ միմեանս՝ կացեալ ի մէջ դադարեցոյց գբարկութիւն (Իմաս., ԺԸ. 23):

Գունդա գունդա կրկնավոր բարդությունն Աստվածաշնչում գործածված է անվանաբայական հարադրության կազմում՝ *գունդա գունդա բաժանել*, որտեղ *գունդա գունդա* կրկնավորն ունի մակբայական նշանակություն՝ «տարբեր գնդերի՝ խմբերի (բաժանել)» իմաստով⁶: Հմնտ. Իսկ Մակաբեոս զգալուն ամենայն ի *գունդա գունդա* բաժանելը եւ ինքն իրով գնդան ի վերայ Տիմոթեոսի հասանելը (Բ. Մակ., ԺԲ. 20):

Հանդիպում է Ագաթանգեղոսի, Բուզանդի և Եղիշեի երկերում: Հմնտ. Անդ էր տեսանել ի պարգևական երկրին *գունդա գունդա* մարգարեականս (Ագաթ., 163):

Գունդ գոդ հատանէին (Ագաթ., 22): *Գունդա գունդա* յամենայն աշխարհացն գումարէր ընդ նմա (Եղ., 88): *Գունդք գունդք* զօրաց ելանէին ի վեր (Եղ., 150): *Գունդք գունդք* գային նմա առաջի (Բուզ., 184):

բ) Ածականական բաղադրիչներով ձևավորված կրկնավորներ

Ածական բաղադրիչով կրկնավորներն այն յուրահատկությունն ունեն, որ կրկնավոր ձևերում հանդես են գալիս այլ խոսքիմասային արժեքով (եթե դրանք ածական//մակբայ տարարժեք բառեր չեն): Կրկնության այս տեսակը՝ ըստ կրկնության և իր բաղադրիչների հետ ունեցած գործառական հարաբերության, կոչվում է *փոխգործառական* (համակաղապարային կամ փոխկաղապարային), որի դեպքում առկա է խոսքիմասային փոխանցում (Զահուկյան, 1989, էջեր 216–217):

Այդ կարգի կրկնություն են ստեղծել *արագ և մանր* ածականները:

Արագ արագ կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը⁷ գրաբարում ունի «արագընթաց, կարճ ժամանակում, շուտ, շուտափույթ» իմաստներ, որ կենսունակ գործածություն ունի Աստվածաշնչում, հմնտ. Բարեկամքն ... իբրեւ տեսին, թէ այնպէս *արագ* հասանել ի վերայ նորա դատաստանն, զահի հարկանէին (Գ. Մակ., Բ. 11): Նախատիպից կազմվել է *արագ արագ* կրկնավոր բարդությունը՝ «անհապաղ, անմիջապես, իսկույն» իմաստներով, հմնտ. *Արագ արագ* կապտեսջիր եւ վաղվաղակի աւար հարկանիջիր (Եսայ., Ը. 3):

Հանդիպում է Բուզանդի և Ագաթանգեղոսի երկերում: Հմնտ. Վաղվաղակի *արագ արագ* դառնային ի նմանէ (Բուզ., 204): Զնոսա *արագ արագ* հնազաղեցուցէ իւրում պատկերին (Ագաթ., 47):

Մանր մանր բարդության արմատական բաղադրիչը գրաբարում առան-

6 Կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ գունդ, «բազմություն, բանակ, զորագունդ» իմաստով հանգում է իրանական աղբյուրին՝ որպես փոխառություն, հմնտ. պիլ. ցոմ «բանակ, գունդ», պրս. ցոմ կամ ցոմ «ժողով, գումար, խումբ, բազմություն» (ՀԱԲ, 1, 595): *Գունդ* բաղադրիչը արմատական նշանակությամբ գրաբարում կենսունակ գործածություն ունի. այդ իմաստներով գործածված է Աստվածաշնչում, հմնտ. Սոքա են *գունդք* դևտացուց (Թիւք, Գ. 21): Համադրական *գունդագունդ* բարդությունն ունի «բազմամարդ, գունդ գնդի հետևից» իմաստներ, հմնտ. Ահաւասիկ ես ածից ի վերայ քո ... *գունդագունդ* հեծելովք ազգաց բազմաց յոյժ (Եզեկ., ԻԶ. 7): Աստվածաշնչում գործածված է «հորդահոս, առատորեն» իմաստով, հմնտ. Մինչև արիւնն *գունդագունդ* արտաքս հոսէր հոսէր, և վերքն չարաչար պատառեալ էին (Բ. Մակ., ԺԲ. 45): Բառի՝ այս իմաստով գործածությունը հունաբանություն է՝ *աղբերաբար*: Հմնտ. Բուզանդի երկում բառի նույնիմաստ գործածությունը. Սկսաւ զարիւնն *գունդ գունդ* ի ներքուստ ընդ բերանին արտաքս հոսել (Բուզ., 183) :

7 Արմատական բաղադրիչը՝ *արագ*, ստուգաբանորեն հանգում է պիլ. *rag արմատին՝ ա- կամ ե- նախահավելված աճականով (ՀԱԲ, 1, էջ 291):

ծին գործածական բառ է՝ «մանր, փոքրիկ, ոչ մեծ» իմաստներով⁸, որ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Եւ գմեղսն ձեր ... գորթն ... կոտորեցի եւ խորտակեցի զնա յոյժ, մինչեւ եղեւ *մանր* իբրեւ զփոշի (Բ. Օրէնք, Թ. 20): *Մանր մանր* վերլուծական բարդությունը «մաս-մաս, կտոր առ կտոր» իմաստով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. *Մանր մանր* կոտորեալ, զայս թոչնոց գէշագէշ ջամբեցից (Բ. Մակ., ԺԵ. 33)⁹:

Հանդիպում է միայն Եզնիկի երկում, ինչպես՝ Զորս և կերակուր նոցա մանր

ձկունք են, որպէս և օձից մեծամեծաց *մանր մանր* ինչ ձձիք կամ անասունք (Եզն., 104):

գ) Թվականական բաղադրիչներով ձևավորված կրկնավորներ

Քանակական թվականների կրկնությամբ կազմվում են բաշխական թվականներ, որոնք արտահայտում են առականների քանակային բաշխում և հանդես են գալիս որոշչային ու պարագայական կիրառությամբ: Անշուշտ, թվական բաղադրիչներով վերլուծական կրկնավորները հեղինակային (անհատական) նորակազմություններ չեն, սակայն, որպես կրկնության դրսևորում, մենք դիտարկել ենք դրանք Աստվածաշնչի և հինգերորդ դարի մատենագրության լեզվում: Մյուս կողմից՝ դրանք լայն գործածություն չունեն քննության ենթակա բնագրերում. հանդիպում են *երկու երկու, երեք երեք, յիսուն յիսուն* և այլ կրկնավորները:

Երկու երկու – Եւ ամենայն անասնոց և ամենայն գազանաց և ամենայն մարմնոյ՝ *երկու երկու* մուտցես ի տապանն բուծանել ընդ քեզ (Ծնն., 2, 19):

Հանդիպում է Եղիշեի երկում, ինչպես՝ Հրաման տայր *երկուց երկուց* գոյգ ... ելանել ի շինէն (Փարպ., 123): Միաբանեցին *երկու երկու* իբրև ամուլք հաւանք և հաւասարք՝ ուղիղ տանելոյ զակոսն արքայութեան (Եղ., 202):

Եւթն եւթն – Եւ ամենայն անասնոց սրբոց մոյծ ընդ քեզ *եւթն եւթն* արու և էգ, և ամենայն անասնոց որ ոչ են սուրբ՝ երկուս երկուս արու և էգ. (Ծնն., Է, 2, 3):

Որևէ պատմիչի երկում չի հանդիպում:

դ) Մակբայական բաղադրիչներով ձևավորված կրկնավորներ

Մակբայական բաղադրիչով կրկնավորներն ունեն նույն այն խոսքի մասի արժեքը, ինչ նրանց բաղադրիչները, հատկապես հիմնական բաղադրիչը՝ կրկնյալը: Այդպիսի կրկնությունը կոչվում է *համագործառական* (Զահուկյան, 1989, էջեր 216–217): Քննության ենթակա բնագրերում հանդիպում է միայն *յոյժ յոյժ* կրկնությունը:

Յոյժ յոյժ հարադրությունը նշանակում է «սաստիկ, չափազանց»¹⁰, եզակի կիրառություն ունի հինգերորդ դարում: Աստվածաշնչում գործածված է հետևյալ նախադասության մեջ. Եւ սաստկանար ջուրն *յոյժ յոյժ* ի վերայ երկրի, և ծածկէր զամենայն լեռինս բարձունս (Ծնն., Է, 19):

8 Կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ *մանր*, հանգում է բնիկ հնդեվրոպական *manu-
-r (*men) «փոքր, փոք- բացնել» արմատին (ՋՄԲ, էջ 509):

9 ՆՀԲ-ն տալիս է *մանրամանր* ձևով (Է. 2, էջ 208):

10 Հարադրության սերող բաղադրիչն ունի «հույժ, շատ» իմաստներ. կազմված է *յ-* նախդրով՝ իրանական ծագման *ոյժ* բառից (ՀԱԲ, 3, էջ 404–405: ՋՄԲ, էջ 554):

Պատմագրության մեջ հանդիպում է միայն Բուզանդի երկրում. Լինէր սաստիկ պատերազմ *յոյժ յոյժ* (Բուզ., 15):

ե) *Նախդրավոր կրկնավորներ*. որոշ արմատական կրկնավորների բաղադրիչներ կարող են միանալ նախդիրներով (Պետրոսյան, 1987, էջ 77): Աստվածաշնչում հանդիպում են *օր ըսպ օրէ, դէմ ընդ դէմ, խառն ի խոռն* և *լու ի լու* կրկնավորները:

Դիտարկենք այդ բառերի արտահայտության և բովանդակության պլանները հինգերորդ դարում: Արտահայտության պլանում առկա են արմատական գոյականներ (օր, աջ), ածական (խառն), մակբայ (դէմ) և բայափիմբ (լու): Ինչպես նկատում է Գ.Ջահուկյանը, «նրանց արտահայտության պլանը որոշ զուգահեռներ ունի բովանդակության պլանի հետ. հնչակրկնությունը հաճախ արտահայտում է նաև իմաստային կրկնություն. գոյականների դեպքում՝ շատություն, գործողությունների դեպքում՝ հաճախսայնություն և այլ իմաստներ» (Ջահուկյան, 1989, էջ 216):

Օր ըսպ օրէ կրկնավոր բարդությունը կազմված է *օր* հիմնական բաղադրիչի կրկնությամբ և *ըսպ* նախդրով¹¹: Գրաբարում այն նշանակում է «գիշեր և ցերեկ միասին, ցերեկ, ցերեկվա տևողություն, ժամանակ, տարի, փխբ. կյանք»: Նախդրավոր կապակցությունը՝ *օր ըսպ օրէ*, նշանակում է «օրեցօր, հետզհետ»։ այդ իմաստով այն գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Օրհնեցէք զՏէր, ամենայն երկիր, պատմեցէք *օր ըսպ օրէ* գիրկություն նորա (Ա. Մնա., ԺԶ. 23):

Հանդիպում է Բուզանդի, Փարպեցու և Ագաթանգեղոսի երկերում: Հմմտ.

Եւ գմիօրինակ զթագն *օր ըսպ օրէ* ինքեան և նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր (Բուզ., 105): «Աւետարանեցէք *օր ըսպ օրէ* գիրկություն» (Ագաթ., 327): Տեսանէին *օր ըսպ օրէ* զաճումն յառաջադիմութեան յորդիս ազգի նահատակելոց Մամիկոնեից (Փարպ., 111)¹²:

Խառն ի խոռն հարարդրության *խառն* արմատը գործածական է «1. խառնված, անմիատարր, ոչ պարզ, 2. փխբ. պիղծ, խառնակ» բառական նշանակություններով¹³: *Խառն* արմատի (ծայնավորի) ձայնդարձով ձևավորվել է *խոռն* տարբերակը՝ «ամբոյս, խառն բազմություն» իմաստով. արմատակրկնությամբ՝ *խառն ի խոռն* հարադրությունը՝ «անկանոն, վայրիվերո, խռնված» իմաստներով: Հանդիպում է Աստվածաշնչում. Եւ ամենայն ինչ *խառն ի խոռն*. արիւն և սպանութիւն, գողութիւն և նենգութիւն ... (Իմաստ., ԺԴ, 25):

Հանդիպում է Խորենացու, Եղիշեի և Փարպեցու երկերում: Հմմտ. Ի բաժանել լեզուացն ընդ ամենայն երկիր, ոչ *խառն ի խոռն*, և ոչ առաջնորդ այս լինէր, այլ... (Խոր., 91): Զամփոփումն սուրբ ոսկերաց նոցա ոչ *խառն ի խոռն* ի մի վայր ժողովելով, այլ գմի մի ի նոցանէ... ի վեց տապանս ժողովեալ էր (Եղ., 108): Վարելով ըստ անգիտութեան *խառն ի խոռն*՝ ոգւոց շատ ծանր

11 *Օր* բաղադրիչը ստուգաբանորեն հանգում է բնիկ հաղեվրոպական *amōr «օր» արմատին (Ջահուկյան, 2010, էջ 104):

12 Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» գործում հանդիպում է *աուր աուր* հարադրությունը. Չոր *աուր աուր* ... ընկելեալ վտաագիւ՝ տանէի ամենայն ի հարկէ (Փարպ., 201):

13 Հարադրության արմատական բաղադրիչն է *խառն* ածականը, որ համարվում է խեթական փոխառություն harna «շարժել, խառնել, խռովել, գրգռել» բառից (Ջահուկյան, 2010, էջ 318):

լինի (Փարպ., 177):

Դէմ ընդ դէմ հարադրությունը կազմված է կրկնվող *դէմ* արմատից՝ *ընդ* նախդրով: *Դէմ* արմատը¹⁴ բազմիմաստ բառ է (հաճախ՝ անեզական գործածությամբ). «դէմք, երես, երեսակողմ, անձ, աչք, տեսողություն. դեպի (նխդր.)»: Հարադրության կազմում արտահայտում է տեղի իմաստ՝ «իրար դէմ՝ դիմաց՝ հանդեպ. երես առ երես», այդ իմաստով այն գործածվում է Աստվածաշնչում, հմմտ. Ելանիցէք մերկք՝ միմեանց *դէմ ընդ դէմ*, և անկանիցիք ի լերինն Ռեմանայ (Ամովս. Դ. 3): ,

Հանդիպում է Բուզանդի և Եղիշեի երկերում: Արք և կանայք զպղծութեամբ ճիւղադութեամբ պարուք *դէմ ընդ դէմ* հարկանելով... զմեռեալսն յուղարկէին (Բուզ., 193): Ընդ որս և դուք էք այսօր կրկին երևեալ... պատենազէն գրահիւք *դէմ ընդդէմ* ընկերակից սատանայական գործոյն (Եղ., 112): Կային ձակատեալք երկոքեան կողմանքն *դէմ ընդդէմ* միմեանց (Փարպ., 134):

Լու ի լու նախդրավոր բարդությունը կազմված է *լսեմ* բայի երկրորդ հիմքի կրկնությամբ՝ *լու*¹⁵ : *Լու* հիմքը բառակազմական հիմնական ձևույթ է որոշ բառերում, ինչպես՝ *հլու* («լավ լսող, խոնարհ»), *լուր* (ը աճականով), *լուն* (ը աճականով) և այլն:

Լու ի լու կրկնավոր բարդությունն ունի «լսելով, լսելի լինելով» մակբայական նշանակություն. այդ իմաստով հաճախադեպ գործածություն ունի Ատվածաշնչում, հմմտ. Պատասխանի ետ Եփրոն Քետացի Աբրահամու և ասէ *լու ի լու* որդւոցն Քետայ և ամենեցուն, որ մտանէին ընդ դուռն քաղաքին նորա (Ծնն., ԻԳ. 10): Լուարոնք, լուարոնք բանից իմոց, զի պատմեցից ձեզ *լու ի լու* (Յովբ., ԺԳ., 17):

Հանդիպում միայն Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկում. *Լու ի լու* այլոցն զինչպէտս խօսին (Փարպ., Թ., 201)¹⁶:

Այսպիսին են վերլուծական արմատակրկնության դրսևորումները հինգերորդ դարում, որ հանդիպում են Ատվածաշնչի թարգմանական գրքերում և ինքնուրույն մատենագրական երկերում:

Ստորև ներկայացնում ենք համադրական կրկնավորների գործածության վիճակագրությունն ըստ Ատվածաշնչի և հինգերորդ դարի պատմիչների երկերի:

	Կրկնավորներ	Ս. Գիրք	Խոր.	Ագաթ.	Եղ.	Փարպ.	Բուզ.	Եզն.	Կոր.
1.	արագ արագ	+	—	+	—	—	+	—	—
2.	գունդ գունդ	+	+	+	+	—	+	+	—
3.	դաս դաս	+	—	+	—	—	—	—	+ —

14 *Դէմ* արմատը ստուգաբանորեն հանգում է պարսկական աղբյուրին՝ dēm «կերպարանք, ձև» իմաստով (Ջահուկյան, 2010, էջ 660):

15 *Լսեմ* բայն ստուգաբանորեն հանգում է բնիկ հնդեվրոպական *kʷeu արմատին՝ նույն նշանակությամբ (Աճառյան, 1973, էջ 306–307; Ջահուկյան, 2010, էջ 30):

16 Ագաթանգեղոսի և Եզնիկի երկերում գործածված է *գունդ առ գունդ* նախդրավոր կազմությունը («խումբ–խումբ, խմբերով»), որ Աստվածաշնչում չի հանդիպում: Հմմտ. *Գունդ առ գունդ* ձակատել ոչ առնուին յանձն (Ագաթ., 26): Մի *գունդս առ գունդս* կազմեցեն՝ հանելոյ զհէնն յաշխարհէ (Եզն., 162):

4.	դէմ ընդ դէմ	+	—	—	+	+	+	—	— —
5.	երկու երկու	+	—	—	+	—	—	—	— —
6.	ևթն ևթն	+	—	—	—	—	—	—	— —
7.	լու ի լու	+	—	—	—	+	—	—	— —
8.	խառն ի խառն	+	+	+	+	+	—	—	— —
9.	մանր մանր	+	—	—	—	—	—	+	— —
10.	յոյժ յոյժ	+	—	—	—	—	+	—	— —
11.	շեղջ շեղջ	+	—	+	—	—	+	—	— —
12.	օր ըստ օրէ	+	—	+	—	+	+	—	—
		12	2	6	4	4	6	2	1

Այսպիսով, վերլուծական կրկնավոր բարդությունները Աստվածաշունչ մատյանի թարգմանական գրքերում կազմում են 12 բառ-միավոր, իսկ հին-գերորդ դարի յոթ հեղինակների գործերում հանդիպում է ընդամենը 25 միավոր-գործածություն:

Եզրակացություն

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը և նրանց վերլուծությունը, կրկնավոր բարդությունների վերլուծական տիպը որոշակի գործածություն ունի հինգերորդ դարի ինչպես թարգմանական գրականության, այնպես էլ ինքնուրույն մատենագրության լեզու: Վերլուծական կրկնավորները դասակարգվում են ըստ կրկնվող պարզ բաղադրիչների խոսքիմասային արժեքների (գոյական, ածական, թվական, մակբայ) և ըստ կապակցող նախդիրների (ի, ըստ, ընդ):

Կատարված վիճակագրությունը վկայում է առ այն, որ Աստվածաշունչ մատյանը պատկանում է առավել բարձր ոճի դասին. վերլուծական կրկնավորների տոկոսային առավելությունը պայմանավորված է Աստվածաշունչի թարգմանիչների լեզվամտածողության բարձր մակարդակով և օբյեկտիվ իրականության հասկացությունների լեզվական կաղապարավորման լայն հնարավորություններով:

Արմատակրկնության վերլուծական տիպի ուսումնասիրությունը հայերենի պատմական բառագիտության և պատմական բառակազմության առանցքային հարցերից է:

Օգտագործված գրականության ցանկ

- Աբեղյան, Մ. (1968) *Երկեր*, հ. Գ, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ., Երևան:
- Աճառյան, Հ. (1957) *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների*, հ. 3, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան:
- Աղայան, Է. (1984) *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, ԵՊՀ հրատ., Երևան:
- Առաքելյան, Վ. (1984) *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան:
- Աստվածաշունչ մայրենի հին և նոր կրակարանաց.*(1997), Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Մեծ Բրիտանիա:
- Բագրատունի, Ա. (1852) *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց*, Սուրբ Ղազար, Վենետիկ:
- Խաչատրյան Լ. (2023) Լիակատար արմատակրկնությունը հինգերորդ դարի հայերենում որպես բարձր ոճի դրսևորում, ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, Հ. I (26), էջեր 192-202:
- Մկրտչյան, Է., Խաչատրյան, Լ. (2016) *Հայոց լեզվի պատմության դասընթաց. գրային ժամանակաշրջան*, «Ջանգալ» հրատ., Երևան:
- Պետրոսյան, Հ.(1987) *Հայերենագիտական բառարան*, «Հայաստան» հրատ., Երևան:
- Ջահուկյան, Գ. (1989) *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատ., Երևան:
- Стариченок, В. (2008). *Большой лингвистический словарь*, издат «Феникс», Ростов-на-Дону.
- Туманян, Э. (1972). *Древнеармянский язык*, издать.”Наука”, Москва.

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

(համառոտագրություններով)

ա) Հինհայերենյան բնագրեր

- Ագաթ. – Ագաթանգեղայ *Պատմութիւն Հայոց*, Տփլիս, 1909:
- Բուգ. – Փաւստոսի Բիւզանդացւոյ *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1913:
- Եզն. – Եզնկայ Կողբացւոյ *Եղծ աղանդոց*, Վենետիկ, 1826:
- Եղ. – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957:
- Խոր. – Մովսիսի Խորենացւոյ *Պատմութիւն Հայոց*, Տփլիս, 1913, տպարանի Ի.Ն. Սկորոխոդովի, 1887:
- Փարպ. – Ղազարայ Փարպեցւոյ *Պատմութիւն Հայոց և Թուրթ առ Վահան Մամիկոնեան*, Տփլիս, 1904:
- Կոր. – Կորին *Վարք Մաշտոցի*, Գր., 1972:

բ) Աստվածաշնչի համառոտագրություններ

- Ամովս – Ամովս
- Բ. Օրենք – Երկրորդումն Օրինաց
- Եզեկ. – Մարգարէութիւն Եզեկիելի
- Եսայ. – Մարգարէութիւն Եսայեայ

Թագ.- Գիրք Թագաւորութեանց Բ, Դ
 Թիւք – Թիւք
 Իմաստ.- Իմաստութիւն Սողոմոնի
 Ծննդ.- Գիրք Ծննդոց
 Դուկ.- Աւետարան ըստ Դուկասու
 Մարկ.- Աւետարան ըստ Մարկոսի
 Մնա. Ա. Բ.- Գիրք Մնացորդաց Ա, Բ
 Յովք – Գիրք Յովքայ

դ) Բառարաններ

Աճառյան, Հր. (1971–1979). *Հայերէն արմարական բառարան* (ՀԱԲ), հհ. Ա–Դ, Երևան:
Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (ԱԲ) (1865) Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ,
 Ի Սուրբ Ղազար:
Համարարբառ հին և նոր կրակարանաց (1895), աշխատասիրութիւն Թադէոս
 վարդապետի Աստուածատուրեան Արապկերցոյ, ի տպարանի Առաքելական
 աթոռոյ Սրբոց Յակովբեանց, Երուսաղէ:
Նոր բառգիրք հայկազնեան լեզուի (ՆՀԲ) (1837), Երկասիրութիւն երից վարդապետաց,
 Գ.Աւետիքեան, Խ.Սիրմէլեան, Մ.Աւգերեան, հհ. Ա–Բ, ի Վենետիկ, ի տպարանի
 Սրբոյն Ղազարու:
 Զահուկյան, Գ. (2010) *Հայերեն ստուգաբանական բառարան*, Երևան:

References

- Abeghyan M.(1968) *Works* [Yerker]. v. 3, „Haykakan SSH GA” hratarakchutyun, Yerevan.
 (In. Arm.)
- Acharyan, H. (1957) *Liakatar k'erakanut'yun hayots' lezvi' hamematut'yamb 562 lezuner.*
 [Complete grammar of the Armenian language compared to 562 languages], h. 3,
 HSSRR GA hrat., Yerevan. (In. Arm.)
- Aghayan, E. (1984) *Yndhanur yev haykakan barragitut'yun.* [General and Armenian voca-
 bulary]. EPH hratarakchutyun, Yerevan. (In. Arm.)
- Arakelyan, V. (1984) *Hingerord dari hay t'argmanakan grakanut'yan lezun yev voych* [The
 language and style of Armenian translated literature of the fifth century]. HSSH
 GA hrat., Yerevan. In. Arm.)
- Astuatsashunch matean hin yev nor ktakaranats.* (1997). [The Bible contains the Old and
 New Testaments]. “The Bible Society of Armenia” publ., Great Britain.. (In Arm.)
- Bagratuni, A. (1852). *Hayeren kerakanutiun i pets zargats elots'* [Armenian grammar accor-
 ding to developments]. “ St. Lazar” hratarakchutyun, Venetik. (In. Arm.)
- Khachatryan, L. (2023) *Liakatar armatakrknut'yuny hingerord dari hayerenum vorpes bar-
 dzr vochi drsevorum.* [Absolute reduplication in the fifth century in Armenian as
 a manifestation of high style]. GAA SHHH Kentroni «*Gitakan ashkhatut'yunner*»,
 Gyumri. V. I(26)., ejer 192–202. (In. Arm.)
- Mkrtychyan, E., Khachatryan, L. (2016) *Hayots' lezvi patmut'yan dasynt'ats'.* *Grayin zha-
 manakashrjan.* [History of the Armenian language course. Literary period]. “Zangak”
 hratarakchutyun, Yerevan. (In. Arm.)

- Petrosyan, H. (1987). *Hayerenagitakan barraran* [Armenology Dictionary]. «Hayastan» hratarakchutyun, Yerevan. (In. Arm.)
- Jahukyan, G. (1989) *Zhamanakakits' hayots' lezvi imastabanut'yun ev barakazmut'yun*. [The semantics and word formation of Modern Armenian]. „Haykakan SSH GA” hratarakchutyun, Yerevan. (In. Arm.)
- Starichenok, V. (2008). *Bolshoy lingvisticheskiy slovar* [The Large Linguistic Dictionary], „Phoenix” publ., Rostov-on-Don. (In. Russ.)
- Tumanyan, E. (1972). *Drevnearmyanskiy yazyk* [Ancient Armenian language]. „Nauka” publ., Moscow. (In. Russ.)

Sources of original examples

(with summaries)

a) Ancient Armenian originals

- Agat'. – Agat'angeghay *Patmut'iwn Hayots'* [History of Armenians], Tp'khis, 1909.
- Buz. – P'awstosi Biwandats'woy *Patmut'iwn Hayots'* [History of Armenians], T'iflis, 1913.
- Yezn. – Yeznkay Koghbat'swoy *Yeghts aghandots'* [The Yeghts sect], Venetik, 1826.
- Yegh. – Yeghishei *Vasn Vardanay yev Hayots' paterazmin* [Vasn Vardanai and the Armenian War], Ye., 1957.
- Khor. – Movsisi Khorenats'woy *Patmut'iwn Hayots'* [History of Armenians], Tp'khis, 1913, tparani I.N. Skorokhodovi, 1887.
- P'arp. – Ghazaray P'arpet'swoy *Patmut'iwn Hayots' yev T'ught' arr Vahan Mamikonean* [History of Armenians and Paper on Shield Mamikonian], Tp'khis, 1904.
- Kor. – Koriwn *Vark' Mashtots'I* [Behavior of Mashtots], Gr., 1972.

b) Bible summaries

- Amovs – Amovs [Amos]
- B. Orenk' – Yerkrordumn Orinats' [Deuteronomy]
- Yezek.– Margareut'iwn Yezekiyeli [Ezekiel]
- Yesay.– Margareut'iwn Yesayeay [Isaiah]
- T'ag.– Girk' T'agaworut'eants' B, D [Kings]
- T'iwk' – T'iwk' [NumbersChronicles]
- Imast.– Imastut'iwn Soghomoni [Song of Solomon]
- Tsnn.– Girk' Tsnndots' [Genesis]
- Ghuk.– Awyetaran yst Ghukasu [Luke]
- Mark.– Awyetaran yst Markosi [Mark]
- Mna. A. B.– Girk' Mnats'vordats' A, B [Chronicles]
- Yovb – Girk' Yobay [Job]

c) Dictionaries

- Acharryan, Hr. (1971–1979). *Hayeren armatakan barraran (HAB)* [Armenian Radical Dictionary], hh. A–D, Yerevan:
- Arrdzern barraran haykaznean lezui (AB)* [Hand dictionary of Haykaznian language] (1865)

- Yerkroord tpagrut'iwn, Venetik, I Surb Ghazar.
Hamabarbarr hin yev nor ktakaranats' [Verbatim Old and New Testaments] (1895), ashkhatakirut'iwn T'adeos vardapeti Astuatsaturean Arapkerts'woy, i tparani Arrak'elakan at'vorroy Srbot's Yakovbeants', Yerusaghe:
Nor barrgirk' haykazeen lezui (NHB) [A new dictionary of the Haikazian language] (1837), Yerkasirut'iwn yerits' vardapetats', G.Awyetik'ean, KH.Siwrmelean, M.Awgerean, hh. A-B, i Venetik, i tparani Srboyn Ghazaru.
Jahukyan, G. (2010) *Hayeren stugabanakan barraran* [Armenian etymological dictionary], Yerevan.

Лалик Хачатрян

*Заведующий лабораторией лингвистических исследований
Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна,
доктор филологических наук, профессор
Эл. адрес: lingualal51@mail.ru*

АНАЛИТИЧЕСКАЯ КОРНЕВАЯ РЕДУПЛИКАЦИЯ В ЯЗЫКЕ АРМЯНСКОЙ БИБЛИОГРАФИИ V ВЕКА

Редупликации, созданные по закономерностям повторения, сформировались по аналитическим и синтетическим моделям словообразования, которые являются неотъемлемой частью лексики древнеармянского языка. Такие сложные слова широко использовались в переводных книгах Библии и с определенной периодичностью употреблялись и в библиографических памятниках V века.

В статье проводятся параллели между Библией и трудами историков пятого века, чтобы выявить функциональную частоту повторяющихся осложнений.

